10589

3KCM 5
4-68

Ս29.154.355
Կ-74հ

ԿՈՍՅԵՐԻ ՀԱԻՈՒԹՅԱՆ ՈՒՑՄԱԿԱՆ ԳՐԱԿԱՆԸ

Հ.Ս.Ն.Հ.
ՊԵՏ-ՀՐԱՏ

1928

428

1 DEC 2009
24 SEP 2006

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ЗКСМ5
4-68

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հոդվածների ժողովածու՝ կազմված մասնակցությամբ
Ս. Ս. ԿԱՄԵՆԵՎԻ, Ռ. ՄՈՒԿԼԵՎԻՉԻ, Վ. ՊՈՒՏՆԱՑԻ, Ի. ԿԼՈՉԿՈՅԻ,
Ն. ԱՐՏԵՄԵՆԿՈՅԻ, Բ. ԿԱԼՊՈՒՍԻ, Ն. ՍՈՒՄՍԿՈՒ, Ս. ՖՐՈՒՄԻՆԻ

584

Խմբագրությամբ
Համլիկեմ Կենտկոմի Ռազմական Հանձնախմբի

[redacted]

Թարգմ. Հ. ԱԼԵՔՅԱՆ

10314

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ.—ՅԵՐԵՎԱՆ. 1928

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

22 MAY 2013

10589

54116-66

№ 666 Գրառեպվար № 464 (բ) Տիրաժ 3000

Գետհրատի առաջին տպարան Վաղարշապատում

«Դու շուտով կմեծանաս։ Քեզ հրացան կտան։ Առ հրացանն ու լավ սովորիր ռազմական գործը։ Այդ գիտությունն անհրաժեշտ է պրոլետարիատի համար — ոչ թե քո յեղբայրների, մյուս յերկրների բանվորների վրա կրակ բանալու, ինչպես այդ անում են ներկայիս պատերազմում, և ինչպես քեզ խորհուրդ են տալիս անելու սոցիալիզմի դավաճանները,—այլ քո սեփական յերկրի բուրժուազիայի դեմ կռվելու համար՝ շահագործմանը, չքավորությանն ու պատերազմներին վերջ տալու համար. ոչ թե բարի ցանկություններով, այլ բուրժուազիայի վրա հաղթանակ տանելով և նրան զինաթափ անելով»։

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Հատոր XIII, եջ 452, «Զինաթափման լոզունգի մասին» հոդվածից։

ԱՌԱՋԱԲԱՆ

Ներկա ժողովածուն առաջին փորձն է, որն անհրաժեշտ է շարունակել և զարկ տալ ամենայեռանդուն կերպով։

Կոմսոմոլը մեր բանվորա-գյուղացիական յերիտասարդության առաջավոր ջոկատն է։ Յեվ այդ ամենակարևոր գործում, ինչպես այդ յերիտասարդության մեր պետության պաշտպանունակությունն ամրացնելու աշխատանքին մասնակցելն է, կոմսոմոլը պետք է ձեռնարկություններն իր վրա վերցնի, իր ամբողջ յեռանդով ու թափով։

ԽՍՀՄ միջազգային դրությունը պարտավորեցնում է մեզ բոլորիս մեծ ուշադրություն դարձնել ռազմական գործի, բանակի մարտական պատրաստության, նրա քաղաքականապես ամրացման հարցերի վրա, ապագա բանակի ոժանդակների պատրաստության հարցերի վրա։

Ապագա պատերազմը պահանջում է վոչ միայն ամբողջ ժողովրդական տնտեսության ծայրահեղ լարումը, այլև ապագա բանակի մասսաների քաղաքական-մարտական միաձուլության գործի կազմակերպվածությունն ու նրանց նվազագույն ռազմական գիտելիքների առկայությունը։ Այս գործում կոմյերիտմիությունը աչքի ընկնող դեր պետք է խաղա։

«Կոմյերիտմիության ռազմական աշխատանքը» ժողովածուի մեջ մատնանշված և առաջադրված են կոմյերիտմիության ռազմական աշխատանքի վերաբերյալ բոլոր կարևորագույն խնդիրները։ Այդ խնդիրները պետք է յուրացվեն գյուղի և քաղաքի կոմյերիտական մասսայի կողմից։ Կոմյերիտմիության միջոցով բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը պետք է մոտ կանգնած լինի ռազմական հերցերին, ռազմական գործին, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության պաշտպանունակության ամրացմանը։ Այս պետք է լինի և կլինի։ Դրան վորպես յերաշխիք—կոմյերիտմիության անցյալ մարտական փորձն է և նրա այժմվա աշխատանքը Կարմիր բանակում և նավատորմում։

28 մարտի, 1927 թ.

Ա. Բուբնով

Մ. Վ. ՖՐՈՒՆԶԵ

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ

(Ռազմական Ակադեմիայում կարդացած զեկուցումից)

I. ՌԱԶՄԱԿԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ՄԻ ՄԱՍՆ Է

Յերբոր մենք ուշադրությամբ դիտում ենք մեր Խորհրդային Միության և մյուս պետությունների դրությունը, մենք տեսնում ենք, թե ինչպես որ որի վրա քաղաքականության ասպարեզն ավելի ու ավելի սերտ կերպով միաձուլվում է ռազմական գործունեության ասպարիզի հետ։ Մեկը փոխարկվում է մյուսով։ Ստրատեգիան, այդ բառի նեղ-ռազմական մտքով, հանդիսանում է քաղաքական ստրատեգիայի մի մասը։

Պետություններից վոր մեկն էլ վերցնելու լինենք, բոլորի նկատմամբ էլ կարող ենք ասել, վոր այդտեղ քաղաքականությունը կամ ակնհայտնի ձևով անցնում է զինված կռվի ձևին, կամ անցել է այդ ձևին, և կամ այդ ձևին անցնելու վրա յե։ Խոսքս վերաբերում է պատերազմի մի տեսակին, այսինքն՝ քաղաքացիական պատերազմին։ Սակայն, ինչպես ցույց է տալիս և՛ մեր հեղափոխության փորձը, ինչպես վոր այդ թեորիապես էլ պարզ է, քաղաքացիական պատերազմը հեշտությամբ փոխարկվում է պետական պատերազմի։ Այդ պատճառով մենք՝ ռազմական ասպարիզում աշխատողներս, յերբ քննում ենք մեզ, վորպես ռազմական գործիչների, հետաքրքրող հարցերը, ստիպված ենք ամենից լուրջ և ամենից ուշադիր կերպով ուսումնասիրել բոլոր առհասարակ հեղափոխական-պրոլետարական շարժման վերաբերյալ հարցերը։

Մենք ստիպված ենք ուսումնասիրել բոլոր այն հարցերի համախմբումը, վորոնք հեղափոխական-պրոլետարական կռվի եյությունն են կազմում, և, հետևապես, վորպես այստեղից հանած յեզրակացություն—մենք պետք է թափանցենք ինչպես ներքին, նույնպես և միջազգային քաղաքական գործունեության ասպարեզը, վորովհետև այդտեղ, այդ ասպարիզումն է, վոր մենք պետք է գտնենք զուտ-ռազմական շատ հարցերի բանալին և այն միջոցները, վորոնք մեզ կոգնեն գլուխ հանելու մեր նեղ-մասնագիտական ռազմական գործունեությունից։

II. ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ՅԵՎ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐԱՅՆՈՒՄ Է ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ՅԵՎ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մեզ համար առհասարակ պրոլետարական շարժման ստրատեգիան և տակտիկան ամենամեծ հետաքրքրությունն է ներկայացնում, այն մեթոդները, այն յեղանակները, վորոնց ոգնությամբ բանվոր դասակարգն իր կռվի նախապատրաստական աշխատանքն է տանում, վճռական կերպով մտնում է այդ կռվի մեջ, գրավում է իշխանությունը և, վերջապես, իր հաղթանակից հետո պայքարում է իր դասակարգային տիրապետության համար։ Պրոլետարական կռվի ստրատեգիան և տակտիկան հենց այն է, վոր մենք, ամենայն իրավամբ, կարող ենք լենինիզմ անվանել։ Լենինիզմը իրագործումն ու զարգացումն է այն ուսմունքի, վորն ստեղծել են մարքսիզմի հիմնադիրները՝ Կարլ Մարքսն ու Ենգելսը։ Սակայն լենինիզմը, այդ մարքսիզմի թեորիայի յուրահատուկ կիրառումն է, այդ այն դրությունների սոսկ կրկնությունը չէ, վորոնք առաջ են քաշվել Կարլ Մարքսի և Ենգելսի կողմից. լենինիզմը այդ դրությունների հետագա զարգացումն ու հարստացումն է, իբրև դասակարգային կռվի թեորիայի։

Լենինիզմը բանվոր դասակարգի ստրատեգիան և տակտիկան է, նա բանվոր դասակարգի կռվի ղեկավարության ուսմունքն է. ուսմունք այն մասին, թե բանվոր դասակարգն ինչպես պետք է գործի, վորպեսզի ապահովի իր հաղթանակը։

Յեվ հենց իմ մատնանշած կապի համար, վորը գոյություն ունի ռազմական գործունեության և քաղաքական գործունեության ասպարեզների միջև, և վորը հատկապես աչքի յե ընկնում հեղափոխական պրոլետարիատի դիկտատուրայի մեր ապրած շրջանում—ահա այդ կապի համար կարևոր է հիմնավորապես, ամեն կողմից ծանոթանալ լենինիզմի եյության հետ—այդ պրոլետարական պայքարի «ստրատեգիայի» և «տակտիկայի» հետ։

III. ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ՅԵՎ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաքական գործունեության ասպարիզում մենք ունենք մեր ստրատեգիան և մեր տակտիկան։

Յեվ ինչպես քաղաքականության մեջ, այնպես ռազմական տակտիկան ռազմական ստրատեգիայի մի մասն է, սրան է յենթարկվում, սրան է սպասարկում, սրանով է վորոշվում։

Յես անհատապես կարծում եմ, վոր նա, ով փորձում է ռազմական արվեստի այս յերկու ասպարեզների միջև սահման քաշել, բաժանել անանցանելի գծով, նա սխալվում է։ Յես գտնում եմ, վոր ստրատեգիան և տակտիկան յերբեք չի կարելի մեկը մյուսին հակադրել։ Տակտիկան և ստրատեգիան մի կարգի յերևույթներ են, նրանց մեջ չկա վորակային տարբերություն, կա միայն քանակային տարբերություն։ Քաղաքական ստրատեգիան հիմնվում է մասսաների շարժման հիմնական մոմենտների հաշվառման վրա, պայքարող դասակարգային ուժերի հաշվառման վրա։ Քաղաքական ստրատեգիան ուսումնասիրում է այդ ուժերի փոխադարձ հարաբերությունը, ուսումնասիրում է նրանց տեսակարար կշիռը և բնույթը և, վերջապես, հաշվի առնելով ժամանակի ու տարածության մոմենտները՝ ընդգծում է քաղաքական պայքարի համապատասխան ստրատեգիական պլանը։

Լավ ստրատեգ լինելու համար, թե՛ զուտ քաղաքականության ասպարիզում և թե՛ ռազմական գործում, անհրաժեշտ է ունենալ յուրահատուկ հատկություններ։ Այդ հատկություններից ամենից կարևոր են այսպես կոչված մտահայեցությունը

(ինտուիցիա), ընդունակություն ունենալ գլուխ հանելու շրջապատող յերևույթներից, իրենց ամբողջ բարդությամբ, կանգ առնել ամենահիմնական յերևույթի վրա և, հիմնվելով դրա վրա, ընդգծել իր համար պայքարի ու աշխատանքի վորոշ պլան։

Ստրատեգիայի տեսակետից մեր հեղափոխական պայքարը մենք կարող ենք բաժանել յերեք շրջանի. մինչև 1917 թվի, մինչև Հոկտեմբերյան հեղափոխության շրջանը, յերբ մենք զբաղված եյինք հեղափոխական ուժերի կուտակումով, կազմակերպում եյինք ապագա պրոլետարական բանակը, պատրաստվում եյինք կռվի. յերկրորդ շրջանը,—այդ անմիջական պայքարի շրջանն է—հոկտեմբերյան ապստամբությունը և վերջին շրջանը—այդ դիկտատուրան բանվոր դասակարգի ձեռքում պահելու համար մղվող պայքարի շրջանն է։

Ռուսաստանի պրոլետարիատի հեղափոխական գործունեության այս յերեք շրջաններում եվ ընկ. Լենինի միտքը, վորպես ղեկավարի, վորպես ստրատեգի, ամեն քայլափոխում իրեն զգալ եր տալիս ամենացայտուն կերպով։

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՐԱՏԵԳԻԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՍՆԵԼՈՒ ՅԵՎ ՏԱԿՏԻԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՎՃՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Յես այժմ կանգ կառնեմ մեր հեղափոխության պատրաստման ժամանակի վրա։

Հաղթություն տանելու համար անհրաժեշտ է պատրաստել համապատասխան միջոցներ, պատրաստել այն բանակը, վորը պիտի գրոհի գնա իր դասակարգային թշնամու ամրոցի վրա։ Այստեղ առաջին խնդիրը, վոր դրվում է բանվոր դասակարգի՝ ապագա հաղթությունները կազմակերպողի առաջ, այդ հեղափոխական պրոլետարական բանակի համար կադրեր պատրաստելու խնդիրն է։

Ընկ. Լենինն իր գործունեության հենց առաջին քայլերից կարծում եր, վոր մենք պետք է յեփված-կոփված մարտիկներից բանակ պատրաստենք, այնպիսի բանակ, վորին ոտար է ամեն մի կասկած և յերկյուղ, այնպիսի բանակ, վորը կոփված լինի խստագույն և ամուր կարգապահությամբ։ Ահա

թե ինչու ընկ. Լենինն այնքան մեծ նշանակություն եր տալիս կազմակերպչական խնդրին։ Նրա կարծիքով, ով կազմակերպչական պրոբլեմներում սխալ է թույլ տալիս, առավոտյան է դարձնում մացած, թեկուզ ամենաճիշտ մտքերը, դրությունները ու հայացքները՝ քաղաքական գործունեության բոլոր մյուս ասպարեզներում։

V. ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ ՅԵՎ ՏԱԿՏԻԿԱՆ ՄԻՆՉԵՎ 1917 Թ. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Հեղափոխության լենինյան ստրատեգիան և տակտիկան այս շրջանում բղխում եր—ինչպես մենք մեր կուսակցական ժարգոնով արտահայտում ենք—«ընթացիկ մոմենտի» գնահատությունից, այսինքն՝ այն ժամանակվա պարագայի և նրա զարգացման հեռանկարների գնահատությունից։ Այդ գնահատությունն արվում եր վորոշ նպատակից յելնելով, վորը, իրեն հերթին, բղխում եր պրոլետարիատի դասակարգային կռվում ունեցած դերի ընդհանուր գնահատությունից։ Մոտավոր նպատակն եր ինքնակալության տապալումը և դեմոկրատական հանրապետության ստեղծումը։

Հաղթությունն ապահովող հիմնական ուժ հանդիսանում եր բանվոր դասակարգը. բանվոր դասակարգն իր յետևից պետք է տաներ գյուղացիությանը։ Ընկ. Լենինի այն ժամանակվա բանվորական կուսակցությանը տված դասակարգային անալիզի տեսակետից թշնամի յեր հանդիսանում ինքնակալությունը, վորը հենվում եր մանր-կալվածատիրական ազնվականության և փաստորեն ոժանդակություն եր ստանում լիբերալ բուրժուազիայի կողմից։ Պրոլետարական հեղափոխական կուսակցության տակտիկան, նրա կարծիքով, նրա գնահատումով, պետք է հնարավորություն չտար այդ լիբերալ բուրժուազիային, վոր փաստորեն ինքնակալության հենարանն եր, ուժեղացնել իր ազդեցությունը մանր-բուրժուական մասսաների վրա և մանավանդ գյուղացիության վրա։ Այս բանվոր դասակարգի պայքարի տակտիկան եր, պայքար գյուղացիության և մանր բուրժուազիայի վրա հեգեմոնիա ձեռք բերելու համար։

Դուք տեսնում եք, թե ինչպես այստեղ նշվում է տակտիկական գիծը։ Ընկեր Լենինը նկատի չէ ունենում յուրաքանչյուր դասակարգի եյությունը, դրսևորում է նրա ֆիզիոնոմիան ու բնույթը, վորոշում է, թե նա ուր կարող է գնալ, կարող է արդյոք պայքարել այս կամ այն նպատակի համար, և այս խիստ-դասակարգային հաշվառման հիման վրա կառուցում է պրոլետարական կուսակցության տակտիկան ու ստրատեգիան։

Հեղափոխական շարժման մեր այս ամբողջ շրջանի համար միանգամ ընդմիշտ տրված եյին ստրատեգիական գնահատությունն ու ստրատեգիական պլանը։ Իսկ ինչ վերաբերում է տակտիկական յեզրակացություններին, իհարկե, նրանք փոփոխվում եյին։ Տակտիկան, ինչպես յես ասացի, ստրատեգիայի մի մասն է, սրան յենթակա և սրանից կախված։ Տակտիկան գործ ունի վոչ թե մեծ ժամանակաշրջանները ընդգրկող դեպքերի հետ, այլ նա գործ ունի տվյալ կոնկրետ պատմական պարագայի փոփոխվող պայմանների հետ, և դրա համար տակտիկան կարող է, և պետք է յենթարկվի փոփոխությունների։ Ցեվ իսկապես, մենք տեսնում ենք, թե ինչպես այդ ամբողջ ժամանակաշրջանում պրոլետարական տակտիկան փոփոխվում եր, այնինչ հիմնական ստրատեգիական գիծը մնում եր անփոփոխ։

1905 թ. հունվարի 9-ին կատարվում է պրոլետարիատի տարերային մասսայական յելույթ։ Վոր եր այն ժամանակ մեր լենինյան կուսակցության տակտիկան։ Այդ բուռն գրոհի, ինքնակալության վրա հարձակվելու տակտիկան եր, մենք պատրաստում եյինք զինված ապստամբություն, այդ ապստամբության համար յերկիրը պատրաստելու լոզունգը հրապարակ հանեցինք։

1905—1906 թ. ընդհարումը վերջացավ ինքնակալության և դասակարգային այն խմբակների հաղթությամբ, վորոնք գնում եյին ինքնակալության յետևից։

Սրա հետևանքով հանգամանքները փոխվում են, սկսվում է դեպրեսսիայի (ճնշված դրություն) շրջան։ Փոխվում է և

պրոլետարական կուսակցության տակտիկան։ Բայլշևիկների պրոլետարական կուսակցությունը, պահպանելով իր ամբողջ հեղափոխական եյությունը, անցնում է պայքարի ուրիշ յեղանակների ու մեթոդների. փոխանակ I Պետական Դուման բոյկոտի յենթարկելու տակտիկային, փոխանակ զինված ապստամբության լոզունգի բացահայտ իրականացման տակտիկայի, ընկ. Լենինը կուսակցությանը հրավիրում է լծվելու հեղափոխական մասսաներին կազմակերպելու սիստեմատիկ աշխատանքին։

Այնուհետև մոտենում է իմպերիալիստական պատերազմի մոմենտը։ Ընկ. Լենինը, շնորհիվ իր հանճարեղ խորաթափանցության, միանգամից իրազեկ է լինում հիմնական սոցիալական ուժերի փոխադարձ հարաբերություններին, վրա հասնող շրջանի կատարելապես ճիշտ գնահատությունն է տալիս և դրա հիման վրա յել նշում համապատասխան տակտիկական գիծ։ Ցեվ մենք նորից տեսնում ենք, թե ինչպես արդարանում են նրա բոլոր նախատեսումները. մենք տեսնում ենք, վոր Ռուսաստանում փետրվարյան հեղափոխությունն է տեղի ունենում, տեսնում ենք, վոր, միանգամայն համապատասխան նրա նախատեսումներին, դասակարգային հակասությունները քանի գնում սրվում են և պատրաստվում է հոկտեմբերյան մեծ հաղթանակը։

VI. ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ՍՏՐԱՏԵԳԻԱՆ ՑԵՎ ՏԱԿՏԻԿԱՆ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ

Այստեղ ավելորդ չեմ համարում ընդգծել, վոր մեր կուսակցության շարքերում նույնպես՝ փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո, միանգամից չտրվեցին նոր գնահատումներ, չդրվեցին նոր խնդիրներ։

Առաջին որերում ընկ. Լենինը մեզ հետ չեր. նա արտասահմանում եր, և յերբոր նա հայտնվեց Պետրոգրադում, այն ժամանակ սկզբնական շրջանում բայլշևիկական ղեկավար շրջանների մեծամասնությունը միանգամից չկարողացավ ըմբռնել նրա գնահատությունը և այն յեզրակացությունները, վորոնք բղխում եյին այդ գնահատությունից։ Միանգամից չկարողա-

ցան ըմբռնել հին ստրատեգիական գծից դեպի նորը,—«դեմոկրատական հեղափոխության, պրոլետարիատի և գյուղացիության դեմոկրատական դիկտատուրայի» լոզունգից դեպի «բանվոր դասակարգի և ամենաաղքատ գյուղացիության դիկտատուրայի» լոզունգին անցնելը։ Այս բացատրվում է նրանով, որ ընկ. Լենինի բռնած դիրքը ցույց էր տալիս հիմնական շարժիչ ուժերի կարդինալ վերակողմնորոշումն ու վերագնահատումը և նոր ստրատեգիական գծի ընդգծումը։ Առաջվա նպատակը—ինքնակալության տապալումը—իրականացված էր, պրոլետարիատը վերակազմում է իր շարքերը պրոլետարիատի դիկտատուրայի համար կռվելու։ Փետրվարյան հեղափոխությունը, որ տվեց բանվորների, գյուղացիների և զինվորների Խորհուրդները՝ համաձայնականների, մենշևիկների և ես.երների կուսակցությունների գերակշռությամբ, փաստորեն դեմոկրատական հեղափոխության մեր հին լոզունգի իրագործումն էր։ Հեղափոխական պրոլետարական կուսակցությունը պետք է շարժվեր ավելի առաջ, որովհետև հիմնական խնդիրը ոչ թե ինքնակալությունը տապալելն էր, այլ բուրժուազիայի դասակարգային գերիշխանության վոչնչացումը։

Ինչումն էր արժեքների լենինյան այդ վերագնահատումը։ Նրանում, որ բացի պրոլետարական (բայլշևիկներ) կուսակցությունից, այլ հեղափոխական կուսակցություններ նոր սիտուացիայի մեջ չկային, որ փաստորեն մենշևիկներն ու ես.երները հանդիսանում էին բուրժուազիայի դեկտատուրայի հենարանը, և որ պրոլետարական քաղաքականության գիծը, պրոլետարական ստրատեգիայի գիծը պետք է գնար այդ կուսակցություններին գյուղացիությունից մեկուսացնելու ուղղությամբ։ Գյուղացիության համար, բայց արդեն վոչ թե ցարիզմի կամ խոշոր բուրժուազիայի դեմ, այլ մանր-բուրժուական կուսակցությունների՝ մենշևիկների և ես.երների դեմ մղված պայքարը սկսում է առաջնակարգ տեղ գրավել։ Այս ուղղությամբ էլ սկսեց ծավալվել բայլշևիկների կուսակցության գործունեությունը։ Հետագա դեպքերը փայլուն կերպով արդարացրին այդ գնահատությունը։ Այդ դեպքերի հետևանքն այն եղավ,

որ հոկտեմբերի սկզբին կոմունիստական կուսակցությունը վճռական ազդեցություն ձեռք բերեց բանվորների և զինվորների խորհուրդներում և արտակարգ կերպով ուժեղացրեց իր ազդեցությունը գյուղացիական մասսաների շրջանում, որով հոկտեմբերյան հաղթանակի հիմքն էր դրվում։

VII. ԸՆԿ. ԼԵՆԻՆԸ ՎՈՐՊԵՍ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՅԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՍՏՐԱՏԵԳ ՅԵՎ ՏԱԿՏԻԿ

Այժմ չափազանց հետաքրքիր է կանգ առնել ընկ. Լենինի մեր հեղափոխական պատմության այդ խոշորագույն դեպքի ժամանակ կատարած դերի վրա, վոչ թե վորպես ստրատեգի և տակտիկ-քաղաքագետի, այլ վորպես մարտական ոգեորատորի։

Այդ մոմենտին, ինչպես ձեզ հայտնի է, մեր շարքերում վորոշ տատանումն առաջ եկավ։ Միքանի ընկերներ կարծում էին, թե մենք չափազանց արագացնում ենք դեպքերի ընթացքը, թվում էր, որ ուժերի պատրաստության, կուսակցության և համախմբման շրջանը դեռ չի վերջացել։ Ցեվ ահա այստեղ հանդես է գալիս ընկ. Լենինը, որն առաջադրում է մի շարք հիմունքներ, որոնք, անկասկած, համոզում ու ապացուցում են անմիջապես զինված ապստամբության անհրաժեշտությունն ու անխուսափելիությունը։ Նա դասակարգային ուժերի փոխադարձ հարաբերությունների անալիզն է տալիս, չափում-կշռում է յուրաքանչյուր քաղաքական կուսակցության դերը, չափում-կշռում է նաև մեր կուսակցության տեսակարար կշիռը, դերն ու ազդեցությունը, հաշվի է առնում խորհուրդների դերն ու ուժը և այս խնամքով կատարած անալիզից այն յեզրակացությունն է անում, որ հարձակման ժամենան անպայման հասունացել է։

Վորպես հիմնական կետեր ընկ. Լենինի համար ծառայեցին Կ. Մարքսի՝ ապստամբությանը նվիրված հետևյալ ցուցումները. «Ապստամբությունն արվեստ է, ճիշտ այնպես, ինչպես և պատերազմն, ինչպես արվեստի մյուս տեսակները։ Նա յենթակա է վորոշ որենքների, որոնք յեթե մոռացու-

թյան տրվեն, կարող են դեպի կորուստ տանել այն կուսակցությունը, որ հանցավոր դուրս կգա այդ որենքները չպահպանելու համար։ Այդ կանոնները տրամաբանական հետևանք լինելով կուսակցությունների եյության, այն պայմանների եյության, որոնց հետ նման դեպքերում հարկ է լինում գործ ունենալ,—այնքան պարզ ու հասարակ են, որ 1848 թ. կարճատև փորձը գերմանացիներին բավականին ծանոթացրեց այդ կանոնների հետ։ Նախ և առաջ յերբեք չի կարելի ապստամբության հետ խաղալ, յեթե մինչև վերջը տանելու վճռականություն չկա (տառացի պետք է հաշվի առնել այդ խաղի բոլոր հետևանքները)։ Ապստամբությունը մի հավասարություն է վերին աստիճանի անորոշ մեծություններով, որոնց արժեքը կարող է փոփոխվել ամեն որ։ Մարտական ուժերը, որոնց դեմ պետք է գործել, այն առավելությունն ունեն, որ նրանք կազմակերպված են, կարգապահ են, տրադիցիոն հեղինակություն ունեն (Մարքսը նկատի ունի ապստամբության ամենից «դժվար» դեպքը— հին «ամուր» իշխանության դեմ, հեղափոխության և կառավարության տատանումների ազդեցությունից չքայքայված բանակի դեմ գործելը)։ Յեթե ապստամբները մեծ ուժեր չեն կարող հավաքել իրենց հակառակորդի դեմ, այն ժամանակ սրանց կշարդեն և կոչընչացնեն։ Յերկրորդ՝ յերբ արդեն ապստամբությունն սկսվել է, պետք է գործել մեծ վճռականությամբ և անցնել հարձակման։ Պաշտպանությունը մահ է նշանակում ամեն մի զինված ապստամբության համար. պաշտպանության ժամանակ ապստամբությունը կխորտակվի ավելի շուտ, քան մինչև նրա՝ թշնամու ուժերի հետ չափվելը։ Պետք է հակառակորդին հանկարծակի բերել, քանի դեռ նրա զորքերը բաժան-բաժան են յեղած. հարկավոր է ամեն որ ձեռք բերել նոր, թեկուզ փոքր, հաջողություններ. պետք է պահպանել բարոյական այն գերակշռությունը, որ ապստամբների առաջին հաջող շարժումը տվել է քեզ. հարկավոր է դեպի ինքը գրավել այն տատանվող տարրերին, որոնք մշտապես գնում են ավելի ուժեղի յետևից և միշտ անցնում են ավելի հուսալի կողմը. պիտի

թշնամուն հարկադրել յետ նահանջելու առաջ, քան նա իր զորքերը կհավաքի քո դեմ. մի խոսքով՝ պետք է գործել մինչև այժմ հայտնի հեղափոխական տակտիկայի խոշորագույն վարպետ՝ Դանտոնի խոսքերով. «համարձակություն, համարձակություն և դարձյալ համարձակություն» («Հեղափոխությունն ու հակահեղափոխությունը Գերմանիայում». գերմ. հրատ. 1907 թ., եջ 118, հատոր XIV, II մաս)։

Մարքսից այս ցիտատը մեջբերելով՝ ընկ. Լենինը նշում է ապստամբության հետևյալ նախադրյալները.

«Յեթե հեղափոխական կուսակցությունը հեղափոխական դասակարգերի առաջավոր ջոկատներում և յերկրի մեջ մեծամասնություն չունի, ապա խոսքել չի կարող լինել ապստամբության մասին։ Բացի դրանից, ապստամբության համար հարկավոր է. 1) հեղափոխության աճում ընդհանուր ազգային մասշտաբով. 2) հին, որինակ՝ «կոալիցիոն» կառավարության, բարոյական և քաղաքական լիակատար սնանկություն. 3) մեծ տատանումներ բոլոր միջին տարրերի բանակում, այսինքն՝ նրանց, որոնք ամբողջովին կառավարությանը կողմնակից չեն, թեև նրանք յերեկ կառավարությանը լիովին կողմնակից եյին» (հատ XIV, II մաս, եջ 255)։

Անհապաղ զինված ապստամբության անխուսափելիությունն ու անհրաժեշտությունը վորոշելով՝ ընկ. Լենինը այնուհետև ուրվագծում է այդ ապստամբությունն ի կատար ածելու տակտիկական պլանը։

Ահա միքանի քաղվածքներ նրա հոդվածներից, որոնք նվիրված են այդ թեմային։

Դեռևս 1906 թ. «Մոսկվայի ապստամբության դասերը» վերնագիրը կրող հոդվածում նա գրում եր.

«Դեկտեմբերը հաստատեց ելի խորը և ոպպորտյունիստների կողմից մոռացված Մարքսի մի դրություն, որ գրել է, թե ապստամբությունը արվեստ է, և որ այդ արվեստի գլխավոր կանոնն է—հանդուգն ու համարձակ անդադար-վճռական հարձակումը։ Մենք բավարար չափով չենք յուրացրել այս ճշմարտությունը։ Մենք բավարար չափով չենք սովորել և չենք

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՍՈՍԱՆԻԿՅԱՆԻ
Անվան
Ղազախստանի Էներգետիկայի

սովորեցրել մասսաներին այդ արվեստը, այս, թեկուզ ինչ գնով ուզում է լինի հարձակման որեկը։ Մենք ամբողջ յեռանդով պետք է այժմ յետ դարձնենք այն, ինչ մենք ձեռքներից բաց ենք թողել։ Քաղաքական լոզունգների վերաբերյալ համախմբումները բավական չեն, անհրաժեշտ է դեռ զինված ապստամբության վերաբերյալ համախմբում։ Ով հակառակ է սրան, ովքեր սրա համար չեն պատրաստվում—նրանց պետք է դուրս շպրտել անխնա հեղափոխության կողմնակիցների թվից, դուրս շպրտել հակառակորդների, դավաճանների և վախկոտների շարքը, քանի վոր մոտենում է այն որը, յերբ դեպքերի ուժը, յերբ կռվի պարագան կստիպի մեզ բաժանել թշնամիներին և բարեկամներին այդ հատկանիշով» (հատոր VII, 2-րդ մաս, եջ 51)։

Նույն հոդվածում շարունակում եր.

«Պետք է հիշել, վոր մոտենում է մասսայական մեծ պայքարը։ Այդ կլինի զինված ապստամբությունը։ Այդ ապստամբությունն ըստ հնարավորին միաժամանակ պիտի լինի, մասսաները պետք է իմանան, վոր նրանք գնում են դեպի զինված արյունալի, որհասական կռիվ։ Արհամարհանքը պետք է տարածվի մասսաների մեջ և պետք է ապահովի հաղթանակը։ Թշնամու վրա հարձակումը պետք է կատարել ամենայեռանդուն կերպով. մասսաների համար լոզունգ պետք է լինի հարձակումը և վոչ թե պաշտպանությունը. նրանց խնդիրը պետք է լինի թշնամու անողորմ բնաջնջումը, կռվի շարժումն ու ճկուն կազմակերպումը. զորքի տատանվող տարրերն ակտիվ կռվի մեջ կքաշվեն։ Գիտակից պրոլետարիատի կուսակցությունը պետք է կատարի իր պարտքը՝ այս մեծ պայքարում» (եջ 53)։

Ցեթե Ռուսաստանի և 1917 թվի Հոկտեմբերի նկատմամբ կիրառենք, այդ նշանակում է. միաժամանակ, վորքան հնարավոր է, ավելի արագ ու հանկարծակի հարձակում Պիտերի վրա, անպայման թե՛ ներսից և թե՛ դրսից, և՛ բանվորական կվարտալներից, և՛ Ֆինլանդիայից, և՛ Ռևելից, Կրոնշտադտից հարձակում ամբողջ տորպիդի, ուժերի դերազանց կուտակում՝ 15—20 հազարի (կարող է պատահել և ավելի) մեր «բուրժուական գվարդիայից» (յունկերներից), մեր վանդեական զորքերից (կազակների մի մասը) և այլն։

Համակցել մեր յերեք գլխավոր ուժերը՝ տորպիդը, բանվորական և զորական մասերն այնպես, վոր անպայման գրավեն և, թեկուզ ինչ կորուստների գնով ուզում է լինի, պահպանեն՝ ա) հեռախոսը, բ) հեռագիրը, գ) յերկաթուղագծի կայարանները, դ) կամուրջներն առաջին հերթին։

Առանձնացնել ամենավճռական ելեմենտներին (մեր «հարվածայիններին») և բանվոր յերիտասարդությունից, նմանապես և ամենալավ նավաստիներից կազմակերպել մանր ջոկատներ՝ գրավելու համար կարևորագույն պունկտերը և մասնակից դարձնել բոլոր կարևոր ոպերացիաներին. որինակ՝

շրջապատել և կտրել Պիտերի բոլոր ճանապարհները, գրավել նրան տորպիդի, բանվորների և զորքերի համակցական գրոհով—ահա այս է այն խնդիրը, վորն արվեստ է պահանջում և յեռակի համարձակություն։

Ամենալավ բանվորներից ջոկատներ կազմել հրացաններով և ռումբերով հարձակվելու և թշնամու «կենտրոնները» շրջապատելու համար (յունկերական դպրոցները, հեռագիրը, հեռախոսը և ուրիշները) հետևյալ լոզունգով. «Թող բոլորը կործանվեն, միայն թե մոտ չթողնել թշնամուն»։

VIII. ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ՍՏՐԱՏԵԳԻԱՅԻ ՅԵՎ ՏԱԿՏԻԿԱՅԻ ՀԱՆՁԱՐԵՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԻՑ ՀԵՏՈ

Մենք հաղթեցինք։ Վրա հասավ պրոլետարական դիկտատուրայի շրջանը։ Հանգամանքները նորից արմատապես փոփոխվեցին։ Կրկին պահանջ զգացվեց դրության ստրատեգիական վերագնահատում կատարել, չափել ու կշռել այն ուժերը, վորոնք մասնակցում են խաղի մեջ, ինչպես այն ուժերը, վորոնց վրա մենք հույս ունեցինք, նույնպես և այն ուժերը, վորոնք կարող եյին դուրս գալ մեր դեմ։ Այս վերագնահատումը տվեց ընկ. Լենինը և նշեց մի նոր շրջան մեր քաղաքական ստրատեգիայի համար. մի շրջան, վորով նոր նպատակ է գնում մեր առաջ։ Այդ նպատակն է՝ մեր հեղափոխության ծավալումը,

այդ ծավալման միջոցով մեր հաղթող յերկրում պրոլետարիատի դիկտատուրայի ամրացումը, նրա ծավալման միջոցով ծավալել և մյուս յերկրների մեջ։

Հիմնական ստրատեգիական պլանը, այդ մեր մեկուսացած հեղափոխությունը համաշխարհային հեղափոխության վերածելն է։ Այս հեղաշրջումը կատարող ուժ պետք է հանդիսանա մի կողմից մեր Խորհրդային պետությունն իր հաղթական բանվոր դասակարգով և պրոլետարական դիկտատուրայով, իսկ մյուս կողմից՝ այլ յերկրների պրոլետարիատը։

Ըստ եությունն այդ պլանը հարձակողական բնույթ ունի, սակայն մեր տակտիկան պետք է հաշվի առներ իրերի դրությունը, վորը յերբեք ել բարենպաստ չեր հարձակման համար։ Հարկավոր եր վոչ-պատերազմական դրությունն ոգտագործել ուժերի կուտակման համար, Խորհրդային հանրապետության ներքին հզորությունն ամրացնելու համար։ Սպասել մինչև հակառակորդի ուժասպառ լինելը, մինչև հեղափոխական շարժման զարգացումն ու սրումը, և այն ժամանակ արդեն մարտի դուրս գալ միջազգային կապիտալի դեմ։ Այս է մեր քաղաքական ստրատեգիայի նոր ֆազը, վորն սկսվել է Հոկտեմբերյան հաղթական հեղափոխությունից հետո։

IX. ԸՆԿ. ԼԵՆԻՆԻ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ ԴԻՍՑԻՊԼԻՆԱՅԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Այժմ յես կուզեի կանգ առնել ելի մի քանի ավելի քիչ նշանակություն ունեցող մոմենտների վրա, վորոնք, այնուամենայնիվ, կարևոր են մեր ռազմական շինարարության գործի համար։ Դուք գիտեք, վոր վերջին ժամանակներս մենք ստիպված ենք լինում առանձին ուշադրությամբ ընդգծել դիսցիպլինայի մոմենտները։ Այդ ընդգծումը բղխում է մանավանդ մեր միլիցիոն-յերկրային սիստեմին մասնակի անցումից։ Զորամասերում ներքին կապ ստեղծելն ու նրանց կարգապահ դարձնելը,—վորը նրանց մարտական դաստիարակության ամենագլխավոր ֆակտորն է հանդիսանում,—յերկրային զորամասերում մեծ դժվարությունների յե հանդիպում։ Այստեղ անհրաժեշտ է հրամատարական և քաղաքական կազմի մասնագիտական

պատրաստությունը, անհրաժեշտ է խորապես մտածված և կշռադատված մոտեցում շարքային մասսայի նկատմամբ։ Ցեվ այս տեսակետից ել ընկ. Լենինի հայացքներն ու մոտեցումը դիսցիպլինայի հարցերին պահպանում են բանակի համար իրենց սոմբողշական ակտուալ ուժն ու նշանակությունը։

Ի՞նչ մոտեցում ունեցավ ընկ. Լենինն այս հարցերի նկատմամբ։ Ինչպես դուք գիտեք, նա միշտ կողմնակից եր դիսցիպլինային, և դրա ամենափայլուն ապացույցը նրա ստեղծագործության՝ մեր բայլշևիկական կուսակցության ներքին կառուցվածքն է։ Բայլշևիկական կուսակցության մեջ դիսցիպլինան ավելի խիստ է, քան ռազմական դիսցիպլինան։ Այս մեծ մասամբ ընկ. Լենինի ազդեցությամբ ստեղծվեց։ Բայց ընկ. Լենինն ու մեր կուսակցությունը նրա հետ միասին այդ դիսցիպլինային հասան վոչ թե իրենց անդամներին խստագույն հրահանգներ արձակելով, վոչ թե հատուկ մարզանքով, այլ հենց դիսցիպլինայի հարցին ճիշտ մոտեցում ստեղծելով։ Ինչումն է այդ ճիշտ մոտեցումը։

Սրա պատասխանն ավելի լավ կտա ինքն ընկ. Լենինը։ Ցես հիմա մեջ կբերեմ նրա «Ձախության մանկական հիվանդությունը կոմունիզմի մեջ» բրոշյուրից մի կտոր, վորտեղ նա անհերքելի թեորետիկական պարզությամբ ու խորությամբ անալիզի յե յենթարկում դիսցիպլինայի հասկացողությունը։ Հարց տալով, թե պրոլետարիատի հեղափոխական կուսակցության մեջ դիսցիպլինան ինչով է պահվում, ինչումն է նա արտահայտվում և ինչով է նա ամրանում, նա պատասխանում է. «Առաջինը՝ պրոլետարական ավանգարդի գիտակցականությամբ և նրա՝ հեղափոխությանը նվիրվածությամբ, նրա տոկունությամբ, ինքնազոհությամբ, հերոսությամբ։ Ցերկրորդ՝ նրանով, վոր կարողանա կապվել, մտերմանալ, յեթե կուզեք, վորոշ աստիճանով միաձուլվել աշխատավոր լայն մասսայի հետ, առաջին հերթին պրոլետարական մասսայի հետ, նույնպես և վոչ-պրոլետարական աշխատավոր մասսայի հետ։ Ցերրորդ՝ այդ ավանգարդի քաղաքական ճիշտ ղեկավարությամբ, նրա քաղաքական ստրատեգիայի և տակտիկայի ճշտությամբ, այն պայ-

ժանով, վոր լայն ժասսաներն իրենց սեփական փորձով համոզվեն, վոր այդ իրոք ճշմարտություն է։ Առանց այս պայմանների հեղափոխական կուսակցության մեջ դիսցիպլինա գոյություն չի կարող ունենալ. մի կուսակցության, վորն իրոք ընդունակ է առաջավոր դասակարգի կուսակցությունը լինելու, վորը պետք է տապալի բուրժուազիային և վերափոխի ամբողջ հասարակությունը։ Առանց այս պայմանների դիսցիպլինա ստեղծելու փորձերն անխուսափելի կերպով դառնում են ժամավաճառություն, լոկ ֆրազներ, ծամածռություններ»։

Դիսցիպլինայի հասկացողության և նրա նախադրյալների այս անալիզն այստեղ կիրարկված է հեղափոխական կուսակցության նկատմամբ։ Սակայն դիսցիպլինայի հասկացողության նույն անալիզը լիովին և ամբողջությամբ կարելի է, և պետք է կիրառել և Կարմիր բանակի նկատմամբ։ Կարմիր բանակի հրամատարական և քաղաքական կազմին դիսցիպլինան Կարմիր բանակի շարքերում արմատացնելու համար անհրաժեշտ է միշտ հիշել ընկ. Լենինի կողմից բերած այն յերեք պայմանների մասին, վորոնք ամուր և գիտակից դիսցիպլինայի միակ գրավականն են հանդիսանում։

Առաջին պայմանը,—այդ հրամատարական և քաղաքական կազմի ինքնազոհությունն ու տոկունությունն է. յերկրորդ պայմանը,—այդ հրամատարական կազմի և կարմիր-բանակային ժասսայի միջև կենդանի, օրգանական կապի պահպանումը, և յերրորդը,—վոր այդ կարմիր-բանակային ժասսան տեսնի գործնականում, գործով մեր ղեկավարության ճշտությունը։ Միայն այս պայմանների ներկայությունը կստեղծի այն հողը, վորի վրա կաճեն բանակի մարտական դաստիարակության ցանկալի հետևանքները, և միայն այդ պայմանների ներկայությամբ մենք կստեղծենք ամուր, միաձույլ, գիտակից հեղափոխական դիսցիպլինայով զինված ուժ։

Միայն լենինյան այդ ուղիով ընթանալով մենք կունենանք իսկական, ամուր, յերկաթյա դիսցիպլինա՝ Կարմիր բանակի շարքերում։

Ասածս, իհարկե, չի բացառում միքանի ելեմենտների կիրառման անհրաժեշտությունը, այն միջոցի, վոր մեզանում

անվանում են մուշտրա։ Մեր զինվորական աշխատողներից միքանիսը լավ չեն ըմբռնում, թե ինչպես պետք է մարքսիստորեն ճիշտ մոտեցում ունենալ դիսցիպլինայի հարցերին վերաբերյալ. մեզանում հաճախ զինվորական արդվածքին (выправка), շարքի դիսցիպլինային, արտաքինին վերաբերվում են վորպես մի ինչ-վոր ֆետիշակար, անհեղափոխական և անհարկավոր բանի։ Այդ բացարձակ անմտություն է։ Ներքին գիտակից դիսցիպլինան պետք է անպայման արտահայտվի արտաքին կարգով։ Մենք պետք է ձեռք բերենք այդ կարգը, և այստեղ կատարելապես անխուսափելի յեն մուշտրայի միքանի ելեմենտները։ Շատերին այս խոսքը սարսափելի յե թվում, սակայն այդ վորոշ աստիճանի նախապաշարմունք է։ Այժմ հաճախ կարիք է լինում նշելու, վոր մեզանում շարքի անհրաժեշտ դիսցիպլինա չկա, այնինչ շարքի դիսցիպլինան պետք է իր տեղն ունենա։ Այդ դիսցիպլինան ամուր և լիովին արմատացնել կարելի յե միայն այն ժամանակ, յերբոր մենք գործին մոտենանք Լենինի նման։ Ցավ հարկավոր պեպքում մենք պարտավոր ենք համապատասխան ճնշումով ամրացնել այդ մոտեցումը։ Ահա այսպես եր ընկ. Լենինը մոտենում դիսցիպլինայի խնդիրներին։

Ի. ԿԼՈԶԿՈ

ԱՊԱԳԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Սրանից մոտ յերեք տարի առաջ լրացավ համաշխարհային իմպերիալիստական պատերազմի առաջին տասնամյակը, այնինչ նրա հասցրած թարմ վերքերը դեռևս չեն առողջացել ամբողջ աշխարհի բազմամիլիոն աշխատավորների մարմնի վրա։

Այդ պատերազմի տարածած սարսափը և նրա պատճառած տնտեսական ու սոցիալական ցնցումները, մասսաների աղքատանալու հետ միասին, այս բոլորը աշխատավորների գիտակցության մեջ այնպես է տպավորվել, որ նրանք դեպի պատերազմը միայն զզվանք են տածում և դեպի նրա հեղինակները՝ ատելություն։

Կապիտալիստներն իրենց անկուշտ ավազակային պատերազմի մեջ քաշեցին 34 պետություն 1,550,000,000 հոգի ազգաբնակությամբ, այդ ձեռնարկության վրա ծախսելով 403,824,383,000 ռուբլի վոսկով և անմիջական սպանդանոց—պատերազմի հանեցին ավելի քան 60 միլիոն մարտիկների։ Յեթե հաշվելու լինենք, որ անցյալ դարում ամբողջ յերկրագնդի վրա բոլոր պատերազմներում ծախսված է վոսկով 39,000,000,000 ռուբլի, ապա համաշխարհային պատերազմում միայն $4^1/_2$ տարում ծախսվել է տասն անգամ ավելի։

Այդ պատերազմում մարդկությունը կորցրեց 37,000,000 մարդ ամենաառողջ և ամենածաղկած հասակում, դարերով կուտակված ամբողջ հարստության $^1/_3$-ը։ Պետությունների աղքատությունն ու պարտքերն անասելի չափերի հասան. Գերմանիայի պարտքը՝ համեմատած նախապատերազմյան պարտքի հետ՝ ավելացավ 6 անգամ, Անգլիայինը՝ 10 անգամ, Ֆրանսիայինը՝ 8 անգամ, Իտալիայինը՝ 6 անգամ և այլն. արտադրողականությունն ընկավ. որինակ՝ հանքարդյունագործությունն ու չուգունի հալումը կրճատվեց—Գերմանիայում մինչև 42,1 տոկոսով, համեմատած նախապատերազմյանի հետ, Անգլիայում՝ մինչև 25,1%-ով, Միացյալ Նահանգներում՝ մինչև 53%-ով, Ֆրանսիայում՝ մինչև 56,8%-ով և այլն։ Պատերազմից հետո անգործների թիվը ավելացավ, հասավ մինչև 10 միլիոնի, իսկ ընտանիքների հետ միասին՝ մինչև 30 միլիոնի։ Միայն Ամերիկան և Ցապոնիան հարստացան այդ չտեսնված թալանի հաշվին։

Գազանացած գիշատիչները պատերազմի յեվրոպական դաշտերը քշեցին Աֆրիկայի, Ավստրալիայի, Հնդկաստանի միլիոնավոր գաղութային ստրուկներին, առանց տատանվելու սրի բերանը գցեցին իրենց «հայրենիքի» հպատակ բանվոր դասակարգին, թունավորելով նրանց գիտակցությունը «ազգային պաշտպանության» թույնով։

Պողպատի, արճճի ու յերկաթի անթագակիր վհհապետներն այս բոլորը թնդանոթների, արկերի, գնդացիրների ու սվիններով վերածելով՝ միլիոն տոններով կովի դաշտ հանեցին։ Ինժեներ և ուսուցիչ, քիմիկոս ու գրականագետ, նկարիչ ու վաստակաբան—բոլորն սկսեցին ծառայել այդ ընաջնջման ու թալանի գործին։ Գիտությունն ու տեխնիկան, լրագիրն ու գիրքը, ավետարանն ու մտրակը—բոլորը զորահավաքի ելին յենթարկված այդ նպատակի համար։

Կապիտալիզմի կատաղությունն, իրոք, հասավ իր գագաթնակետին։

Մասնակիցների աստղաբաշխական այս թվերը և խոշորագույն կորուստներն ու նյութական վնասները դարերով պետք է դաղված մնան իմպերիալիստ ավազակների ճակատի վրա։

Պետք է խրատ վերցնել այդ, մարդկային պատմության մեջ չտեսնված, դասից, քանի որ անցած պատերազմի այս արյունալի ցնորքի առաջ նսեմանում են ստրկության և ֆեոդալական տիրապետության խիստ ու դաժան ժամանակները։

Հարց է ծագում. մի՞թե մարդկությունը չեր կարող խուսափել այդ արյունի և ավերի սարսափներից, մի՞թե վոչվոք չնախատեսեց այդ կոշմարը, մի՞թե վոչվոք չփորձեց կանխել կուլտուրական ժողովուրդների այդ բարբարոսական կոտորածը և մի՞թե վոչվոք գլխի չընկավ, վոր իմպերիալիստների այդ պատերազմն անխուսափելիորեն կլինի։

Այս հարցերի պատասխանները հանդիսանում են ամենագործնական, ամենաեյական պատասխանները՝ մեր որերում, յերբ իմպերիալիստական պետությունները պատերազմի պատրաստություն են տեսնում մի՞քանի անգամ ավելի արագ թափով, քան այդ մինչև համաշխարհային պատերազմն եր։

Հասկանալի յե, պատերազմները հավիտենական չեն. հասկանալի յե, վոր ժամանակ կգա, յերբ առի՞թ չի լինի մարդկանց համար իրար հետ կռվելու, յերբ ամեն մի տարաձայնություն կվճռվի հասարակ քննությամբ, մեծամասնության պարզ վճռով, վորին բոլորը կհավատան և կենթարկվեն։ Այդ ժամանակը ցույց է տրված դիտական սոցիալիզմի մեծ ստեղծագործողների՝ Մարքսի և Ենգելսի կողմից և սոցիալիստական հեղափոխության խոշորագույն առաջնորդ ընկ. Լենինի կողմից։ Այդ ժամանակը վրա կհասնի այն դեպքում, յերբ աշխատավորների հաշվին ապրող ձրիակերները կանհետանան, յերբ կանհետանա սեփականությունը և պայքարը նրա համար, յերբ այլևս հարուստներ չեն լինի, մի խոսքով՝ յերբ հասարակության մեջ վոչնչացված կլինեն դասակարգերը, սեփականության իրավունքը և իրավունքն ուրիշի աշխատանքի վրա։ Միայն այսպիսի կոմունիստական, անդասակարգ հասարակության ժամանակ պատերազմ չի լինի, վորովհետև վոչ առի՞թ կլինի պատերազմելու և վոչ էլ հիմք, վորովհետև վոչվոք չի հետաքրքրվի իր անձնական վաստակով և վոչվոք չի կարող ապրել ուրիշի հաշվին։ Դասակարգերի, ազգային անջրպետների և պետական սահմանների անհետացումով կանհետանա և՛ պատերազմը։ Դատարկ հետաքրքրություն կլիներ, յեթե հարց տայինք, թե ախր յերբ, քանի՞ տարուց հետո կգա աշխատանքի ու խաղաղության այդ «թագավորությունը»։ Ավելի կարևոր և անչափ գործնական կլիներ մեզ համար այդ հարցին պատասխանել այսպես, թե բոլոր յերկրների աշխատավորներն ինչպիսի՞ ճանապարհներով, ինչ յեղանակներով պետք է հասնեն այդ նպատակին։ Լենինիզմը վաղուց արդեն թե թեորիապես և թե գործնականապես այդ հարցերին պատասխան է տվել։

Բայլշևիկներին (ինչպես և II Ինտերնացիոնալից դեռ այն ժամանակ բանվոր դասակարգին չդավաճանած մի՞քանի ազնիվ, իսկական սոցիալիստներին) հայտնի յեր դեռ մինչև համաշխարհային պատերազմը, վոր իմպերիալիստների միջև պատերազմն անխուսափելի յե, վոր վաղ թե ուշ շահագիտական կատաղի ծարավը ստրկատերերին դրդելու յե դեպի սարուկների և շուկաների նոր բաժանում—դեպի պատերազմ։ Դրա բոլոր նշաններն առկա եյին.—բանակներն ավելանում եյին, զինումն ուժեղանում ու լավանում եր, ռազմարդյունաբերական գործարաններն անդադար թնդանոթների, հրացանների և գնդացիրների պաշար եյին պատրաստում, տորմիզն աճում եր թե՛ վորակով և թե՛ քանակով, ազգաբնակությանը սովորեցնում եյին ռազմական գործը, պետությունների միջև պատերազմական դաշնագրեր եյին կնքվում և այլն, և այլն։

Հարկավոր եր մի փոքրիկ առի՞թ, վորպեսզի պատերազմը բռնկվեր, վորովհետև այնտեղ, վորտեղ արկեր ու թնդանոթներ են ձուլում և վառոդ են պատրաստում, բավական է մի կայծ, վոր այդ բոլորը բռնկվի և «ինքն սկսի կրակել»։

Իմպերիալիստներն անխուսափելիորեն պատերազմի մեջ են քաշում բանվոր դասակարգին ու առհասարակ աշխատավորներին. իմպերիալիստական սպանդանոցը և բանվոր դասակարգին ու աշխատավորներին սպառնացող վտանգը նախատեսելով՝ լենինիզմը շարունակ ցույց եր տալիս, վոր պատերազմի առաջն առնելու միակ միջոցը «իրենց» կապիտալիստական հայրենիքի պատշգանությունից հրաժարվելն է և իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի, այսինքն՝ հեղափոխության վերածելն է. ուրիշ խոսքով՝ կապիտալիստների այդ պատերազմից կարելի յե ազատվել միայն ճնշված

աշխատավորների՝ իրենց ճնշողների դեմ պատերազմ հայտարարելով։ «Չի կարելի իմպերիալիստական պատերազմից, այդ գժոխքից դուրս պրծնել առանց բայշևիկական պայքարի, առանց բայշևիկական հեղափոխության»— ասում էր ընկ. Լենինն այդ պատերազմի առթիվ։

Ինչպես տեսնում ենք, լենինիզմը սովորեցնում է, որ ամենից առաջ, նախքան կոմունիզմի իրականացումը, ճնշված դասակարգերն ստիպված պիտի լինեն հաղթահարելու, հաղթելու իրենց ճնշողներին, պետք է անխուսափելի կերպով անցնեն իմպերիալիստական պատերազմների և քաղաքացիական պատերազմի միջից։

«Իրենց», ռուս իմպերիալիստների կողմից համաշխարհային պատերազմի մեջ քաշված ռուս բանվոր դասակարգի և գյուղացիության կռիվն ու հաղթանակը, կռիվն այդ իմպերիալիստների դեմ և այդ պատերազմի վերածումը քաղաքացիական պատերազմի՝ կլասսիկ որինակ է առաջիկա պատերազմների համար, նախատիպն է մոտակա ժամանակի պատերազմների։

«Առաջին բայշևիկական հեղափոխությունն իմպերիալիստական պատերազմից, իմպերիալիստական աշխարհից ազատագրեց յերկրագնդի առաջին հարյուր միլիոն մարդկանց։ Հետևյալ հեղափոխությունները նման պատերազմներից և նման աշխարհից կազատագրեն ամբողջ մարդկությունը» (Լենին)։

Միանգամայն պարզ է, որ բանվոր դասակարգի և գյուղացիության՝ բուրժուազիայի դեմ կռվելու համար ամենից ձեռնտու ժամենտը, դա իմպերիալիստների իրար միջև ունեցած յուրաքանչյուր պատերազմն է. սակայն ամեն մի իմպերիալիստական պատերազմ իր մեջ թագցրած ունի և՛ շատ վտանգներ ճնշված դասակարգերի համար. կապիտալիզմը շարունակ, հենց որ հեղափոխական շարժում է սկսվում, աշխատում է ևր պատերազմը մեջ բերել, իր սեփական շահերի համար, իր կապիտալիստական հայրենիքի շահերի համար։ Այդպես եր Ֆրանս-պրուսական պատերազմը 1870—71 թ. թ., յերբ Նապոլեոն III-ը Պրուսսիայի դեմ պատերազմ սկսեց՝ վախենալով

Ֆրանսիայում հեղափոխություն ծագելուց. այսպես՝ պատերազմ սկսեց և՛ ռուսական ցարը Ցապոնիայի հետ, այսպես վարվեցին բոլոր իմպերիալիստները՝ սկսելով համաշխարհային պատերազմը։

Իհարկե, բանվոր դասակարգը, բուրժուազիայի կողմից կռվի դաշտ քշվելով, թուլանում է, արյունաքամ է լինում, խելքը կորցնում է ազգայնական թույնից, շովինիզմից։

Համաշխարհային պատերազմից սկսած, բուրժուազիայի այդ գործին շատ սիրահոժար կերպով ոգնում են II Ինտերնացիոնալի բանակից բոլոր սոցիալ-դավաճանները. II Ինտերնացիոնալն այդ ժամանակից սկսած բանվոր դասակարգի և հեղափոխության համար ավելի վտանգավոր թշնամի, դավաճանության, կեղծավորության և կեղծ բարեպաշտության սիմվոլը դարձավ. նա յեր ամբողջապես և նրա առաջնորդները մասնավորապես, որ ստորագրելով Վերսալյան խայտառակ խաղաղությունը, դավաճանեցին բանվոր դասակարգի շահերին և այժմ էլ լակեյական քաղցր քարոզներ են կարդում ընդհանուր խաղաղության և բարեկեցության մասին, բուրժուազիայի հեզության մասին, իշխանության առանց արգելքի բուրժուազիայից աշխատավորության ձեռքն անցնելու, իբրև թե, հնարավորության մասին։ Այնինչ այդ սոցիալ-դեմոկրատական բարեպաշտ քարոզների ու զառանցանքների տակ բուրժուազիան այժմ կատաղի կերպով պատերազմի պատրաստություն է տեսնում։

Սակայն համաշխարհային պատերազմի հեղինակ բուրժուազիայի կեղծավորությունն արդեն հնարավոր չէ ծածկել վոչ մի նոր հրեշավոր ստեր հնարելով։ Ցեթե յեղել են կարճամիտ մարդիկ, վորոնք հավատացել են բուրժուազիայի և II Ինտերնացիոնալից նրա յետևից քարշ յեկողների հեքիաթներին, այն մասին, թե բանակը, իբր թե, գոյություն ունի իր յերկրի պաշտպանության համար, այդ մարդիկ վաղուց են յեղել, դեռ մինչև պատերազմը։ Այդպիսի միամիտ մարդիկ այլևս չկան։ Այժմ յերեխաների համար էլ պարզ է, որ յեթե վորևե գիշատիչ-իմպերիալիստ բանակ է պահում, հնարում է զենք, արկեր ու

աշխատավորների՝ իրենց ճնշողների դեմ պատերազմ հայտարարելով։ «Չի կարելի իմպերիալիստական պատերազմից, այդ գժոխքից դուրս պրծնել առանց բայշևիկական պայքարի, առանց բայշևիկական հեղափոխության»— ասում էր ընկ. Լենինն այդ պատերազմի առթիվ։

Ինչպես տեսնում ենք, լենինիզմը սովորեցնում է, վոր ամենից առաջ, նախքան կոմունիզմի իրականացումը, ճնշված դասակարգերն ստիպված պիտի լինեն հաղթահարելու, հաղթելու իրենց ճնշողներին, պետք է անխուսափելի կերպով անցնեն իմպերիալիստական պատերազմների և քաղաքացիական պատերազմի միջից։

«Իրենց», ռուս իմպերիալիստների կողմից համաշխարհային պատերազմի մեջ քաշված ռուս բանվոր դասակարգի և գյուղացիության կռիվը ու հաղթանակը, կռիվը այդ իմպերիալիստների դեմ և այդ պատերազմի վերածումը քաղաքացիական պատերազմի՝ կլասսիկ որինակ է առաջիկա պատերազմների համար, նախատիպն է մոտակա ժամանակի պատերազմների։

«Առաջին բայշևիկական հեղափոխությունն իմպերիալիստական պատերազմից, իմպերիալիստական աշխարհից ազատագրեց յերկրագնդի առաջին հարյուր միլիոն մարդկանց։ Հետևյալ հեղափոխությունները նման պատերազմներից և նման աշխարհից կազատագրեն ամբողջ մարդկությունը» (Լենին)։

Միանգամայն պարզ է, վոր բանվոր դասակարգի և գյուղացիության՝ բուրժուազիայի դեմ կռվելու համար ամենից ձեռնտու ժամենտը, դա իմպերիալիստների իրար միջև ունեցած յուրաքանչյուր պատերազմն է. սակայն ամեն մի իմպերիալիստական պատերազմ իր մեջ թագցրած ունի և՛ շատ վտանգներ ճնշված դասակարգերի համար. կապիտալիզմը շարունակ, հենց վոր հեղափոխական շարժում է սկսվում, աշխատում է իր պատերազմը մեջ բերել, իր սեփական շահերի համար, իր կապիտալիստական հայրենիքի շահերի համար։ Այդպես եր Ֆրանս-պրուսական պատերազմը 1870—71 թ. թ., յերբ Նապոլեոն III-ը Պրուսիայի դեմ պատերազմ սկսեց՝ վախենալով

Ֆրանսիայում հեղափոխություն ծագելուց. այսպես՝ պատերազմ սկսեց և՛ ռուսական ցարը Ցապոնիայի հետ, այսպես վարվեցին բոլոր իմպերիալիստները՝ սկսելով համաշխարհային պատերազմը։

Իհարկե, բանվոր դասակարգը, բուրժուազիայի կողմից կռվի դաշտ քշվելով, թուլանում է, արյունաքամ է լինում, խելքը կորցնում է ազգայնական թույնից, շովինիզմից։

Համաշխարհային պատերազմից սկսած, բուրժուազիայի այդ գործին շատ սիրահոժար կերպով ոգնում են II Ինտերնացիոնալի բանակից բոլոր սոցիալ-դավաճանները. II Ինտերնացիոնալն այդ ժամանակից սկսած բանվոր դասակարգի և հեղափոխության համար ավելի վտանգավոր թշնամի, դավաճանության, կեղծավորության և կեղծ բարեպաշտության սիմվոլը դարձավ. նա յեր ամբողջապես և նրա առաջնորդները մանավորապես, վոր ստորագրելով Վերսալյան խայտառակ խաղաղությունը, դավաճանեցին բանվոր դասակարգի շահերին և այժմ էլ լակեյական քաղցր քարոզներ են կարդում ընդհանուր խաղաղության և բարեկեցության մասին, բուրժուազիայի հեզության մասին, իշխանության առանց արգելքի բուրժուազիայից աշխատավորության ձեռքն անցնելու, իբրև թե, հնարավորության մասին։ Այնինչ այդ սոցիալ-դեմոկրատական բարեպաշտ քարոզների ու զառանցանքների տակ բուրժուազիան այժմ կատաղի կերպով պատերազմի պատրաստություն է տեսնում։

Սակայն համաշխարհային պատերազմի հեղինակ բուրժուազիայի կեղծավորությունն արդեն հնարավոր չէ ծածկել վոչ մի նոր հրեշավոր ստեր հնարելով։ Ցեթե յեղել են կարճամիտ մարդիկ, վորոնք հավատացել են բուրժուազիայի և II Ինտերնացիոնալից նրա յետևից քարշ յեկողների հեքիաթներին, այն մասին, թե բանակը, իբր թե, գոյություն ունի իր յերկրի պաշտպանության համար, այդ մարդիկ վաղուց են յեղել, դեռ մինչև պատերազմը։ Այդպիսի միամիտ մարդիկ այլևս չկան։ Այժմ յերեխաների համար էլ պարզ է, վոր յեթե վորևե գիշատիչ-իմպերիալիստ բանակ է պահում, հնարում է զենք, արկեր ու

թնդանոթներ է պատրաստում, տորմիզ է կառուցում ու զինում,—այդ նշանակում է՝ գիշատիչ թալանչիական հարձակում է պատրաստվում, այդ նշանակում է՝ վաղ թե ուշ, այնուամենայնիվ, պատերազմ պետք է լինի։

Բուրժուական պետությունների պատերազմի այդ պատրաստությունները կարող է հաստատել ստորև բերած աղյուսակը 1926 թ. բանակների մարդկանց թվի մասին (հազարներով)։

ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Զինման տեսակները		Ընդամենը	ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Զինման տեսակները		Ընդամենը
	Կանոնավոր բանակ	Անկանոն բանակ			Կանոնավոր բանակ	Անկանոն բանակ	
Ֆրանսիա . .	685	—	685	Գերմանիա .	100	150	250
Անգլիա . .	154	342	496	Բելգիա . .	190	—	190
Բրիտ. Հնդկաստ.	150	—	150	Հունաստան .	150	—	150
Լեհաստան .	293	110	403	Իտալիա . .	250	—	250
Ռումինիա .	164	100	264	Սպանիա . .	216	28	244
Հարավ-Սլավ.	200	—	200	Յապոնիա . .	263	—	263
Չեխո-Սլովակ.	170	—	170	Միաց. Նահ. .	137	244	381
Տաճկաստան .	120	—	120	Չինաստան .	1100	—	1100
Շվեյցարիա .	105	29	134	Խ. Ս. Հ. Մ. .	563	—	563

Ցերբոր համեմատում ենք բանակների մարդկանց քանակը նախապատերազմյան քանակի հետ, մենք նկատում ենք, որ զինված ուժերն աճել են ավելի քան մեկ միլիոնով. իսկ յեթե նկատի առնենք այն, որ ԽՍՀՄ այժմ ունի համարյա մեկ միլիոն մարդ պակաս, քան ցարական բանակն ուներ, այն ժամանակ պարզ կլինի, որ բուրժուական պետությունները պատերազմից հետո իրենց բանակների մարդկանց թիվն ավելացրել են համարյա յերկու միլիոն մարդով՝ համեմատած նախապատերազմյան շրջանի հետ։ Սրա համեմատելի նշանավոր չափով աճել է և ծովային տորմիզը, ընդ որում այն ռազմանավերը, որոնք համաշխարհային պատերազմի ժամանակ համարվում եյին առաջին կարգի մարտական միավորներ, այսոր նրանք ճանաչվում են հնացած. նրանց կամ վերազինում են

կամ նորերով փոխարինում, ավելի հզորներով և ավելի արագընթաց ռազմանավերով։

Բանակների և տորմիզների շատացումի հետ միասին պատրաստվում են և կռվի նոր միջոցներ, որոնք համաշխարհային պատերազմի ժամանակ առաջ քաշվեցին և փորձվեցին. դրանք ավիացիան և քիմիական միջոցներն են։ Հաղթող յերկրներն իրենց զինված ուժի կազմի մեջ ունեն հազարավոր արագաթիռ, հզոր սավառնակներ, որոնք զինավորված են արագաձիգ գնդացիրներով և նույնիսկ թնդանոթներով։ Ավիո-արդյունագործությունն աճում է անսովոր արագությամբ. այսպես՝ Ֆրանսիան ունի 24 ավիացիոն գործարան, որոնք արդեն 1922 թ. արտադրել է 3,300 ռազմական սավառնակ, 1923 թ.՝ մինչև 5000 սավառնակ, և ել ավելի 1924 թ.։ Անգլիան ունի 13 ավիո-գործարան. Ամերիկայում գործում են 12 խոշոր գործարաններ և այլն։ Ոդային տորմիզն ու հիդրոտորմիզը զարգանում են կատաղի թափով։

Ավելորդ է խոսել այն մասին, որ քիմիական պատերազմի հեռանկարները, որպես ամենակործանիչ զենքի, իմպերիալիստական յերկրներին դրդում են քիմիական պատերազմի պատրաստություն տեսնելու։

Ռազմա-քիմիական արդյունագործությունը ծանր ինդուստրիայի հետ միասին այժմ ժողովրդական տնտեսության պատերազմի պատրաստության հիմքն են ծառայում։ Քիմիական գործարանները նախորոք այնպես են հարմարեցնում, որ հնարավոր լինի թեթև և արագ կերպով պատերազմի քիմիական միջոցների պատրաստությանն անցնել։ Քիմիկոս գիտնականներին և ինժեներներին, համարյա ամեն տեղ, ռազմական վարչությունների մեջ են քաշում՝ հետազոտություններ կատարելու, քիմիական պատերազմ վարելու ձևեր ու միջոցներ հնարելու համար։ Բոլոր բուրժուական յերկրների գիտական լաբորատորիաներն ու գիտնականներն այժմ հարյուր անգամ ավելի ինտենսիվ են աշխատում պատերազմի պատրաստության վրա, քան մինչև համաշխարհային պատերազմն եր։

Պետությունների սպառազինման վրա արած ծախսերը վոչ թե կրճատվում են, այլ ձգտում ունեն ամեն տարի ավե-

լանալու։ Այսպես՝ Անգլիան և Ֆրանսիան 1924 թ. միայն ռազմական տորժիզի համար բյուջեն ավելացրին նախորդ տարուց ավելի քան յերեք անգամ. Անգլիան ամեն տարի ռազմական նպատակների համար Հնդկաստանում ծախսում է Բրիտանական Հնդկաստանի ընդհանուր բյուջեյի համարյա 50%-ը (49,9%)։ Մանր պետությունները կաշուց դուրս են գալիս, վորպեսզի մարտունակ բանակ կազմակերպեն և այդպիսով հաճոյանան իրենց «խնամակալ»՝ խոշոր պետություններին. փոքրիկ, տրեխավոր, աղքատ Լիտվան ամեն տարի իր պետական ամբողջ յեկամուտի համարյա 1/4-ը (21,4%) ծախսում է պատերազմի պատրաստության համար, Լեհաստանը 1924 թ. իր պետական ամբողջ յեկամուտի 44,2%-ը ծախսեց պատերազմի պատրաստության համար։

Բացի դրանից, բոլոր պետությունները, այսպես թե այնպես, աջակցում են մասնավոր քաղաքացիական գործարաններին ու ֆաբրիկներին, վորպեսզի վերջիններս հնարեն ու արտադրեն ավելի լավ տիպի սավառնակներ, ավելի ավերող, սպանիչ ներգործություն անող դաղեր և այլն. կառավարություններն ամեն տարի խոշոր գումարներ են բաց թողնում մասնավոր զավոդներին, համալսարանական և գործարանական լաբորատորիաներին, գիտնականներին ու արդյունագործներին՝ պատերազմի համար բոլոր անհրաժեշտ միջոցները պատրաստելու համար, ռազմական պատվերների անվան տակ։

Այսքանն արդեն բավական է հասկանալու համար, վոր իմպերիալիստական պետությունները զինվում են, վոր ամբողջ աշխարհն սպառազինվում է մինչև «ժամերի ծայրը» այնպես, ինչպես վոչ մի ժամանակ։ II Ինտերնացիոնալի սոցիալ-դեմոկրատիան քայքայող պացիֆիստական հիմար քարոզների ազդեցության տակ, բանվոր դասակարգի դավաճանների աշխատավոր մասսաների գիտակցությունը մթագնող այդ օրորների տակ սպառազինվեց միջազգային բուրժուան, ինչպես իսկական ավազակ, գիտության, տեխնիկայի բոլոր կանոնների և համաշխարհային պատերազմի անցյալ փորձի համեմատ։ Յերբոր նա կսկսի իր ավազակային հարձակումը,

այն ժամանակ բոլորի համար պարզ կլինի, թե ինչ նշանակություն ունեն այդ պատրաստի միլիոնավոր սվինները, տասնյակհազարավոր մահաբեր սավառնակները, բազմամիլիոն քիմիական միջոցները, հազարավոր տանկերը և անթիվ ու անհամար հրացան-ավտոմատները, գնդացիրներն ու ծանր հրանոթները։

Այդ ավազակային հարձակումը, այդ համաշխարհային թալանչիությունը, վոր պատերազմ անունն է կրում, նույնքան անխուսափելի յե, ինչքան ցերեկին գիշերվա հաջորդելը. հարցը միայն ժամանակի մեջ է։

Ապա ինչ բնույթ կստանա ապագա պատերազմը։ Ի՞նչպիսի հեռանկարներ են առաջադրում ժամանակակից քաղաքական դրությունը, սպառազինված ուժերի ու պատերազմի տեխնիկական միջոցների դրությունը։

Առաջին և անկասկած բնորոշ հատկանիշը կլինի պարզորեն արտահայտված նրանց դասակարգային բնույթը։ Մինչև համաշխարհային պատերազմը, մանավանդ մինչև մեր քաղաքացիական պատերազմը, բուրժուազիայի դեկավար դասակարգերին հաջողվում եր իրենց գիշատիչ, հափշտակողական ձգտումներն ու շահերը թագցնել ազգային պաշտպանության, ազգային ինքնապաշտպանության քողի տակ։ Սակայն Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո և 1918—1920 թվականների Յեվրոպայի վրայով անցած հեղափոխական փոթորկից հետո ամեն մի բանվորի և գյուղացու համար պարզ է, վոր պատերազմը տեղի յե ունեցել բացառապես բանկիրների, նավթի, յերկաթի, ածուխի թագավորների և այլ ձրիակերների շահերի համար. նույնպես պարզ է, վոր 1918 թ. նոյեմբերի 9-ը Գերմանիայում և Հոկտեմբերը Ռուսաստանում վերջ դրին այդ ազգային շժոլքին (угар), այդ բոլորը բացատրելով բացառապես դասակարգային պայքարով։

Բուրժուական պետություններից վորն էլ վոր պատերազմ սկսի, բոլորի համար պարզ կլինի, վոր կռվում է վոչ թե ժողովուրդը իր շահերի, իր անկախության համար, այլ կռվում է գերացած բուրժույը իր գրպանի համար և իր պետության աշխատավոր մասսաների շահերի հաշվին։

Ապագայի այդ կռվում Խորհրդային Միությունը և մեր Կարմիր բանակն ու տորմիզը առանձնահատուկ դրություն կգրավեն։ Կոմունիստական շարժման աճումը բոլոր կապիտալիստական յերկրներում, մեր հզորության, մեր ուժի և մեր բանվորա-գյուղացիական պետության անկախության ուղղակի հետևանքն է։ Խորհրդային հանրապետությունն այն հսկա կղզին է, այն փարոսն է, որի շուրջն ամբողջ աշխարհում համախմբվում են՝ մի կողմից մարդկության ճնշված խավերի համակրանքն ու ոժանդակությունը, մյուս կողմից՝ ճնշողների, շահագործողների, կապիտալիստների ատելությունը։

Բոլոր մոտավոր և հեռավոր կապիտալիստ գիշատիչների սրբազան ցանկությունն է յեղել և կլինի՝ պատերազմ հրահրել մեր դեմ, իմպերիալիստների միացյալ ուժերով խեղդամահ անել ԽՍՀՄ, որը հզոր և միակ պատվարն է աշխարհում միջազգային բանվոր դասակարգի համար։ Այս, իհարկե, դեռևս չի նշանակում, թե կապիտալիստներն իրար միջև կռիվ չեն ունենա. բայց մենք բոլորս և մեր Կարմիր բանակը պետք է ավելի վատ որվա պատրաստ լինենք. այն է՝ յեթե վոչ կապիտալիստական յերկրների, ապա գոնե կապիտալիստական խոշորագույն յերկրների մեծ մասի մեր դեմ ուղղված հնարավոր դաշինքին։

Ահա թե ինչու մեզ համար, մեր ԽՍՀՄ-ի համար այլևս յերբեք ազգային պատերազմներ չեն լինի. Կարմիր բանակը վոչ մի դեպքում չի կռվի բոլոր ժողովրդի դեմ, թեկուզ ով ուզում է լինի՝ լեհ, անգլիացի, ռումին կամ ֆրանսիացի. Կարմիր բանակը—այդ աշխատավորների ձեռքի սուրն է. այդ սրի բերանը կարող է ուղղված լինել միմիայն աշխատավորների պաշտպանության կողմը, միայն նրա շահերի համար, կոմունիզմի գաղափարների համար, ընդդեմ տիրող բուրժուական դասակարգերի, ով ուզում է լինեն նրանք՝ լեհ, անգլիացի, ռումին կամ ֆրանսիացի։

Մեր Հանրապետության համար չկան և չեն կարող լինել ազգային պատերազմներ. յեթե իմպերիալիստները հարձակվեն մեզ վրա, Կարմիր բանակը կընդունի այդ կռիվը, իբրև

պատերազմ սկսող իմպերիալիստների իշխանությունից բանվորներին և գյուղացիներին ազատագրելու համար մղվող կռիվ։

ԽՍՀՄ համար այդ կռիվը կլինի «կյանքի և մահու կռիվ», այդ իսկապես կլինի «վերջին և վճռական մարտը» հանուն կոմունիզմի գաղափարների, հանուն մեծ առաջնորդ Լենինի գաղափարների։ Դասակարգային այդ կռիվն անհետևանք չի կարող անցնել, չի կարող «առանց հաղթվողների և հաղթողների» վերջանալ. կամ կապիտալիզմը կխորտակվի և իր հոգևարքի մեջ կփորձի շարունակել կռիվը՝ պատերազմը յերկարատև դարձնելով, մինչև վոր միջոցներն ու ուժերը կվատվեն, կամ Յեվրոպայի և մյուս աշխարհամասերի բանվոր դասակարգը վեր կկենա (և այդ անխուսափելի է), կծառանա իր սեփական ճնշողների դեմ՝ իմպերիալիստական պատերազմը քաղաքացիական պատերազմի փոխելով—այսինքն՝ հասարակական հեղափոխության վերածելով, կամ, վերջապես, ԽՍՀՄ իմպերիալիստների յերկաթե ողակի մեջ ընկնելով՝ գերմարդկային պայքար կսկսի ամբողջ կապիտալիստական աշխարհի հետ. բոլոր դեպքերում էլ այս պատերազմը, վորպես դասակարգային կռիվ, անխուսափելի կերպով վերածվելու է քաղաքացիական պատերազմի, այսինքն հեղափոխության։

Յեթե նույնիսկ, հակառակ բանվոր դասակարգի ձեռք բերած փորձին, կապիտալիստներին հաջողվի պատերազմի համար զորահավաք կատարել մեր դեմ իր յերկրի բանվորա-գյուղացիական մասսաներին, այնուամենայնիվ, վաղ թե ուշ, պատերազմը սովի, քայքայման, ատի, աղքատության և այլն հետևանքով, բանվոր դասակարգին նորից այն գիտակցությանը կբերի, վոր անհրաժեշտ է իր սեփական բուրժուազիայի դեմ կռվել, դասակարգային կռիվ սկսել։

Ժամանակակից եղոխան իմպերիալիստական պատերազմների արագորեն հեղափոխական պատերազմի վերածելու բոլոր հատկանիշներն ունի իր մեջ։ Յեվ հենց այդ պատերազմին պետք է պատրաստվենք։

Ապագա պատերազմների յերկրորդ հատկանիշը—բանակների մարդկանց հսկայական թիվն է։ Վորպեսզի ասածներս

դատարկ խոսքեր չլինեն, անցնենք թվական տվյալներին, վորոնք հատուկ կերպով խոսում են անցյալ պատերազմի մասնակից մասսայական բանակների մասին։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ	Մշտական բանակների ընդհանուր քանակությունը համ. պատերազմի նախորյակին	Ամբողջ պատերազմի ընթացքում զորահավաքի յենթարկված
Գերմանիա	650,000 մարդ	11,000,000 մարդ
Ավստրո-Հունգարիա . . .	450,000 »	9,000.000 »
Ֆրանսիա	884,000 » *	9,000,000 »
Անգլիա	280,000 »	8,700,000 » **
Ռուսաստան	1,500,000 »	17,500,000 »
Միացյալ Նահանգներ . . .	100,000 »	3,800,000 »
Ընդամենը .	3,864,000 մարդ	59,000,000 մարդ

Ցեղրակացությունն ինքնըստինքյան հասկանալի յե. պատերազմին մասնակցել է յուրաքանչյուր յերկրի ամբողջ ժողովուրդը։ Վոչ մի հիմք չկա հաստատելու, վոր ժոտակա պատերազմին ել կարիք չի լինի միլիոնավոր թվով մարդկանցից բաղկացած բանակների. ընդհակառակը՝ քանի վոր ամեն մի պատերազմ, շնորհիվ հատշխարհային տնտեսության շաղկապվածության, բոլոր պետությունների շահերին է կպչում, ուստի սակավ կարևորություն ունեցող փոքր պատերազմներ սկսվելը դժվար է յենթադրել, այդ պատճառով 100%-ով յերաշխիք կա, վոր ժոտակա պատերազմն ավելի խոշոր մասշտաբ կունենա, քան թե 1914—1918 թվերին եր։ Այս մեծ պատերազմի համար պահանջվում են և՛ խոշորագույն քանակով մարդկանցից բաղկացած բանակներ։ Վոչ մի պետություն, վոչ մի դասակարգ չի կարող խույս տալ, ձեռնպահ մնալ այդ հսկայական մարտական մրցությունից։ Պատերազմի պարտությանն մեջ յերկրի պասիվությունն այժմ ապացույց է նրա թուլության, և, հետևապես, նրան անխուսափելի կորուստ է սպառում, յեթե նրա վրա զինված հարձակում գործեն։

* Գաղութային զորքերի հետ միասին։
** Անգլիական տվյալներով. այլ տեղեկություններով 5,000,000 մարդ։

Ուստի Խ. Ս. Հ. Մ. համար ամենամեծ խնամքով ուլարված պաշտպանության, ամբողջ աշխատավոր ազգաբնակության պատերազմի համար պատրաստելու հարցը կյանքի և մահու հարց է։ Մեր սոցիալիստական հայրենիքի ամեն մի բանվոր և գյուղացի պետք է իմանա, վոր ներկա ժամանակում տիրապետել հրացանին, այդ նշանակում է լինել ազատ քաղաքացի, վոր ուրիշ վոչ մի միջոցով, բացի զինված կռվից, չի կարելի պահպանել հեղափոխության նվաճումները։

Սակայն ժամանակակից պատերազմը, ճակատ ուղարկելով միլիոնավոր մարտիկների, պահանջում է նրանց համար անդադար մատակարարել զենք, հագուստ, կերակուր և առհասարակ բանակի մարտական կյանքի համար բոլոր անհրաժեշտ բաները։ Մարտամթերքի և պարեն հայթայթելու այդ պահանջն այնքան մեծ է, վոր բոլոր անհրաժեշտ իրերը թիկունքում պատրաստելու և ճակատ տեղափոխելու համար պահանջվում է 5—6 անգամ ավելի մարդ, քան ճակատի համար մարտիկներ են հարկավոր։ Պատերազմի ժամանակ ամբողջ յերկիրն իրենից ներկայացնում է մի հսկայական գործարան, վորն անդուլ կերպով մշակում-պատրաստում է այն բոլորը, վորոնք անհրաժեշտ են ճակատի համար, գործող բանակի համար։ Թիկունքը վեր է ածվում մի հսկայական արդյունագործական բանակի. ամբողջ յերկիրն սկսում է աշխատել պատերազմի համար։

Յեթե թիկունքի արդյունագործական բանակի աշխատանքը վորևե բանով խանգարված է, այդ անխուսափելի կերպով անդրադառնում է և՛ ճակատի վրա. յեթե տատանվի թիկունքը, արկեր և կերակուր չտա, խախտվում ու թուլանում է և՛ ճակատը. իսկ դրանից հետո հո պարտությունը հեռու չե։ Առանց թիկունքում ժամացույցի մեխանիզմի նման գործող կարգավորված տնտեսության չի կարող աշխատել և՛ ճակատը։ Միասին վերցրած այդ հանդիսանում է ժամանակակից պատերազմի յերրորդ ամենակարևոր հատկանիշը։

Յեթե խաղաղ ժամանակ բանակ է պատրաստվում, և պետական ժողովրդական տնտեսությունն ու արդյունագործությունը չի պատրաստվում պատերազմի համար, — այդ նշա-

նակում է ամբողջ խնդրի $^1/_3$ մասը չլուծել։ Ահա թե ինչու բանակի պատրաստության հետ միասին, այսինքն՝ տոկուն մարտիկների և նվիրված ժամանակակից ռազմական արվեստը լավ իմացող հրամատարական մասսայի հետ միասին—անհրաժեշտ է, ճիշտ, նույնպես նախորոք պատրաստել և՛ ժողովրդական տնտեսությունը՝ հարմարեցնելով նրան պատերազմի պահանջներին։ Նախագուշակելով ռազմական գործողությունների բնույթը, մարտադաշտում նոր զենքի և մարտ վարելու նոր յուղանակներ հայտնվելու հնարավորությունը, անհրաժեշտ է նախորոք հարմարվել դրան և հիմնական մեր արդյունագործությունը, ըստ հնարավորին, տեղավորել յերկրի սահմաններից հեռու և որքեցոր անդադար հետևել հարևանների ռազմական տեխնիկայի զարգացմանը, նրանց զինված ուժերի պատրաստությանը։ Այս ամենաուշադիր վերաբերմունքն է պահանջում վոչ միայն ռազմական վարչության կողմից, այլև պետական իշխանության բոլոր որգանների, ամբողջ խորհրդային հանրայնության կողմից և, հասկանալի յե, կուսակցության կողմից դեպի յերկիրը ամեն կողմից պատերազմի համար պատրաստելու խնդիրները։

Կապիտալիստական յերկրները, բացի բանակների և արդյունաբերության պատրաստությունից, ներկայումս ամենամեծ ջանքերն են գործ դնում, վորպեսզի այդ գործի մեջ քաշեն պատերազմի համար ազգաբնակության բոլոր պետական խավերին։ Ֆրանսիան, Ամերիկան, Անգլիան և մյուսներն իրենց յերկիրը պատել են ռազմական զանազան տիպի կազմակերպությունների խիտ ցանցով, ինչպես, որինակ՝ ռազմա-դիտական ակումբներ ու ընկերություններ, հրաձգային ընկերություններ, սպորտական կազմակերպություններ և այլն։ Միջնակարգ և բարձրագույն դպրոցական հիմնարկություններում ռազմական գործն անցնում են աշխարհագրության, պատմության կամ մաթեմատիկայի հետ վորպես հավասար առարկա։ Ամերիկայի և Ֆրանսիայի բարձրագույն տեխնիկական դպրոցական հիմնարկներում ուսանողները պարտավոր են ուսումն ավարտելիս և՛ պահեստի հրամատարի քննություններ տալ։

Ռազմապես նախապատրաստվող պատանիներին զանազան բազմաթիվ արտոնություններ են վերապահված քաղաքացիական հաստատություններում ծառայելու նկատմամբ, կամ դպրոցական հիմնարկներ մտնելու նկատմամբ։ Այդ նպատակի համար ամբողջ հասարակական կարծիքը մոբիլիզացիայի յե յենթարկված։ Ժողովրդական լուսավորության մինիստրությունը պատերազմի պատրաստության գործով ռազմական վարչությունից պակաս չի զբաղված։ Ռազմական գիտելիքների պրոպագանդան ռազմական պատրաստության ընդհանուր սիստեմի մի անհետաձգելի մասն է կազմում։ Պատերազմի դեպքում այս փաստերը ազգաբնակության պատրաստության ժամանակակից սիստեմի համար չափազանց բնորոշ են։ Այս՝ յերկրի ապագա պատերազմի համար պատրաստության չորրորդ բնորոշ հատկանիշն է։

Այս հեռանկարները մեր առաջ են դնում հետևյալ խնդիրները.—առաջին հերթին ամբողջ հասակավոր ազգաբնակությանը պատրաստել պատերազմի համար։ Մեր խորհրդային բանվորա-գյուղացիական պատանեկության ռազմական պատրաստությունն առաջին տեղը պետք է բռնի։ Մեր բանակի պատրաստության տերրիտորիալ-միլիցիոն սիստեմի, նրա քանակով թուլ կադրային մասի, ծառայության կարճատև ժամկետների պատճառով ռազմական վարչության համար չափազանց դժվար է ազգաբնակության ռազմական պատրաստության ամբողջ գործն իր ուսերի վրա տանել. այդ ընդհանուր գործում ռազմական վարչությանը ոգնության պետք է գան վոչ միայն մյուս պետական կենտրոնական և տեղական որգանները, այլև մեր Միության բոլոր աշխատավորները։ Մեր պատանեկությունը ռազմական պատրաստության այդ գործում իրեն պատշաճ հատուկ տեղը պետք է գրավի։ Յեթե նույնիսկ պատանեկությունը գովելի յե սովորում դպրոցում և լավ է աշխատում գործարանում կամ գյուղական տնտեսության մեջ, յեթե նա կազմակերպված է և քաղաքականապես շատ լավ գիտե խորհրդային պետականության նպատակներն ու խնդիրները, յեթե նույնիսկ նա ՀԱՄԼԿՅԵՄ անդամ է,—համենայն դե-

պը, այդ դեռ հեղափոխության՝ նրա վրա դրած պարտակա-
նությունների կեսն է միայն. պետք է ոչ միայն քաղաքացի
լինել, այլև հեղափոխության զինվոր. հեղափոխությունը վաղ
թե ուշ, հենց առաջին պատերազմից իր դրոշի տակ կկանչի
ամբողջ աշխատավոր պատանեկությանը։ Դրա համար հար-
կավոր է ոչ միայն իմանալ այդ մասին, այլ ֆիզիկապես ևմ
տեխնիկապես պատրաստ լինել հեղափոխական պատերազմի
համար. միշտ իր պոստում լինել, «պատրաստ լինել», այս ա-
ռաջին հերթին նշանակում է կռվի, պատերազմի զենքին տի-
րապետել։ Մեր բանվորա-գյուղացիական պետության աշխա-
տավորների իսկական հաղթանակը կլիներ տեսնել բոլոր աշ-
խատավոր պատանեկությանը ՊՈԶՀ-Ավիաքիմին և զանազան
սպորտ-կազմակերպություններին ամբողջովին մասնակցելիս,
որպես ակտիվ անդամներ։

Սովորել ֆուտբոլի գնդակը հեռու խփել, յերկար ու
առանց հոգնելու վազել, հեռանալի լողալ, դիպուկ կրակել, ակ-
տիվ անդամ լինել մեր Խորհրդային Միության պաշտպանու-
թյան զանազան ընկերություններին և նվիրված լինել լենի-
նիզմի մեծ պատգամներին—ահա այն իդեալը, որին պետք է
ամեն կերպ ձգտի մեր բանվորա-գյուղացիական պատանեկու-
թյունը։ Դազդյահի մոտ ես կանգնած, թե արորի մոտ կամ
գրքի հետ ես, միշտ պետք է հիշես, որ կապիտալիստական
յերկրների բուրժուական պատանեկությունն իրեն հայր-ձրի-
ակերների որինակին հետևելով, որեցոր սովորում է տիրա-
պետել զենքին, պատրաստվում է բանվորա-գյուղացիական պե-
տության հետ պատերազմելու համար։ Հարկավոր է բուրժու-
ազիայի վողնախտավոր սերունդներին ցույց տալ, որ բան-
վորա-գյուղացիական պատանեկությունը կարող է Հոկտեմբերի
գործը, ամբողջ աշխարհում, տանել-հասցնել մինչև վերջ, որ
նա պատրաստ է պատմության այդ մեծ կոչն ընդունելու, որ
նա արժանի յե և ընդունակ կատարել և վերջացնել լիակա-
տար հաղթանակով այն գործը, որն այնպես փայլուն կեր-
պով սկսել է մեր Մեծ հեղափոխության հին գվարդիան. իսկ
այդ կարելի յե ապացուցել ամենից առաջ պատերազմական
տեխնիկայի բոլոր միջոցներին վարպետորեն տիրապետելով։

Ապագայի պատերազմը—այդ ոչ միայն մարդկային մաս-
սաների մրցումն է, այլ պատերազմի տեխնիկային տիրապե-
տելու արվեստի մրցումն է. նա, ով թույլ դուրս կգա, անգրա-
գետ կլինի այդ արվեստի մեջ, ամենից առաջ կհատուցանի
արյունով, կարող է պատահել և պարտությամբ։ Այս հաստատ
պետք է հիշել։

Ապագայի պատերազմը—այդ ոչ միայն հեղափոխական
խանդավառության մրցումն է կապիտալիստական անշարժու-
թյան հետ, այլ գիտության և տեխնիկայի մրցումը, սոցիա-
լիստական կուլտուրայի մրցումը կապիտալիզմի կուլտուրայի
հետ։ Նախորդք «բուրժուական գիտության և տեխնիկայի ամ-
բողջ պաշարի» գիտությանը տիրապետելը այդ իսկ պատճա-
ռով ոչ թե լոկ հետաքրքրություն է, այլ ուղղակի անհրա-
ժեշտություն։ Հիմնավորապես իմանալ թշնամու տեխնիկան—
նշանակում է ապահովել հաջողությունն իր համար $^3/_4$-ով։

Բանվորա-գյուղացիական գիտակից պատանեկությունը ռազ-
մական գիտելիքներով այն ժամանակ կատարելապես զինված
կլինի, յերբ նա հաստատ կերպով իրեն նպատակ դնի—ոչ
միայն իբրև մարտիկ պատրաստվել, այլև որպես բանվորա-
գյուղացիական բանակի հրամատար։ Ցուրաքանչյուր գիտա-
կից պատանի պետք է խորհրդային հանրապետությունների
քաղաքացու պարտքը համարի, զինվորական իսկական ծառա-
յությունն ավարտելուց հետո, չվերադառնալ նրա շարքերից,
մինչև որ հեղափոխական բանակի հրամատարի կոչումը
չստանա։

Ն. ՍՈՒՄՍԿԻ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԲԱՆԱԿՈՒՄ

Կոմյերիտմիությունն իր գոյության առաջին որից ակտիվ մասնակցություն է ունեցել Կարմիր բանակի շինարարության գործում։ Քաղաքացիական պատերազմի տարիներին նա իր ամենալավ ուժերն է տրամադրել բանակին, ճակատին։ Քաղաքացիական պատերազմի դժվարին տարիներում կոմյերիտմիությունը միշտ մարտիկների առաջին շարքերում է յեղել։ Շատ անգամ է նա մասսայական միութենական մոբիլիզացիաներ արել՝ հարյուրավոր ու հազարավոր իր անդամներին բանակի շարքերն ուղարկելով։

Քաղաքացիական պատերազմի վերջանալով կոմյերիտմիության ռազմական աշխատանքի վրա ունեցած ուշադրությունը չթուլացավ։ Հատկապես վերջին տարիներում ՀամԼԿՅԵՄ-ի համար Կարմիր բանակի մասերում անմիջական աշխատանք կատարելու լայն ասպարեզ բացվեց։ Քաղաքացիական պատերազմի տարիներին կոմյերիտականների թիվը բանակում մեծ չեր, համեմատած ամբողջ կարմիր-բանակային մասսայի հետ, այնինչ այժմ կոմյերիտմիության բուռն աճման և նրա յերկու միլիոնոց կազմակերպության վերածվելու պատճառով ամեն մի նոր կոչ Կարմիր բանակի ու նավատորմի շարքերն է լցնում տասնյակ-հազարավոր կոմյերիտականներ։ Կոմյերիտականների նշանակությունն ու դերը ներբանակային աշխատանքի մեջ զգալի չափով բարձրացել է։ Այս հանգամանքն անհրաժեշտ է դարձնում նորից հարց դնելու բանակում ու նավատորմում միութենական աշխատանքի կազմակերպության մասին։ 1924 թ. ՀամԼԿՅԵՄ-ի VI համագումարի վորոշումները՝ կուսակցության աջակցող կոմյերիտմիութենական խմբակներ կազմակերպելու մասին, ՀամԼԿՅԵՄ-ի համար բանակում և նավատորմում աշխատանք կատարելու նոր ասպարեզ բաց արին։ Նրանց կազմակերպության շնորհիվ կոմյերիտմիութենական աշխատանքն սկսեց արագորեն ծավալվել և ամրանալ։

Վերջին տարիներում վոչ միայն նշանավոր չափով շատացան կոմյերիտմիության այն կադրերը, վորոնք յուրաքանչյուր տարի հերթական զորակոչների ժամանակ բանակ եյին մտնում, այլ նկատվում եր և բանակային կոմյերիտական կազմակերպության շատ ուժեղ աճում, վորն արտահայտվում եր ՀամԼԿՅԵՄ-ի մեջ նոր անդամներ ընդունելով հենց բանակի ներսում։ Ցեվ ուղղակի պետք է ասել, վոր, իրոք, բանակային կոմյերիտմիության բուռն աճման ամենագլխավոր պատճառը (դրան զուգընթաց և բանվորա-գյուղացիական յերիտասարդության քաղաքական ակտիվության ուժեղացումը) զորամասերում կոմյերիտմիութենական աշխատանքի հաջող ծավալումներ եր, շնորհիվ կուսակցությանն աջակցող կոմյերիտական խմբակների կազմակերպման։

Միքանի թվեր մեզ պարզ պատկերը կտան այդ աճման։ Այսպես՝ 1924 թ. հուլիսի 1-ին ՀամԼԿՅԵՄ-ի անդամների ու թեկնածուների թիվը բանակում և նավատորմում 33,473 մարդ եր. 24 թվի հոկտեմբերի 1-ին—36,887 մարդ. (այս մինչև կուսակցությանն աջակցող խմբակների կազմակերպումը, վորոնք սկսեցին կազմակերպվել 24 թվի հոկտեմբերի 1-ից հետո). 1925 թ. հունվարի 1-ին—52,336 մարդ, 1925 թ. ապրիլի 1-ին—67,886 մարդ, 25 թ. հուլիսի 1-ին—78,474, 26 թ. հունվարի 1-ին—97,995 մ. և 1926 թ. հուլիսի 1-ին—արդեն մոտ 115,000 մարդ. անդադար ամսեամսիս աճում։

Ցեթե համեմատելու լինենք կոմյերիտմիության մեջ ընդունվելու համար դիմում տվողների թիվն ընդունվածների թվի հետ, այն ժամանակ ավելի ակնհայտնի կլինի այն, թե վորքան մեծ է յեղել կարմիր-բանակային ու կարմիր-տորմիղային մասսաների կոմյերիտմիության մեջ մտնելու ձգտումը։

Մեկուկես տարվա ընթացքում—1925 թ. հունվարի 1-ից մինչև 1926 թ. հուլիսի 1-ը—98,150 դիմում է յեղել տրված,

փակ միության մեջ ընդունվել են միայն 69,852 մարդ։ Ցերկու տարվա մեջ կոմյերիտմիությունն աճել է ավելի քան յերեք անգամ, և այժմ բանակի մոտավորապես հինգերորդ մասը կոմյերիտականներ են։ Կարմիր բանակն ու նավատորմը, իսկապես վոր, վեր են ածվում յերիտասարդության զինված միության։

Առանձնապես պետք է մատնանշել, վոր ՀամԼԿՅԵՄ իր ճնշող մեծամասնությամբ աճել է շարքային կարմիր-բանակայինների հաշվին, վորոնց թիվը միության մեջ հաշվվում է ավելի քան 80%։ Բոլոր տվյալներն այն են ապացուցում, վոր մոտակա տարիներում ևս բանակային կոմյերիտմիության աճումը կանգ չի առնելու, և նա իր շարքերն է ընդունելու կարմիր-բանակայինների ամբողջ լավագույն տարրը։ Ընկ. Վորոշիլովի՝ ՀամԼԿՅԵՄ-ի VII համագումարում արտահայտած այն միտքը, թե կոմյերիտմիությունը 200,000 անդամ պիտի ունենա, այդ թիվը շատ հեռու չե։

Կարմիր բանակի և նավատորմի կոմյերիտմիությունն իր աշխատանքը տանում է չափազանց յուրահատուկ պայմաններում, վորոնք խիստ կերպով տարբերվում են ՀամԼԿՅԵՄ քաղաքացիական կազմակերպությունների աշխատանքից։ Վերջինս իր գործնական աշխատանքը կազմակերպում է քաղաքում գործարանային արտադրական կյանքի հարցերի շուրջը, գյուղում—գյուղական տնտեսության, կոոպերացիայի, գյուղական կյանքի զարգացման հարցերի շուրջը։ Նրանց աշխատանքի առանցքն են կազմում յերիտասարդության կյանքի մոտիկ, առորյա հարցերը։ Կոմյերիտականներն իրենց սովորական ընտանեկան պայմաններում են գտնվում։ Քաղաքացիական կազմակերպությունների ամբողջ աշխատանքի հիմքը գործարանը կամ գյուղն է։ Այսպես չե Կարմիր բանակում և նավատորմում։ Այստեղ կոմյերիտական աշխատանքը տարվում է բոլորովին այլ պայմաններում, նրա աշխատանքի հիմքը ուրիշ հարցեր են կազմում։ Կարմիր բանակը մարտական դպրոց է և կարմիր-բանակայիններից պահանջում է հեղափոխական զինվորական խիստ դիսցիպլինա։ Բանակում և նավատորմում աշխատող

խմբակների գործնական ամբողջ աշխատանքը կատարվում է հետևյալ հարցերի շուրջը։—ռազմական շինարարության մեջ մասնակից լինելու, ամբողջ բանակի և իր զորամասի մարտունակությունը ամրացնելուն աշակցելու, զինվորական դիսցիպլինան ուժեղացնելու, կոմյերիտականների և անկուսակցական կարմիր-բանակայինների հետաքրքրությունը դեպի ռազմական գործը զարգացնելու հարցերի շուրջը։ Աշակցող խմբակների աշխատանքի այս բնույթը նրանց վրա հատուկ պատասխանատվություն է դնում, վորն անդադար աճում է՝ բանակում աշակցող խմբակների դերի աճման հետ միասին։ Այս հարցերն ամեն մի կոմյերիտականի սրտին մոտիկ պետք է լինեն և հետաքրքիր։ Ցեվ աշակցող խմբակների խնդիրն ել հենց նրանումն է, վոր այդ հարցերի հիման վրա կազմակերպվի կոմյերիտականների ինքնագործունեությունը։

Կուսակցության և կոմյերիտմիության աշխատանքի ոբյեկտը գործարանում և գյուղում տարբեր է։ Կուսակցությունն աշխատանք է տանում առավելապես հասակավոր բանվորների և գյուղացիների շրջանում, կոմյերիտմիությունը՝ բանվորա-գյուղացիական յերիտասարդության շրջանում։ Միանգամից աչքի յե ընկնում աշխատանքի «բաժանումը»։ Կոմյերիտմիությունը քաղաքացիական պայմաններում հանդիսանում է վորպես շարժահաղորդ փոկ, վորպես կուսակցության ագենտը յերիտասարդության շրջանում՝ աշխատանք կատարելու նկատմամբ։ Բանակում և նավատորմում անկուսակցականների՝ հասակավորների և յերիտասարդության այդպիսի սուր բաժանում չկա։ Բոլոր կարմիր-բանակայինները, կարմիր-տորմիղայինները, կուրսանտները մի հասակի յեն և, բացի դրանից, կոմյերիտական հասակի։ Իսկ այս—բանակի կազմի հիմնական մասսան է։ Միայն հրամկազմն է, վոր բանակի և նավատորմի փոքր մասն է կազմում, վոր մեծ հասակ ունի, այն ել վոչ բոլորը։ Կրտսեր հրամկազմը—կոմյերիտականի հասակ ունի։ Այսպիսով բանակում թե կուսակցությունը և թե կոմյերիտմիությունը իրենց աշխատանքը տանում են միևնույն կարմիր-բանակային մասսայի շրջանում։ Այս առանձնահատկությունը մի պլյուս է, վոր բանակյան հատուկ

պայմաններում վորոշում է կոմյերիտմիության տեղն ու դերը բանակում, վորպես կուսակցական կազմակերպության անմիջական ոգնական, և առանձնապես ստիպում են հարց դնել անկուսակցականների շրջանում աշխատանք կատարելու կարգի մասին և կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների միջև փոխհարաբերությունների մասին։

Ինչո՞ւմն է կոմյերիտմիության դերն ու նշանակությունը բանակում։

Նախ՝ կոմյերիտմիությունը հանդիսանում է կուսակցության ամենից կարևոր ակտիվ ոգնականը՝ անկուսակցական կարմիր-բանակայինների շրջանում աշխատանք տանելու գործում, կուսակցության ազդեցությունը նրանց վրա տարածելու գործում։

Յերկրորդ՝ կոմյերիտմիությունը հանդիսանում է վորպես մի գարբնոց, ուր նոր ուժեր են կոփվում կուսակցության շարքերը լրացնելու համար։ ՀամԼԿՅԵՄ-ի կազմակերպություններն այս յերկու խնդիրներն էլ բանակում կատարել և կատարում են հաջողությամբ։

Յուրաքանչյուր կոմյերիտական կարմիր բանակում և նավատորմում պետք է կուսկազմակերպությունների կողմից զորամասում տարվող բոլոր աշխատանքներին ակտիվ ոգնություն ցույց տա, լինի որինակելի կարգապահ կարմիր-բանակային, կռվի կարմիր բանակի և նավատորմի շարքերում յերևան յեկող ամեն մի անկարգապահության դեմ, ամեն կերպ նպաստի պետերի կազմի և կուսկազմակերպության՝ բանակի հզորությունն ու մարտունակությունը ամրացնելու գործում, բացատրի կարմիր-բանակայիններին ու կարմիր-տորմիղայիններին այն խնդիրները, վորոնք առաջադրված են կարմիր բանակին՝ աշխատելով ուժեղացնել նրանց հետաքրքրությունը դեպի ռազմական գործը, գործոն մասնակցություն ունենա քաղաքական-լուսավորչական աշխատանքի մեջ՝ կարմիր-բանակայինների շրջանում և բացատրի նրանց կոմունիստական կուսակցության և Խորհրդային իշխանության քաղաքականությունը, նույնպես և ՀամԼԿՅԵՄ-ի խնդիրներն ու աշխատանքը։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ

Միանգամայն հասկանալի յե, վոր կոմյերիտականների առաջ դրված խնդիրների իկատար ածելն անհնար է առանց կոմյերիտականների կազմակերպչական միության։

«ՀամԼԿՅԵՄ-ի կյանքի ու աշխատանքի վերաբերյալ հարցերը քննության առնելու ու լուծելու, ՀամԼԿՅԵՄ անդամներին զորամասում՝ բոլոր կուսակցական ու քաղաքական-լուսավորչական աշխատանքին լծելու համար, նրանց դաստիարակչական աշխատանքն ուժեղացնելու և կուսկազմակերպությունների հետ ամենասերտ կապ հաստատելու համար, բոլոր վաշտերում, հեծելավաշտերում և նրանց հավասար զորամասերում կազմակերպվում են կուսակցությանն աջակցող կոմյերիտական խմբակներ, վորոնք միանում են գնդի և սրան հավասար զորամասում և կազմում են գնդի կուսակցությանն աջակցող կոմյերիտական խմբակ։

«Կուսակցությանն աջակցող կոմյերիտական վաշտային խմբակները կազմակերպվում են Համ Կ(բ)Կ սկզբնական բջիջներին (վաշտային և սրանց հավասար զորամասերի) կից, յեթե կան ամենաքիչը ՀամԼԿՅԵՄ-ի 5 անդամ ու թեկնածու»։

Այսպիսով՝ կուսակցությանն աջակցող վաշտային խմբակը հանդիսանում է կոմյերիտական սկզբնական կազմակերպությունը բանակում։ Կարմիր բանակի առանձնահատուկ պայմանները թույլ չեն տալիս բանակում ու նավատորմում կիրառել ՀամԼԿՅԵՄ-ի քաղաքացիական կազմակերպությունների աշխատանքի մեթոդներն ու ձևերը, այլ, ընդհակառակը, այդ պայմանները հարկադրում են ունենալ այնպիսի ձևով կոմյերիտական կազմակերպություններ, վորոնք հարմարվում են բանակային պայմաններին և վորոնք լիապես նպաստում են բանակի մարտունակության ամրացմանը։ Հատկապես դրա համար էլ անհրաժեշտ են մի շարք սահմանափակումներ կամ, ավելի ճիշտ ասած, կոմյերիտական հատուկ կազմակերպչական կառուցվածք բանակում։ Կարմիր բանակը—դա մարտական ռազմական դպրոց է։ Բանակի մարտունակության շահերը, նրա

մաքսիմալ չափով միահամուռությունը պահանջում են, որ ամբողջ աշխատանքը կատարվի քաղաքացիների և կուս. կազմակերպությունների միասնական անմիջական կուսակցական-քաղաքական միասնական ղեկավարության տակ։ Զորամասում տարվող քաղաքական աշխատանքի ղեկավարության և վարության երկուությունը կամ պարալելիզմ չեն թույլատրելի չեն։ Այդ կթուլացներ բանակի ուժերն ու հզորությունը։ Բանակի կոմյերիտական կազմակերպությունները հանդիսանում են ոչ թե զուգահեռ, իրավահավասար կազմակերպություններ, այլ կուսակցությանն աջակցող, ոգնող, նրա՝ զորամասերում տարած աշխատանքին։ Կուսակցությանն աջակցող կոմյերիտական խմբակներն ել հենց համապատասխանում են կոմյերիմիության այդ խնդրին ու դերին բանակում։ Ամբողջ հարցն ել նրանումն է, որ պետք է այդ ձևերի հիման վրա զարգացնել միության աշխատանքը, որքան հնարավոր է, լայն և ինտենսիվ կերպով և տվյալ ձևը հարմարեցնել կոմյերիմիության ընթացիկ աշխատանքին բանակում։ Ինքնագործունեությունը—պատանեկական շարժման այդ հիմնական սկզբունքը—իհարկե, անհրաժեշտ է կոմյերիմիության աշխատանքի մեջ՝ հարմիր բանակի շարքերում. սակայն մեզ համար ինքնագործունեությունը—ինքնանպատակ չէ, այլ միայն միջոց է յերիտասարդության կոմմունիստական դաստիարակության համար։ Առանց ինքնագործունեության կոմյերիտականներից իսկական բալշևիկ պատրաստել չի կարելի։ Ցավ հենց կուսակցությանն աջակցող խմբակները կոմյերիտական մասսաների ինքնագործունեության կենտրոնն են հանդիսանում։

Աջակցող խմբակների յերկու տարվա աշխատանքը ցույց տվեց բանակի կոմյերիտական կազմակերպության այդ ձևի կենսունակությունը, նպաստեց կոմյերիմիության աշխատանքի լայն ծավալմանը բանակում։

Կոմյերիմիության նշանակության բարձրացման վրա հիանալի իլլյուստրացիա հանդիսանում է աջակցող խմբակների թվի արագ աճումը։ Նրանց կազմակերպությունն սկսվեց 1924 թ. հոկտեմբերից։ 1925 թ. հունվարի 1-ին արդեն կար 993

աջակցող խմբակ, 25 թվի հուլիսի 1-ին—3.742 խմբակ, 1926 թ. հունվարի 1-ին—4.352 խմբակ, իսկ 1926 թ. հուլիսի 1-ին արդեն 5,268 խմբակ։

Կուսակցությանն աջակցող կոմյերիտական վաշտային խմբակների խնդիրները հիմնականում հետևյալներն են.—ոգնել Համ կկ (բ) բջիջին նրա կուսակցական և քաղաքական աշխատանքի ընթացքում. ՀամԼԿՅԵՄ բոլոր անդամներին ու թեկնածուներին ակտիվ մասնակցության քաշել աջակցող խմբակի միութենական աշխատանքի մեջ. իր բոլոր անդամներին կապել իրար հետ և նրանց բալշևիկական դաստիարակության աշխատանքը տանել (միութենական ժողովներում կուսակցական, քաղաքական և միութենական աշխատանքի հարցերի քննություն, անդամների մեջ ընկերական սերտ կապի հաստատում, կարգապահության ամրացում, պայքար հիվանդագին յերևույթների դեմ, անդամներին քաղգրագիտության դպրոցներ գրավել, ինքնակրթության զարգացում և այլն). ակտիվ մասնակցություն ունենալ բոլոր քաղաքական-լուսավորչական աշխատանքն անցկացնելու մեջ վաշտում (լենանկյան աշխատանք, պատի լրագրեր լույս ընծայել, աշխատանք հասարակական ինքնագործոն կազմակերպությունների մեջ—ՄՈՊՐ, ՊԱՋԸ-Ավիաքիմ և այլն). հանրայնացնել կոմյերիմիությունը և նոր անդամներ գրավել միության մեջ (անկուսակցականների հետ անհատական և խմբական աշխատանք կատարել, ընթերցումներ և այլն). քննության առնել և վճռել բոլոր գործնական և միութենական աշխատանքի հարցերը վաշտում, քննության առնել ՀամԼԿՅԵՄ կազմակերպիչների հաշվետվությունները, առանձին անդամների աշխատանքը. աջակցել պետերի կազմին և կուսկազմակերպություններին՝ սրանց բանակի մարտունակությունն ամրացնելու գործում, զորամասում կարգապահությունն ուժեղացնելու գործում, մանավանդ կոմյերիտականների շրջանում. կատարել ՀամԼԿՅԵՄ տեղական կազմակերպությունների աջակցության և ոգնության վերաբերյալ գնդի բյուրոյի տված ցուցումները, նույնպես և յերիտասարդության շրջանում ռազմական պրոպագանդայի

աշխատանքը պրակտիկ ձևով դնելու, ռազմական անկյուններում, կոմյերիտմիության ակումբներում ռազմական գիտելիքների խմբակների աշխատանքի կազմակերպման ու կարգավորման վերաբերյալ ցուցումները։

«Բացի վերև հիշվածներից գնդի կոմյերիտական աշակցող խմբակների հիմնական խնդիրներն են՝ վաշտային աշակցող խմբակների աշխատանքի ղեկավարությունը. կուսլուսաշխատանքի ասպարեզ քաշել բոլոր կոմյերիտականներին. քննել միութենական կյանքի և գնդի աշխատանքի ընդհանուր հարցերը, պատգամավորների ընտրություններ կատարել միութենական խորհրդակցության, համագումարների և կոնֆերենցիաների համար»։

Կուսակցությանն աշակցող խմբակների վաշտային և գնդի ընդհանուր ժողովները տարվում են կանոնավոր կերպով՝ վաշտայինը—ամենաքիչը յերկու շաբաթը մեկ անգամ, գնդինը—ամենաքիչը, ամիսը մեկ անգամ, և, նայած թե ինչ հարցեր են վճռվում, լինում են կամ դռնբաց կամ դռնփակ։ Ժողովի որակարգը նախորոք կազմում է ՀամԼԿՅԵՄ համապատասխան վաշտային կազմակերպիչը կամ գնդի բյուրոն։

ՀամԼԿՅԵՄ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐՆ ՈՒ ԳՆԴԻ ԲՅՈՒՐՈՆ

Կոմյերիտմիության անդադար ուժեղ աճման և նրա աշխատանքի թափն ուժեղանալու պայմաններում կոմյերիտմիության աշխատանքը զորամասերում հաջող կերպով կարելի յե անցկացնել միայն խմբակներում աշխատանքը լավ ղեկավարելով և կոմյերիտական ակտիվից լայն կադրեր առաջ քաշելով։ Ահա հենց դրա համար է, որ ներմիութենական դեմոկրատիայի ինքնագործունեության հարցերը Կարմիր բանակում ձեռք են բերել այդպիսի մեծ նշանակություն։

Կուսակցությանն աշակցող վաշտային խմբակներում միութենական աշխատանքի ղեկավարությունը պատկանում է ՀամԼԿՅԵՄ վաշտային կազմակերպչին, որն ընտրվում է վաշտային խմբակի ընդհանուր ժողովի կողմից վեց ամիս ժամանակով և հետո հաստատվում է Համ ԿԿ (բ) գնդի բյուրոյի և գնդի ռազմկոմի կողմից։ ՀամԼԿՅԵՄ կազմակերպչի պարտականությունները շատ ընդարձակ են։ Նա նախորոք պետք է աշակցող խմբակների աշխատանքի պլան մշակի, նախապատրաստի խմբակի ընդհանուր ժողովը, կիրառի կյանքում խմբակի ընդհանուր ժողովների վորոշումները և հսկի, վոր այդ վորոշումները խմբակի բոլոր անդամները կատարեն, միության անդամների և թեկնածուների թվական և վորակի հաշվառում կատարի, մի խոսքով—ղեկավարի միութենական ամբողջ աշխատանքը վաշտում։ Վաշտային կազմակերպչի աշխատանքի ասպարեզը շատ ընդարձակ է՝ ներմիութենական աշխատանք, աշխատանք լենանկյունում, պատի լրագրում, կապ ՀամԼԿՅԵՄ տեղական բջիջի հետ և այլն։ Հասկանալի յե, վոր մի կազմակերպիչը, մանավանդ աշակցության մեծ խմբակներում, դժվարությամբ կարող է գլուխ բերել ամբողջ ղեկավար աշխատանքը։ Այդ պատճառով վաշտում աշխատանքը ղեկավարելու համար կազմակերպչին ոգնության են կանչվում ակտիվ շարքային կոմյերիտականները։ Վաշտի կազմակերպիչը ըստ կարիքի վաշտի ակտիվի խորհրդակցություն է հրավիրում, վորտեղ քննվում են վաշտում կատարելիք աշխատանքի գործնական խնդիրները. որինակ՝ խմբակի աշխատանքի պլանը, խմբակի դրությունը, անկուսակցականների մեջ տարվող աշխատանքի հարցեր, լենանկյան աշխատանքի հարցեր և այլն։

Առաջ գնդի կոմյերիտմիութենական աշակցող խմբակում ամենորյա աշխատանքի ղեկավարությունը պատկանում եր ՀամԼԿՅԵՄ գնդի մեկ կազմակերպչին, վորին սկզբում ջոկում եր Համ ԿԿ (բ) գնդի բյուրոն, իսկ հետո ընտրվում եր միութենական ժողովում. Կոմյերիտմիությունը բանակում այնքան արագ աճեց, վոր գնդում կոմյերիտականների թիվը բարձրացավ մինչև 300 մարդու և ավելի։ Աշխատանքն ընդլայնվեց և բարձրացավ։ Մի կազմակերպիչը մեծ դժվարությամբ եր գլուխ հանում ամբողջ ղեկավար աշխատանքից։ Միութենական աշխատանքի հաջող վարույթը հնարավոր յեղավ միայն խմբակներում աշխատանքի ղեկավարության կազմակերպչական ձևերի լավացումով։ Հատկապես դրա համար եր, վոր վորոշվեց կազմակերպել ՀամԼԿՅԵՄ գնդի բյուրոներ։

Ցեվ այժմ կոմյերիտմիությունի գնդին աջակցող խմբակի ամենօրյա գործնական աշխատանքը դառնում է ՀամԼԿՅԵՄ բյուրոն, որն ընտրվում է գնդի միութենական ընդհանուր ժողովում 7—9 անդամից և 2—3 թեկնածուներից՝ 6 ամիս ժամանակով։ ՀամԼԿՅԵՄ գնդի բյուրոն իր կազմից ընտրում է ՀամԼԿՅԵՄ գնդի կազմակերպչին. սրա գործն է համախմբել բյուրոյի անդամների ամբողջ գործունեությունը, ղեկավարել կոմյերիտմիության վաշտային կազմակերպիչների ընթացիկ աշխատանքը. անմիջական կապ պահպանել ՀամԿԿ(բ) գնդի բյուրոյի հետ և այլն։ Գնդի կազմակերպիչն անպայման պետք է ՀամԿԿ (բ) անդամ լինի և հաստատվի իր պաշտոնում դիվիզիայի քաղբաժնի կողմից. իսկ բյուրոյի մնացած անդամները — ՀամԿԿ(բ) գնդի բյուրոյի կողմից։ Գնդի բյուրոն ղեկավարության ամբողջ աշխատանքը բաշխում է իր անդամների միջև։ Գնդի ընտրովի բյուրոյի ստեղծումը հնարավորություն է տալիս գործնական ղեկավար աշխատանքի մեջ քաշել կոմյերիտական ակտիվի ավելի լայն շրջանները, հնարավորություն է տալիս այդ ակտիվը դաստիարակել այդ աշխատանքով և վրճռել կուսակցությանն աջակցող գնդի խմբակի ղեկավարության աշխատանքի լավացման հարցը։

Բանակային կոմյերիտականները գնդի բյուրոներ ստեղծելու վորոշումն ընդունեցին մեծ բավականությամբ։ Գնդի բյուրոների ընտրություններն անցնում են շատ աշխուժ և նպաստում են միութենական աշխատանքի կենդանի դարձնելուն։ Հետագայում, նայած թե գնդի բյուրոների աշխատանքի փորձն ինչ ցույց կտա, հարց կդրվի իրեն կազմով մեծ վաշտային աջակցող խմբակներում նախագահություններ կազմակերպելու մասին։

Գնդի բյուրոն կարիք յեղած դեպքում հրավիրում է ընդլայնած նիստեր, դեպի այդ նիստերը քաշելով վաշտային ակտիվիստներին, վորով ծանոթացնում է նրանց մասում տարվող միութենական և քաղաքական-լուսավորչական աշխատանքի հիմնական հարցերի հետ։

Կարմիր բանակում միութենական աշխատանքի փորձը

հաշվառման յենթարկելու համար հրավիրվում են ՀամԼԿՅԵՄ դիվիզիական շրջանային կոնֆերենցիաներ, վորտեղ քննվում են ՀամԼԿՅԵՄ աշխատանքի հարցերը բանակում։ ՀամԼԿՅԵՄ կոնֆերենցիաները հրավիրվում ու նրա աշխատանքները տարվում են քաղորգանների ուղղակի ղեկավարությամբ, նրանց վորոշումներն ուժի մեջ են մտնում բացառապես քաղորգանների հաստատելուց հետո։

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արդեն մատնանշեցինք, վոր Կարմիր բանակի և նավատորմի պայմանները պահանջում են ամբողջ միութենական աշխատանքի անմիջական կուսակցության ղեկավարությունը բանակում։ Կան մի շարք մոմենտներ բանակային կոմյերիտականի դրության և աշխատանքի մեջ, վորոնք, բացի վերոհիշյալից, հարկադրում են կուսակցական ղեկավարության հարցը բանակում ավելի սուր կերպով դնելու։

Ներմիութենական դեմոկրատիայի շրջանակների ընդլայնումը բանակում, կոմյերիտմիության արագ թվական աճումը, նրա սոցիալական կազմի բազմատեսակությունը գյուղացիների թվական գերազանցության հետ միասին, միության անդամների քաղաքական թույլ պատրաստությունը, նույնպես և ակտիվի մասամբ թույլ պատրաստությունը — այս բոլորը առավել ևս ուժեղացնում են կոմյերիտմիության աշխատանքի անմիջական սիստեմատիկ ղեկավարության անհրաժեշտությունը։ Առանց սրան աջակցության խմբակները չեն կարող լիակատար կերպով լուծել այն խնդիրները, վորոնք դրվում են նրանց առաջ։

Բանակում կոմյերիտական աշխատանքը դառնում է կուսակցական աշխատանքի անկապտելի մի մասը։ Կուսակցական ղեկավարության խնդիրն է՝ ապահովել աջակցության խմբակների աշխատանքի մեջ ճիշտ կուսակցական գիծը, միևնույն ժամանակ անհրաժեշտ հնարավորությունը տալով կոմյերիտականներին հայտարերելու իրենց ձեռներեցությունն ու ինքնագործունեությունը և ձգտելով աջակցության խմբակները վե-

ըածել կոմյերիտականների ինքնագործունեության գործոն կենտրոնի։ Պետք է միշտ հիշել, որ ինքնագործունեությունը—միութենական աշխատանքի հիմքն է։ Այդ՝ կոմյերիտմիության մասին յեղած բայլշևիկական հայեցակետերի հիմքն է։ Սակայն նրա ձևերը տարբեր պայմաններում տարբեր են։

Դրա համար բոլոր կոմյերիտականները պետք է հիշեն, որ Կարմիր բանակի պայմանները բանակի մարտունակության ամրացման տեսակետից ինքնագործունեության համար որոշ սահմաններ են գծում։ Կոմյերիտմիության ինքնագործունեությունը հարկավոր է այն չափով, ինչ չափով այդ ինքնագործունեությունը նպաստում է Կարմիր բանակի ամրացմանը։

Ամբողջ Կարմիր բանակի և նավատորմի մասշտաբով կոմյերիտմիության աշխատանքի ընդհանուր ղեկավարությունը պատկանում է Բ.-Գ. Կ. Բ. Քաղաքական Վարչությանը (ПУР), որն իրագործում է այդ հանձնարարության գալով ՀամԼԿՅԵՄ ԿԿ հետ։ Ռազմական շրջաններում (округ) և դիվիզիաներում նույնպես չեն ստեղծվում կոմյերիտմիության ընտրական որգաններ և միութենական աշխատանքը ղեկավարում են համապատասխան քաղորգանները—դիվիզիաների քաղբաժինները (Подив) և շրջանների քաղվարչությունները (Пуокр)։ Քաղորգանների ապպարատներում կան հատուկ աշխատակիցներ, որոնք վարում են միութենական աշխատանքը։

Քաղորգանները ՀամԼԿՅԵՄ աշխատանքի հարցերի նկատմամբ գործոն կապ են սահմանում ՀամԼԿՅԵՄ համապատասխան կոմիտեների հետ։

Զորամասերում կուսակցությանն աջակցող խմբակների ղեկավարությունն անմիջապես պատկանում է գնդի մասշտաբով—ՀամԿԿ(բ) գնդի բյուրոյին և վաշտի մասշտաբով—կուսբջիջի նախագահությանը. իսկ յեթե նախագահություն չկա—բջիջի քարտուղարին։ Աջակցող խմբակներն իրենց աշխատանքի համար հաշվետու յեն անմիջապես զորամասի կուսկազմակերպության առաջ։

Կոմյերիտմիության աշխատանքի կուսղեկավարությունը

զորամասերում իրագործվում է յերկու ձևով՝ ցուցումների ձևով, որոնք տրվում են աջակցող խմբակներին անմիջապես համապատասխան կուսկազմակերպությունների կողմից, և կոմյերիտմիության կուսկոմիտեի միջոցով։

Կուսբջիջների նախագահությունների և ՀամԿԿ(բ) գնդի բյուրոների նիստերին, ինչպես և ընդհանուր կուսժողովներում դրվում են վաշտային կազմակերպիչների և ՀամԼԿՅԵՄ գնդի բյուրոների զեկուցումները՝ աջակցող խմբակների աշխատանքի մասին, նույնպես և միութենական գործնական աշխատանքի կարևոր հարցեր, որոնց առթիվ հանվում են կոնկրետ ցուցումներ հետագա գործնական աշխատանքի մասին։ Աջակցող խմբակների ընդունած կոմյերիտմիության զորամասերում կատարելիք աշխատանքի պլանները քննվում և հաստատվում են համապատասխան կուսբջիջի նախագահության և ՀամԿԿ (բ) գնդի բյուրոյի կողմից։ Կուսբջիջի քարտուղարը ցուցումներ է տալիս կազմակերպչին աջակցող խմբակների աշխատանքի մասին, ընդվորում նրան ազատություն է տալիս հայտարարելու իր ձեռներեցությունը։ Մյուս կողմից ՀամԼԿՅԵՄ կազմակերպիչները բջիջի նախագահության և ՀամԿԿ(բ) գնդի բյուրոյի աշխատանքի մեջ են քաշվում։ ՀամԿԿ (բ) գնդի բյուրոյից և բջիջներից ներկայացուցիչներ են նշանակվում աջակցող խմբակների մեջ՝ կոմյերիտմիության աշխատանքն անցկացնելու մեջ մասնակցելու համար։ Շատ մեծ ոգուտ է բերում նույնպես թույլ պատրաստված կոմյերիտականներին զարգացած կուսակցականներին կցելը՝ անհատական պատրաստության և կուսդաստիարակության համար։

Բացի դրանից, կուսղեկավարության ամենից կարևոր փոխանցողները կոմյերիտմիության մեջ—դա կուսակցական-կոմյերիտականներն են։ Անկասկած, կոմյերիտմիության չափազանց մեծաթվական և կարևորագույն նվաճումը—այդ այն փաստն է, որ չնայած կոմյերիտմիության ընդհանուր բուռն աճման, կուսկորիզը նրա մեջ վոչ թե նվազել, այլ, ընդհակառակը, մեծացել է (1924 թ. հոկտեմբերի 1-ից մինչև 1926 թվի հուլիսի 1-ը) բացարձակ—5.842 մարդուց մինչև 30,891

մարդ, և հարաբերական—16,4%-ից մինչև 27%-ը։ Կոմյերիտմիության կուսակորիզը բանակում հաժարյա յերեք անգամ շատ է, քան թե միության քաղաքացիական կազմակերպությունների մեջ։ Անխուսափելի յե կուսակորիզի նաև հետագա մեծացումը։ Կուսակցական-կոմյերիտականներն այն ցեմենտն են, վոր կոմյերիտական մասսաներին միացնում է և նրանց գործունեությանը ուղղություն է տալիս։ Կուսակորիզի նշանավոր մասն իր պատրաստությամբ քիչ է տարբերվում ընդհանուր կոմյերիտական մասսայից։ Դրա համար ամենից կարևոր խնդիրն է հանդիսանում, կոմյերիտականներին հետագայում կուսակցության մեջ գրավելու հետ միասին, զորամասերում անցկացվող կուսակորիզի կուսակցական դաստիարակության և պատրաստության աշխատանքը։

Զափազանց խոշոր դեր է խաղում կոմյերիտմիությունը և այն տեսակետից, վոր իբրև պահեստ՝ կուսակամակերպությունը նրանից քաշում է նոր անդամներ։ Միությունը դարձել է կուսակազմակերպության հիմնական պահեստը։ Կուսակցության մեջ նոր մտնողների 50—55% և ավելի—կոմյերիտականներ են։ Ընդ վորում այս թիվը վոչ միայն չի նվազում, այլ, ընդհակառակը, աճում է։ Շատ հետաքրքիր և բնորոշ է այն փաստը, վոր բանակի կուսակազմակերպության անդամների մի յերրորդը կուսակցական-կոմյերիտականներ են։ Վոր կոմյերիտմիությունը կուսակցության պահեստն է, սրանից ել լավ իլլյուստրացիա հարկավոր չէ։

ՆԵՐՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Միութենական ժողովները կոմյերիտականների դաստիարակչական աշխատանքի ամենակարևոր ձևն են։ Միութենական ժողովներն այդ նշանակությունն ունեն վոչ միայն նրա համար, վոր այդ ժողովներում կոմյերիտականներին բացատրվում են կուսակցական ու միութենական կյանքի և աշխատանքի հարցերը, այլև նրա համար, վոր նրանք (ժողովները) կազմակերպում են կոմյերիտականների ինքնագործունեությունը, ուղղություն են տալիս նրանց գործնական աշխատանքին, հանդիսանում են ակտիվություն ցուցահանելու կարևոր մի վայր և այլն։

Զորամասերում միութենական ժողովները տարվում են կանոնավոր կերպով վաշտերում—յերկու շաբաթը մի անգամ, գնդում—ամիսը մի անգամ։ Ընդհանուր ժողովներում քննության են առնվում կոմյերիտականներին հետաքրքրող՝ կուսակցության և ՀամԼԿՅԵՄ կյանքի ու աշխատանքի հարցերը, ռազմական շինարարության հարցերը, զորամասի աջակցող խմբակների գործնական աշխատանքի հարցերը, զորամասի կենցաղի առանձին հարցերը, քաղլուսավորչական աշխատանքը զորամասերում։

Աջակցության խմբակների ամենից կարևոր խնդիրը զորամասում զինվորական դիսցիպլինան ամրացնելուն աջակցելն է։ Կոմյերիտականների այս խնդիրների կատարման լավագույն յեղանակը ՀամԼԿՅԵՄ կանոնագրքի պահանջները կատարելն է. «Կոմյերիտականը պետք է ուշադրությամբ ուսումնասիրի ռազմական գործը, Կարմիր բանակում և նավատորմում առաջինը լինելով ուսման մեջ, առաջինը լինելով կարգապահության մեջ, առաջինը լինելով մարտական գծի վրա»։

1925 թ. սկզբներին ՀամԼԿՅԵՄ IV համամիութենական կոնֆերենցիայում ընկ. Ֆրունզեն ասում եր. «Այստեղ պետք է մատնանշել, վոր հանձինս կոմյերիտմիության անդամների մենք նավատորմ և Կարմիր-բանակային այն իդեալը, վորի մասին յես մինչև այժմ խոսում եյի, դեռևս չունենք։ Ավելին. յես պետք է ասեմ, վոր կարգապահ լինելու տեսակետից կոմյերիտմիության անդամները վոչ միշտ անկուսակցական շարքային մասսաների առաջից են գնում։ Կարգապահության կողմից կոմյերիտմիության անդամները Կարմիր բանակում շատ հեռու յեն բավարարելուց այն պահանջները, վոր առաջադրում են կուսակցությունը, կոմյերիտմիությունն ամբողջապես և Կարմիր բանակի հրամատարությունը»։

Ընկ. Ֆրունզեյի այս հայտարարությունից հետո անցել է մի տարուց ավելի։ Կոմյերիտմիությունն իր աշխատանքի այդ ասպարիզում մի քանի հաջողություններ ունի, բայց միայն մի-

քանի։ Մենք բաղմաթիվ փաստեր ունենք 1925—26 թ. թ.-ից, նամանավանդ 1903 թ. ծնվածների զորակոչի սկզբներին, երբ կոմյերիտականները ճնացած կարմիր-բանակայինների համար որինակ չեին ծառայում։

Կարմիր բանակի կյանքի ու աշխատանքի պայմաններին ծանոթանալու և աջակցության խմբակների աշխատանքի հետևանքով կոմյերիտականների կարգապահությունն անդադար ուժեղանում է, կոմյերիտականների կողմից թույլ տված կարգապահության խախտման դեպքերը քչանում, սակայն նրանք, համենայն դեպս, քանակով քիչ չեն։

Աջակցության խմբակները պայքարում են ամեն տեսակ անկարգապահության դեմ կոմյերիտականների կողմից և տանում են խոշոր դաստիարակչական աշխատանք ինչպես կոմյերիտականների, նույնպես և անկուսակցական կարմիր-բանակայինների շրջանում՝ կարգապահության դերի ու նշանակության բացատրության նկատմամբ։ Կոմյերիտականների կարգապահության խախտման ավելի բնորոշ և լուրջ դեպքերը քննության են դրվում աջակցության խմբակների ժողովներում, և կոմյերիտականներին նշանակում են միութենական պատիժ։ Աջակցության խմբակները պետք է ամեն կերպ ոգնեն պետերի կազմին և կուսկազմակերպություններին՝ զինվորական կարգապահությունը զորամասում և առաջին հերթին կոմյերիտականների մեջ ամրացնելու համար։

Կոմյերիտականների քաղդաստիարակության հարցերն աչքի ընկնող տեղ են գրավում աջակցող խմբակների աշխատանքում։ Բացի ժողովներում քաղաքական հարցեր դնելուց, այդ աշխատանքը տարվում է և՛ կուսակցական և՛ միութենական քաղդպրոցներում։

Մեծ հաջողություններ են ձեռքբերված բանակում կուսլուսավորչական դպրոցների ցանցի ծավալման և այդ դպրոցները կոմյերիտականներին գրավելու առպարիզում։ 1925—1926 թվերին մենք բանակում և տորմիզում ունեցինք 2.804 միութենական դպրոց և 66.840 սովորող կոմյերիտական, որոնք Համկկ (բ) ամդամ չեին. I աստիճանի կուսդպրոցներ՝

2.085 և սովորողներ՝ 13.064. II աստիճանի կուսդպրոց՝ 1.233 և սովորող կոմյերիտականներ՝ 1.922։ Այս թվերի մեջ չեն հաշված կոմյերիտական-կուսակցականները։ Այսպիսով, կոմյերիտմիության համարյա բոլոր անդամները քաղգրագիտության դպրոցներն եին գրավված։ Ներկայումս 1926—27 թվին դպրոցների ցանցը նույնիսկ քիչ ավելի ընդարձակ կլինի։

Ներկայումս աջակցության խմբակներն ամենից կարևոր խնդիրն են դնում վոչ միայն իր ժամանակին բոլոր կոմյերիտականներին միութենական և կուսակցական դպրոցները գրավելը, այլ և այդ աշխատանքի վորակը լավացնելը—դպրոցներում ուսումն ավելի լավ հիմքերի վրա դնելը, ուսման հաջողության համար մեծ պատասխանատվություն դնելը հենց կոմյերիտականների վրա։ Մեծ ուշադրություն է դարձվում նույնպես կոմյերիտականների շրջանում ինքնակրթության աշխատանքի զարգացման վրա։

Աջակցության խմբակները կոմյերիտականների շրջանում տանում են և՛ կուլտուր-լուսավորական աշխատանք, ոգտագործելով լենանկյունը, գնդի ակումբը, կոմյերիտականներին զանազան ընկերությունների (խմբակների) մեջ քաշելով, վորոնք կազմակերպվում են դրանց կից, ինչպես, որինակ՝ հանրակրթական, գեղարվեստական, դրամատիկական և այլն։

Զորամասերում մեծ աշխատանք է կատարվում կոմյերիտական ակտիվի պատրաստության նկատմամբ՝ միութենական գործնական աշխատանքի համար։ Դրա համար կազմակերպվում են ՀամԼԿՅԵՄ կազմակերպիչների սեմինարներ և գնդի պրոպկոլլեկտիվներ։

Կազմակերպիչների սեմինարների հիմնական խնդիրն է՝ ակտիվը պատրաստել աջակցող խմբակների ամենորյա աշխատանքը ղեկավարելու համար։ Պրոպկոլլեկտիվների խնդիրն է՝ պատրաստել միութենական ագիտատորներ և պրոպագանդիստներ։ Պրոպկոլլեկտիվներում մշակվում են կուսակցության և կոմյերիմմիության աշխատանքի կարևորագույն հերթական հարցերը, կուսակցության և միության կողմից անցկացվող կամպանիաները, ռազմական շինարարության հարցերը, ագի-

տացիայի և պրոպագանդայի մեթոդի հարցերը։ Պրոպկոլլեկտիվի բոլոր անդամները պետք է ակտիվ մասնակցություն ունենան աշակցության խմբակների աշխատանքի մեջ։

Կոմյերիտականներն իրենց բայլշևիկական դաստիարակությունն ստանում են վոչ միայն գրքերից, քաղդպրոցների պարապմունքներին և այլն, այլև ակտիվ մասնակցություն ունենալով գործնական աշխատանքի մեջ։ Աշակցության խմբակներն իրենց ամեն մի անդամի վրա վորոշ պարտականություններ են դնում՝ աշխատանք զորամասի աշակցության խմբակի մեջ, հասարակական կազմակերպությունների մեջ, լենանկյան մեջ և այլն։

ԱՇԽԱՏԱՆՔ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Կարմիր բանակը դասակարգային բանվորա-գյուղացիական բանակ է. հենց դրանումն է նրա անգնահատելի հզորության աղբյուրը։ Կարմիր բանակի շինարարության հիմքում ընկած է վոչ թե մուշտան, վոչ թե դունչն ու պռունկը արյունլվա անելը, ինչպես բուրժուական բանակներում, այլ մարտիկների քաղաքական գիտակցությունը։ Այդ պատճառով Կարմիր բանակում տարվում է հսկայական աշխատանք կարմիր-բանակայինների քաղաքական ու կուլտուրական դաստիարակության վերաբերյալ։ Կարմիր բանակը մարտական խնդիրները վճռելուց դատ, իրենից ներկայացնում է մի տեսակ հսկայական հասարակական-քաղաքական դպրոց՝ յերիտասարդ բանվորների և գյուղացիների համար։ Այս ամբողջ հսկայական աշխատանքը կատարում է կոմկուսակցությունը իր բանակում ունեցած կազմակերպությունների և քաղապպարատների միջոցով։ Կարմիր բանակի զորամասերում կոմյերիտմիությունը հանդիսանում է կուսակցության հիմնական ոգնականը այդ աշխատանքում և ամենից կարևոր փոխանցողը՝ կուսակցության ազդեցությունը կարմիր-բանակայինների վրա տարածելու խնդրում։

Կոմյերիտմիությունն իր կազմի մեջ ունի 80–85% շարքային կարմիր-բանակայիններ, այն ժամանակ, յերբ կուսկազմակերպությունը մեծ մասամբ պետերի կազմից է։ Դրանով վորոշվում է կոմյերիտմիության խոշոր դերն անկուսակցականների շրջանում տարած աշխատանքի մեջ։ Անմիջապես զորանոցներում կուսակցական ազդեցությունը կարմիր-բանակայինների վրա նշանավոր չափով փոխանցվում է հատկապես կոմյերիտականների միջոցով, վորովհետև նրանցից ճնշող մեծամասնությունն ապրում է զորանոցներում, իսկ կուսակցականների մեծամասնությունը, ընդհակառակը՝ զորանոցներից դուրս։

Կարմիր-բանակայինների հետ տարվող քաղաքական պատրաստված կոմյերիտականները պետք է ոգնեն քաղդեկին կամ խմբակավարին՝ բացատրելով կարմիր-բանակայիններին անհասկանալի հարցերը, ակտիվ մասնակցելով զրույցին։

Քաղապպարատն ու կուսկազմակերպությունը կարմիր-բանակայինների շրջանում ընդարձակ աշխատանք են կատարում լենանկյուններում, վորոնք կազմակերպվում են յուրաքանչյուր վաշտում, գնդի ակումբում, զանազան հասարակական կազմակերպությունների մեջ, ինչպես, որինակ՝ ՄՈՊՐ, Ավիաքիմ և այլն։ Այս բոլոր աշխատանքի մեջ կոմյերիտականներն ամենաակտիվ մասնակցություն են ցույց տալիս։ Աշակցության խմբակներից նշանակվում են որապահ կոմյերիտականներ լենանկյուններում. սրանք անկուսակցականների հետ թերթերի ընթերցում են ունենում, զրույցներ են կազմակերպում, տեղեկանքներ են տալիս կարմիր-բանակայիններին սրանց հետաքրքրող հարցերի մասին և այլն։ Ակումբում կոմյերիտականները կուսակցականների հետ միասին կազմում են ամեն տեսակ ընկերությունների հիմնական կորիզը, ինչպես, որինակ՝ բնագիտական, թատերասերների և այլն, ոգնում են ակումբային աշխատանքի ծավալմանը։

Ավելի պատրաստված կոմյերիտականներն ամրացվում են անկուսակցական կարմիր-բանակայիններին անհատական աշխատանք տանելու համար. բացատրում են նրանց ՀԱՄԼԿՑԵՄ նպատակներն ու խնդիրները, նույնպես և կուսակցության և Խորհրդային իշխանության քաղաքականությունը։

Բացի դրանից, կուսակցությանն աշակցող խմբակները խո-

տացիայի և պրոպագանդայի մեթոդի հարցերը։ Պրոպկոլլեկտիվի բոլոր անդամները պետք է ակտիվ մասնակցություն ունենան աշակցության խմբակների աշխատանքի մեջ։

Կոմյերիտականներն իրենց բայշևիկական դաստիարակությունն ստանում են ոչ միայն գրքերից, քաղդպրոցների պարապմունքներին և այլն, այլև ակտիվ մասնակցություն ունենալով գործնական աշխատանքի մեջ։ Աշակցության խմբակներն իրենց ամեն մի անդամի վրա վորոշ պարտականություններ են դնում՝ աշխատանք զորամասի աշակցության խմբակի մեջ, հասարակական կազմակերպությունների մեջ, լենանկյան մեջ և այլն։

ԱՇԽԱՏԱՆՔ ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Կարմիր բանակը դասակարգային բանվորա-գյուղացիական բանակ է. հենց դրանումն է նրա անգնահատելի հզորության աղբյուրը։ Կարմիր բանակի շինարարության հիմքում ընկած է վոչ թե մուշտրան, վոչ թե դունչն ու պռունկը արյունլվա անելը, ինչպես բուրժուական բանակներում, այլ մարտիկների քաղաքական գիտակցությունը։ Այդ պատճառով Կարմիր բանակում տարվում է հսկայական աշխատանք կարմիր-բանակայինների քաղաքական ու կուլտուրական դաստիարակության վերաբերյալ։ Կարմիր բանակը մարտական խնդիրները վճռելուց զատ, իրենից ներկայացնում է մի տեսակ հսկայական հասարակական-քաղաքական դպրոց՝ յերիտասարդ բանվորների և գյուղացիների համար։ Այս ամբողջ հսկայական աշխատանքը կատարում է կոմկուսակցությունը իր բանակում ունեցած կազմակերպությունների և քաղապպարատների միջոցով։ Կարմիր բանակի զորամասերում կոմյերիտմիությունը հանդիսանում է կուսակցության հիմնական ոգնականը այդ աշխատանքում և ամենից կարևոր փոխանցողը՝ կուսակցության ազդեցությունը կարմիր-բանակայինների վրա տարածելու խնդրում։

Կոմյերիտմիությունն իր կազմի մեջ ունի 80–85% շարքային կարմիր-բանակայիններ, այն ժամանակ, յերբ կուսկազմակերպությունը մեծ մասամբ պետերի կազմից է։ Դրանով վորոշվում է կոմյերիտմիության խոշոր դերն անկուսակցականների շրջանում տարած աշխատանքի մեջ։ Անմիջապես զորանոցներում կուսակցական ազդեցությունը կարմիր-բանակայինների վրա նշանավոր չափով փոխանցվում է հատկապես կոմյերիտականների միջոցով, վորովհետև նրանցից ճնշող մեծամասնությունն ապրում է զորանոցներում, իսկ կուսակցականների մեծամասնությունը, ընդհակառակը՝ զորանոցներից դուրս։

Կարմիր-բանակայինների հետ տարվող քաղաքական պատրաստված կոմյերիտականները պետք է ոգնեն քաղդեկին կամ խմբակավարին՝ բացատրելով կարմիր-բանակայիններին անհասկանալի հարցերը, ակտիվ մասնակցելով զրույցին։

Քաղապպարատն ու կուսկազմակերպությունը կարմիր-բանակայինների շրջանում ընդարձակ աշխատանք են կատարում լենանկյուններում, վորոնք կազմակերպվում են յուրաքանչյուր վաշտում, գնդի ակումբում, զանազան հասարակական կազմակերպությունների մեջ, ինչպես, որինակ՝ ՄՈՊՐ, Ավիաքիմ և այլն։ Այս բոլոր աշխատանքի մեջ կոմյերիտականներն ամենաակտիվ մասնակցություն են ցույց տալիս։ Աշակցության խմբակներից նշանակվում են որապահ կոմյերիտականներ լենանկյուններում. սրանք անկուսակցականների հետ թերթերի ընթերցում են ունենում, զրույցներ են կազմակերպում, տեղեկանքներ են տալիս կարմիր-բանակայիններին սրանց հետաքրքրող հարցերի մասին և այլն։ Ակումբում կոմյերիտականները կուսակցականների հետ միասին կազմում են ամեն տեսակ ընկերությունների հիմնական կորիզը, ինչպես, որինակ՝ բնագիտական, թատերասերների և այլն, ոգնում են ակումբային աշխատանքի ծավալմանը։

Ավելի պատրաստված կոմյերիտականներն ամրացվում են անկուսակցական կարմիր-բանակայիններին անհատական աշխատանք տանելու համար. բացատրում են նրանց ՀԱՄԼԿՑԵՄ նպատակները ու խնդիրները, նույնպես և կուսակցության և Խորհրդային իշխանության քաղաքականությունը։

Բացի դրանից, կուսակցությանն աշակցող խմբակները խո-

շոր աշխատանք են անցկացնում անկուսակցականների շրջանում կոմյերիտմիությունը ժողովրդականացնելու համար՝ անկուսակցական կարմիր-բանակայիններին դեպի միութենական ժողովները, միութենական քաղդպրոցները գրավելու միջոցով, պատրաստված կոմյերիտականներին անհատական աշխատանք տանելու համար անկուսակցականներին ամրացնելու միջոցով, լենանկյուններում կոմյերիտական բաժիններ հիմնելու, պատանեկական շարժման հարցերի վերաբերյալ զրույցներ կատարելու միջոցով, պատի թերթերում կոմյերիտմիության բաժին վարելու, կոմյերիտական թերթեր ու ամսագրեր դուրս գրելու միջոցով և այլն։

Զորանոցը, զորամասի կենցաղը—այս բոլորը կարմիր-բանակայինների սրտին ամենամոտիկ հարցերն են։ Այստեղ աշակցող խմբակները կարող են և պետք է հայտաբերեն իրենց մաքսիմալ ձեռներեցությունը, ոգնելով պետերի կազմին և կուսակազմակերպությանը՝ զորանոցի կյանքը բարելավելու, զորամասի կենցաղի բացերը վերացնելու խնդրում։ Իրենք կոմյերիտականներն այս տեսակետից պետք է որինակ դառնան ամբողջ կարմիր-բանակային մասսայի համար։

Աշակցող խմբակների աշխատանքի ամենակարևոր հարցերն են՝ զորամասի կենցաղի, քաղաքական-լուսավորչական աշխատանքի հարցերը զորամասում, լենանկյունը, գնդի ակումբը և այլն։ Աշակցող խմբակներն իրենց կողմից ձեռք են առնում բոլոր անհրաժեշտ միջոցները քաղաքական-լուսավորչական աշխատանքի կատարելագործման և լավացման համար զորամասերում, քննության են առնում դրանց իրենց ընդհանուր ժողովներում և վճիռներ են կայացնում այն միջոցառումների մասին, որոնք աշակցող խմբակների կարծիքով անհրաժեշտ է ձեռք առնել այս կամ այն տեսակ աշխատանքի ուժեղացման և լավացման համար. վճիռներ են կայացնում այն խնդիրների մասին, որոնք դրվում են աշակցող խմբակի առաջ։ Իհարկե, այդ բոլոր վճիռներն աշակցող խմբակը չի գործադրում և չպետք է գործադրի կյանքում ինքնուրույն կերպով. նրանք պետք է անպայման հաստատվեն

կուսակազմակերպության կողմից, և միայն դրանից հետո կարելի է գործադրել կյանքում։ «Կոնկուրրենցիայի» և կուսակազմակերպությանը հակադրվող ամեն մի անառողջ յերևույթ պետք է վճռականորեն վերացվի։ Այսպիսով աշակցող խմբակները զորամասում իրենց անկուսակցականների շրջանում տարվող խոշոր աշխատանքը կատարում են կուսակազմակերպության ուղղակի, անմիջական ղեկավարության տակ։

Այս աշխատանքի հաջողության ամենալավ ապացույցը դեպի կոմյերիտմիությունը ունեցած մեծ ձգտումն է, կարմիր-բանակային մասսայի շրջանում նրա հեղինակության աճումն է։

ՔԱՂՈՐԳԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԱՋԱԿՑՈՂ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԿԱՊԸ ՀԱՄԼԿՅԵՄ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Քաղորգանները մշտական գործոն կապ են պահպանում ՀԱՄԼԿՅԵՄ տեղական կոմիտեների հետ, իրենց ներկայացուցիչները նշանակելով կոմիտեների մեջ խորհրդակցական ձայնի իրավունքով։

ՀԱՄԼԿՅԵՄ կոմիտեներն աշակցող խմբակների աշխատանքն անմիջապես չեն ղեկավարում։ Այդ ղեկավարությունն իրագործվում է քաղորգանների կողմից։ Սակայն այդ չի նշանակում, թե ՀԱՄԼԿՅԵՄ կոմիտեները չպետք է մասնակցություն ունենան կարմիր բանակի զորամասերում տարվող կոմյերիտական աշխատանքն իրականացնելու մեջ. ՀԱՄԼԿՅԵՄ կոմիտեները կարող են համապատասխան քաղորգանների, գնդի բյուրոների և ՀԱՄԼԿՅԵՄ կազմակերպիչների զեկուցումները լսել աշակցող խմբակների աշխատանքի մասին, կարող են կոմյերիտմիության աշխատանքի հետազոտում կատարել զորամասերում, նախորոք համաձայնվելով զորամասի քաղորգանների կամ կուսակազմակերպությունների հետ։ Զորամասերում տարվող կոմյերիտական աշխատանքի հարցերի վերաբերյալ ՀԱՄԼԿՅԵՄ կոմիտեները կարող են գործնական վորոշումներ հանել, բայց այդ վորոշումները պետք է գործադրեն կյանքում բացառապես զորամասերի քաղորգանները և կուսակազմակերպությունները և վոչ թե իրենք. այդ բոլոր հարցերը պիտի համաձայնեցնել վերջիններիս հետ։

ՀԱՄԼԿՅԵՄ կոմիտեները կարիք չեղած դեպքում իրենք ևս զեկուցումներ են տալիս ընդհանուր միութենական հարցերի և իր աշխատանքի մասին կոմյերիտմիության շրջանային և դիվիզիայի կոնֆերենցիաներում, քաղորգանների աշխատողների խորհրդակցություններում և աջակցող խմբակների ընդհանուր ժողովներում։

Քաղորգանների և կոմյերիտմիության կոմիտեների միջև աշխատանքի փորձի մշտական փոխանակության համար սահմանվում է միութենական աշխատանքի հարցերի վերաբերյալ դիրեկտիվների և պլանների փոխանակություն։

Զինվորական կոմյերիտականներն ակտիվ մասնակցություն են ունենում ընդհանուր միութենական և տեղական միութենական կյանքի մեջ, մասնակցելով միութենական ժողովներին, խորհրդակցություններին, հավաքումներին, կոնֆերենցիաներին և այլն։ Սակայն զինվորական կոմյերիտականների մասնակցությունը ՀԱՄԼԿՅԵՄ տեղական կազմակերպությունների աշխատանքներին այն չափով պետք է լինի, որ կոմյերիտականի զինվորական պարտականությունների կատարմանը չխանգարի։ Տեղական կազմակերպությունների աշխատանքի ու կյանքի կարևորագույն հարցերը քննվում են աջակցող խմբակներում։ ՀԱՄԼԿՅԵՄ կոմիտեներն իրենց կողմից տարվող խորհրդակցություններն են գրավում ՀԱՄԼԿՅԵՄ բջիջների քարտուղարներին, ՀԱՄԼԿՅԵՄ գնդի և վաշտի կազմակերպիչներին և ակտիվի խորհրդակցությանը—զորամասի կոմյերիտական ակտիվին։

Աջակցող խմբակները, բացի դրանից, մշտական անմիջական կապ են հաստատում ՀԱՄԼԿՅԵՄ քաղաքացիական բջիջների հետ, առավելապես արտադրական, բանվորական բջիջների հետ։ Այս կապը նրա համար է, որ զինվորական կոմյերիտականներն իրազեկ լինեն ամբողջ միության աշխատանքին և կյանքին և քաղաքացիական բջջի միջոցով ծանոթանան ձեռնարկությունների կյանքի ու աշխատանքի հետ. իսկ քաղաքացիական կոմյերիտականները կարողանան ավելի լավ ուսումնասիրել Կարմիր բանակի կյանքն ու կենցաղը և նրանում տարվող աշխատանքը։

Կուսակցությանն աջակցող խմբակների գլխավոր խնդիրը (կապի տեսակետից) ՀԱՄԼԿՅԵՄ քաղաքացիական կազմակերպություններին ոգնելն է՝ միության մեջ ռազմական պրոպագանդան դնելու գործում։ Այդ նպատակով աջակցության խմբակներն ոգնում են բջիջներին քաղաքացիական բջիջներին կից լենանկյուններում ռազմական բջիջներ, ռազմական գիտելիքների ընկերություններ կազմակերպելու, ծանոթացնում են կոմյերիտականներին Կարմիր բանակի կառուցվածքի հետ, նրա կուսակցական և կոմյերիտական աշխատանքի հետ և այլն։ Աջակցող խմբակը քաղաքացիական կոմյերիտականների այցելություն է կազմակերպում զորանոցները, ակումբները և այլն, վորպեսզի ինչպես հարկն է ծանոթացնի նրանց զորամասերում կարմիր-բանակայինի կյանքի և կենցաղի և Կարմիր բանակի զորամասերում տարվող աշխատանքի հետ։

ՀԱՄԼԿՅԵՄ քաղաքացիական բջիջներն իրենց հերթին պետք է ծանոթացնեն զինվորական կոմյերիտականներին, և սրանց միջոցով անկուսակցական կարմիր-բանակայիններին, արտադրության հետ՝ դեպի ձեռնարկություններն եքսկուրսիաների միջոցով և ոգնեն զորամասերում անցկացվող կոմյերիտական աշխատանքին. մասնավորապես ոգնեն լենանկյունում և ակումբում կոմյերիտական բաժնի սարքավորմանը՝ նրանց աշխատողներ ամրացնելու միջոցով։

Աջակցության խմբակի և քաղաքացիական բջջի միջև հաստատվող կապը մազաչափ անգամ չպիտի թուլացնի զինվորական կարգապահությունը կոմյերիտական կարմիր-բանակայինների շրջանում։ Քաղաքացիական բջիջները պետք է յուրացնեն կարգապահության դերն ու նշանակությունը Կարմիր բանակում և ամեն կերպ նպաստեն նրա ամրացմանը։

Ռ. ՄՈՒԿԼԵՎԻՉ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ՆԱՎԱՏՈՐՄԸ

I

ԽՍՀՄ զինված ուժերի գոյության IX տարեդարձին կարմիր նավատորմը մոտեցավ իր զարգացման նոր ետապին։ Մինչհեղափոխական ժամանակից մնացած նյութական ռեսուրսներն սպառված են, վերականգնված, հները նորով փոխված և վերակառուցված են համարյա բոլոր նավերը, որոնք քաղաքացիական պատերազմի վերջին մնացին հեղափոխության ձեռքին։ Իհարկե, վերականգնած և վերակառուցված են միայն այն տիպի նավերը, որոնք պահպանել էին իրենց լիակատար մարտական արժեքը և ներկայումս հանդիսանում են կատարելապես ժամանակակից և տեխնիկապես կատարելագործված նավեր։ Ծովային տեխնիկան զարգանում է այնքան արագ, որ նավերը նույնպես, ինչպես և սավառնակները, բարոյապես շատ ավելի արագ են ծերանում, քան ֆիզիկապես։ Այն, ինչ որ միանգամայն ժամանակակից էր յերեկ, հնացած ու անպետք է դառնում վաղը, շնորհիվ նոր գյուտերի և տեխնիկայի նոր նվաճումների։

Հաճախ է պատահում, յերբ որևե նավի վերակառուցման հենց պրոցեսի ժամանակ ստիպված են լինում միքանի անգամ վերաշինման պլանը փոխել և խոշոր փոփոխություններ մտցնել զինավորման և տեխնիկական սարքավորման մեջ։ Ներկայի մեր նակադրական ականանավերն իմպերիալիստական պատերազմի ժամանակների վերականգնած «Նովիկ»-ները են։ Կորպուսը մնացել է նույնը, բայց տակտիկական և տեխնիկական հատկություններն զգալի չափով փոխ-

վել են։ Այլ կերպ նրանց մարտունակությունը կասկածելի կլիներ։

Դրա համար նավատորմի վերականգնման պլանը մշակվել է չափազանց մեծ խնամքով և միքանի անգամ փոխվել է։ Բոլոր հնացածներն ու կասկածի տակ յեղածները նավատորմից դուրս են հանված, հեռացված և խոտանված։ Ցարական նախկին նավատորմը հարուստ էր ամեն տեսակ անմարտունակ և խանգարիչ անպետք բաներով։ Փոքրաթիվ լավ նավերի հետ շարքի մեջ պահվում էին ամեն տեսակ հնացած-անպետքացած բաներ, որ մարտի դուրս բերել չէր կարելի, որ ծանր բեռ էր միայն և միջոցների կորուստ։ Ժամանակակից նավատորմը տեխնիկապես շատ բարձր է կանգնած. սակայն նավորդը պահպանողական է, նա ամուր պահում է հին տրադիցիաներն ու սովորությունները, թեև նրանցից շատերը վաղուց կորցրել են իրենց իմաստը։ Դրա համար մեր նավատորմի կազմից որոնը լավ հատիկներից բաժանելու պրոցեսը չանցավ այնպես հարթ ու առանց դիմադրության։ Ցեվ հենց հիմա յել հեշտ չե շարքից հանել հին նավը։ Սակայն մենք այնքան հարուստ չենք, որ շարքում վատ նավեր պահենք։ Այս դրությունը ուղեցույց ստաց էր նրանց համար, ովքեր աշխատել են նավատորմի վերականգնման վրա, և այդ վերականգնումը տվել է իր հետևանքները։

Այժմ մենք ունենք վոչ մեծ, բայց ամուր, միանգամայն ժամանակակից նավերի կորիզ։ Վերականգնել ենք գծանավերի հիանալի բրիգադը, որ մեր թշնամիները դեռ այժմ էլ բնորոշում են, որպես «միակը աշխարհում իր մարտական հատկություններով»։ Վերականգնել ենք լիովին ժամանակակից նակադրային ականանավեր գեղեցկուհի—«Նովիկներ»-ը, շարքի մեջ են մտնում թեթև հածանավերը։ Մեր նավատորմը բավական չե բաց ծովում մարտ փնտռելու, նա ընդունակ չե հարձակվելու անգեն և թույլ ժողովուրդների վրա, ինչպես այդ անում են ժամանակակից իմպերիալիստական պետությունների մեծ նավատորմերը, սակայն նա ընդունակ է և կարող է հակահարված տալ այն թշնամուն, որը կհամար-

ձակվի սպառնալ մեր կուլտուրական ու արդյունաբերական կենտրոններին՝ Ֆիննական ծոցում կամ Սև ծովի ափերում։ Եթե մեզ այդ վիճակվի, նավատորմը կարդարացնի այն ծախսերը, որ յերկիրը կատարել է նրա համար։

Ոգտագործել հին ռեսուրսներն, այդ դեռ բոլորովին չի նշանակում, որ նավատորմի զարգացման թափը պետք է կանգ առնի։ Այն բոլորն, ինչ որ առաջ չի շարժվում, նա յետ է գնում։ Այս ամենից լավ կարելի յե կիրառել նավատորմի նկատմամբ։ Մեր արդյունագործությունը վերականգնման շրջանից անցնում է վերակառուցման շրջանը։ Սրա նման մի շրջան է, որ ապրում է մեր նավատորմը։ Մենք կիպ մոտենում ենք այս նոր շրջանին։ Նոր նավաշինության ծրագիր մշակելիս մենք պետք է յելակետ ունենանք յերեք նախադրյալ.

1. մենք այն ենք կառուցում և այն չափով, ինչ որ մեր գրպանին համեմատ է։ Մենք այնպիսի ծախսեր չենք անում և չենք անի, որ վնասակար կերպով անդրադառնա մեր յերկրի բյուջեյի վրա.

2. նավերի տիպեր ընտրելիս մենք յելակետ ունենք այն, որ մեր նավատորմը միայն պաշտպանողական խնդիրներ ունի կատարելու և վոչ հարձակողական.

3. կառուցման գործում մենք ամբողջապես և բացառապես ոգտվում ենք մեր արդյունագործությամբ, նրա տեխնիկական զորությամբ և մեր բանվորների ու ինժեներների արվեստով։

II

Նավատորմի գլխավոր ելեմենտը, ինչպես ամեն մի զինված ուժի, հանդիսանում է, սակայն, վոչ թե տեխնիկան, այլ մարդը—անձնական կազմը։ Այդ անձնական կազմը քաղաքացիական պատերազմի ժամանակ բավականին հալից ընկավ։ Ամենալավ նավորդները, որոնք անկեղծորեն նվիրված եյին հեղափոխությանը, պարբերաբար նավատորմից հեռացան և գնացին այնտեղ, որտեղ նրանց կարիքն ավելի մեծ եր, այսինքն՝ ցամաքային ճակատները։ Քաղաքացիական պա-

տերազմի վերջին նավատորմի անձնական կազմն այնքան թուլացավ և մանրացավ, որ հնարավորություն ստեղծվեց հակախորհրդային յելույթ կատարել նավատորմի գլխավոր բազա—Կրոնշտատում։ Այդ յելույթն այն նշանակությունն ունեցավ, որ վերջ տվեց լքմանը։ Ապստամբությունը ճնշելուց անմիջապես հետո սկսվեց առողջացման պրոցեսը։

Ցամաքային ճակատից նավատորմ վերադարձան շատ հին և ամրակազմ նավորդներ։ Սրանք գրավեցին կոմիսարական և հրամատարական պաշտոնները։ Խորհրդային տրամադրությամբ սպայությանը մաղի արանքներով անցկացրին։ Բոլոր հակահեղափոխականներին և կասկածելիներին քշեցին։ Այս ընտրությանը նպաստեց միայն մարտական փորձությունը, ինչպիսին Կրոնշտատի ապստամբությունն եր։ Վերակազմվեցին ամուր միջոցով ստացած կուսակցական կազմակերպությունները։ Ուշադրություն է դարձված ծովային դպրոցների և ծո-

Թվականը և հավաքման կարգը	Ըստ սոցիալական դրության				Ըստ կուսակցության					Ըստ դրագիտության			
	Բանվոր	Գյուղացի	Այլք	Ընդամենը	Համ կկ (բ) անդամ	Համ կկ (բ) թեկնածու	Համ ԼԿՅՄ անդամ	Անկուսակցական	Ընդամենը	Գրագետ	Կիսագրագետ	Անգրագետ	Ընդամենը
ՌԿՅԵՄ 1922 թ. աշնան հավաքումին %%-ով	71,6	26,8	1,6	100,0	10,1	0,6	88,6	0,7	100,0	98,2	1,7	0,1	100,0
ՌԿՅԵՄ 1923 թ. աշնան հավաքումին %%-ով	76,2	21,3	2,5	100,0	3,0	5,2	90,4	1,4	100,0	99,9	0,1	—	100,0
1924 թ. աշնան հերթական զորակոչին %%-ով	34,0	64,4	1,6	100,0	1,1	4,5	32,0	62,4	100,0	62,8	34,8	2,4	100,0
1925 թ. աշնան յերկրորդ հերթական զորակոչին %%-ով	49,5	47,7	2,8	100,0	3,9	7,7	31,1	57,3	100,0	71,0	27,7	1,3	100,0
1926 թ. աշնան յերրորդ հերթական զորակոչին %%-ով	53,9	39,8	6,3	100,0	5,7	5,6	27,9	60,8	100,0	85,5	13,3	1,2	100,0

վային ակադեմիաների կանոնավոր հավաքման վրա։ Հառաջադիմությունը վոչ թե որերով, այլ ժամերով եր կատարվում։

Նավատորմի առողջացման հիմնական, վճռական ժամենը դարձավ ՌԿՅԵՄ համառուսական 1922 թ. 16/X 5-րդ համագու-

մարի վորոշումը ռազմա-ծովային ուժերի շինարարության աշխատանքն ուժեղացնելու մասին։ Այդ մոժենտից մենք տեսնում ենք կոմյերիտմիության կազմակերպությունների անշեղ և արագ աճում նավատորմում, լրացման համար յեկածների վորակի բարձրացում, կարմիր-տորմիղայինների ակտիվության աճում ու հեղափոխական գիտակցության բարձրացում։

Զորակոչիկների կազմը նավատորմում 1922—25 թ. թ. հետևյալ պատկերն ուներ (տես աղյուսակը, եջ 69)։

Բնական ե, վոր 1924—26 թ.թ. կանոնավոր զորակոչները ավել են կոմյերիտականների ավելի փոքր տոկոս, քան թե ՌԿՅԵՄ 1922 և 1923 թվերի հավաքումը. բայց և կարիք եկ չի յեղել կուսակցականների այդպիսի բարձր տոկոս պահելու։

Անալոգիկ պատկեր ե տալիս մեզ ռազմածովային դրոշների ընդունելությունը.

	1923 թ. %%-ով	1924 թ. %%-ով	1925 թ. %%-ով	1926 թ. %%-ով
Համ ԿԿ (բ) անդամներ	25,2	18,7	24,1	35,5
Կոմյերիտականներ	53,5	75	61,9	54
Պատանի լենինցիներ	—	—	5,2	—
Անկուսակցականներ	21,4	6,3	8,8	10 5

Կարմիր-նավատորմիղայինների սոցիալական կազմի լավացման այդ պրոցեսսը լիովին տարածվում ե հրամատարական

	1922 թ. %%-ով	1923 թ. %%-ով	1924 թ. %%-ով	1925 թ. %%-ով	1926 թ. %%-ով
Ըստ ծագման					
Բանվոր	8,4	11,6	13,2	14 5	15,7
Գյուղացի . . .	20,4	28,1	33,2	35,4	35,9
Այլ	71,2	60,3	53,6	50,1	48,4
Ըստ կուսակցության					
Համ. Կ. Կ. (բ) անդամներ և թեկնածուներ	6,5	8	25	26,7	30 3
Համ. Լ. Կ. Յե. Մ. անդամներ .	—	—	—	0 5	0,9
Անկուսակցական . . .	93,5	92	75	72,8	68,8

ական կազմի վրա, վորը կարելի յե յեզրակացնել հետևյալ աղյուսակից (տես եջ 70, 2-րդ աղյուսակ)։

Այսպիսով՝ կուսակցական կազմակերպությունները 1926 թվին իրենց մեջ են քաշել նավատորմի ամբողջ անձնական կազմի համարյա կեսը։

Այդպիսի հագեցումը նույնիսկ, կարելի յե ասել, ավելորդ ե, վորովհետև կոմկուսակցության ազդեցությունը անկուսակցական մասսայի վրա շատ մեծ ե, և ըստ եության անկուսակցական կարմիր-տորմիղայինի կամ նրա կուսակցական ընկերոջ կամ կոմյերիտականի մեջ վոչ մի տարբերություն չկար։ Անթույլատրելի ճոխություն կլիներ, յեթե հետագայում ել ձգտելինք պահել այդ դրությունը հաջորդական զորակոչերի ժամանակ։ Այդ առատությունը պետք ե կիրառել կոմյերիտականների և կուսակցականների նկատմամբ կարմիր բանակի ցամաքային մասերում, վորտեղ կուսկազմակերպությունները թվով ավելի քիչ են, քան նավատորմում։

Այսպիսի վորակյալ և քաղաքականապես զարգացած կարմիր-տորմիղայինների կազմը պահանջում եր խելացի և հեղինակավոր ղեկավարություն հրամատարական կազմի կողմից։ Այնինչ վերջինս, հատկապես ավագ և բարձր հրամկազմի նշանավոր մասը վոչ միայն անկուսակցական եր, այլև քաղաքականությունից միանգամայն հեռու յեր, մանավանդ 1926 թ.։ Դրա համար կարմիր-տորմիղային մասսայի ամբողջ ղեկավարությունը, բնականորեն, գտնվում եր հեղինակություն ունեցող քաղաքական կոմիսարների և քաղորդաններ ի ձեռքին։ Այստեղից մի փոքր սառնություն եր նկատվում հրամատարի և կարմիր-տորմիղայինի միջև, այստեղից մի ճեղք եր բացված հրամատարի և կարմիր-տորմիղային մասսայի միջև, այստեղից հրամատարի դերի ու նշանակության թերագնահատումն եր Կարմիր նավատորմի շինարարության գործում։

Բանվոր ու կոմյերիտական պատանեկությունը նավատորմ գալով՝ իր հետ բերեց գործարանի կոլեկտիվ աշխատանքի, գործարանի դիսցիպլինայի փորձը։ Այս շատ հարմար ժամանակին եր, վորովհետև նավերը մեծ մասամբ գտնվում

եյին կիսաշինման կամ հիմնական վերանորոգության մեջ։ Բանվոր կարմիր-տորմիզայինը ռազմա-ծովային ծառայության կանչվելով առանձին փոփոխություն չզգաց իր կյանքի սովորական պայմանների հետ համեմատած։

Ուրիշ բան եր, յերբ նավերը շարք դուրս յեկան և սկսեցին ամենորյա տակտիկական ուսումները։ Ծառայությունն ու կյանքը նավի վրա մարտական պայմաններում չափազանց ծանր ե։ Լողալու և ուսուցման պայմանները մոտիկ են կամ մոտիկ պետք ե լինեն մարտական իրական պայմաններին։ Այստեղ հարկավոր ե բոլոր մեխանիզմների աշխատանքի լիակատար և անշեղ ճշտություն, այստեղ պահանջվում ե ֆիզիկական և բարոյական ուժերի կատարյալ լարվածություն, իր զգացմունքների ու պահանջների, իր ամբողջ «յես»-ի հպատակեցումը ընդհանուր խնդրին, հրամատարության միասնական կամքին։ Այստեղ արդեն գործարանի դիսցիպլինան քիչ ե, այլ հարկավոր ե ռազմական դիսցիպլինա. անձրևի ու վատ յեղանակի, ծովի փոթորկի ու մրրկի ժամանակ որ ու գիշեր հարկավոր ե անձնազոհությամբ կատարել իր պարտականությունները, առանց առարկելու յենթարկվել պետերի կամքին։ Այստեղ հրամատարի դերը չափազանց մեծ ե, նրա ձեռքին ե ամբողջ նավը հարյուրավոր և հազարավոր կյանքերով, դրա համար ել նրան մեծ իշխանություն ե տրված։ Ցեվ ահա աշխատանքի դիսցիպլինայից ռազմական դիսցիպլինային անցնելու մոմենտը այնքան ել հեշտ չեր։ Ամեն մի առանձին կարմիր-տորմիզային պիտի խոշոր աշխատանք կատարեր իր անհատականության, իր իրավունքների ինքնասահմանափակման այդ անհրաժեշտությունը գիտակցելու համար՝ հանուն ամբողջ բանվոր դասակարգի, ամբողջ աշխատավոր մասսայի շահերի։ Անհրաժեշտ եր բարձրացնել հրամատարի հեղինակությունը և իր արժանի բարձրության վրա դնել։ Աշխատանքը բարդացավ նաև այն հանգամանքի շնորհիվ, վոր կոմյերիտական մասսան առաջուց պատրաստված չեր այդքան ծանր և պատասխանատու ծառայության համար, ինչպիսին հանդիսանում ե նավատորմի ծառայությունը։ Հավաքագրման (вербовка) ժամանակ

պատվաստվում եր այն հայացքը, թե նավատորմի ծառայությունը մի անբավ հաճույք ե,—հնարավոր ե մասնագիտություն ձեռք բերել, լինել արտասահմանում, իր կուլտուրական մակարդակը բարձրացնել, ուսումնասիրել ծովային բնության գեղեցկությունները և այլն։

«Տղերքը լողում են, լինում են արտասահմանում, զվարճանում են, ծովի վրա հիանում են ամառային աստղազարդ գիշերվա գեղեցկությամբ»,—ահա թե ինչ եյին խոսում ռազմա-ծովային ծառայության մասին։ Իսկ մեդալի հակառակ կողմը—ծառայության դժվարությունն ու յերկարատևությունը, ռազմական գործի խստագույն պահանջները և դիսցիպլինան—հայտնի չեյին, նրանց մասին մոռացել եյին։ Սրա հետևանքը այն յեղավ, վոր շատերի մեջ առաջ յեկավ միքիչ հիասթափում և նավատորմիզային կյանքի մասին ունեցած հայացքի բեկման անհրաժեշտություն։

Շարքում վորքան ավելանում եր նավերի թիվը, վորքան շատ հնարավորություն եր ստեղծվում նավատորմում սովորել ու լողալ, այնքան արագ կերպով մեր նավորդների առավելյա ու «վոչ զինվորական» տրամադրություններն անհետանում եյին։ Շատ բնորոշ ե ընդգծել, վոր մեծ յերթերի ու կորաշարժերի շրջաններում, վորոնք պահանջում են ավելի շատ լարվածություն ու ճիգեր նավերի ամբողջ եկիպաժի կողմից, նկատվում եր հանցանքների կրճատում և նավաստիների մեջ վոգևորություն։ Նկատվում եր մեծ հետաքրքրություն և սեր դեպի յերթերը։ Այնինչ մեր յերթերը այնքան ել հեշտ չեն։ Վառելիքին և յուղելու նյութերին հաշվով վերաբերմունքը հարկադրում ե ամեն տեսակ պարապմունքներ կիրառել, ինչպես ասում են «մինչև վերջին կեռը»։ Անձնական կազմի համար հեշտ չե, բայց դուք տեսեք, թե ինչպես նրանց տրամադրությունը բարձր ե։ Այս յերևույթը զարմացնում ե հին, շատ բան տեսած ծովային սպաներին։

Մեր կարմիր նավատորմում ընկճվածության ու յերկչոտության լիակատար բացակայությունը պետերի առաջ—զարմացնում ե ամենքին։ Վոչ թե աշխատում են խուսափել պե-

ից, ինչպես այդ անում են բոլոր նավատորմիղների նավատիները, այլ, ընդհակառակը, աշխատում են նրա աչքին լերևալ, խոսակցության բռնվել նրա հետ, վորևե նոր բան իմանալ նրանից։ Ես շատ նավատորմիղայիններ հետ եմ խոսել, հարց ու պատասխանի բազմաթիվ յերեկոներ եմ կազմակերպել նավերի վրա, և ամեն տեղ ել նույն պատկերը,—մեծ հետաքրքրություն դեպի միջազգային հարցերը, մեր յերկրի տնտեսական զարգացման հարցերը, դեպի ինքնակրթության հարցերը և աննշան հետաքրքրություն դեպի ամենազգային հարցերը։

1926 թ.-ի պահեստ արձակված կարմիր-տորմիղայինների շրջանում, Սև-Ծովյան Նավատորմի Քաղաքական Վարչության կողմից հավաքած անանիմ անկետան ցույց տվեց, որինակ, վոր 99,8% մշտական թերթ կարդացողներ են, վոր մոտ 75% ակտիվ մասնակցություն ունեն հասարակական կազմակերպությունների աշխատանքի մեջ, վոր նավատորմ են մտել վորպես հավատացողներ 37,3%-ը, այնինչ դուրս են գնացել 6,7%, վոր 70,4% իրենք իրենց զգում են պատրաստված ինքնուրույն կերպով հասարակական աշխատանք տանելու և այլն, և այլն։

Այս բոլորն ապացույց է մեր նավատորմի անձնական կազմի հսկայական աճման. այս աճումը հնարավոր յեղավ, գլխավորապես, շնորհիվ այն ուշադրության, վորը որեցոր և տարեցտարի մեր կոմյերիտմիությունն ու նրա կենտրոնական Կոմիտեն դարձնում եյին մեր նավատորմի վրա։

III

Կարելի՞ յե արդյոք նավատորմի նվաճումներն այժմ բավարար համարել։ Հնարավոր է բավարարվել միայն նրանով, ինչ վոր կա, և ձեռքերը ծալել ու նստել։—Իհարկե վոչ։ Նավատորմ չի կարելի ստեղծել վոչ մի տարում և վոչ ել միքանի տարում։ Նավատորմը ուժեղ լինելու համար հարկավոր է մշտական և հատուկ աշխատանք, մշտական նյութական միջոցների ու բարոյական ուժերի ծախսում։

Այնինչ վոչ բոլորի կողմից է այդ գիտակցվում բավարար չափով։ Մենք վերջին ժամանակներս նկատում ենք աշխատանքի թուլություն և՛ կոմյերիտմիության գծով։ Շեֆական կապը, վորը մեծ նշանակություն է ձեռք բերել և բարենպաստ ազդեցություն է թողնում նավատորմի անձնական կազմի վրա և այն կոմյերիտականների վրա, վորոնք դազդյոհի մոտ են կանգնած և զինվորական ծառայությունից դուրս են, դյուղում են գտնվում,—այդ կապն սկսել է թուլանալ։ Մենք լսում ենք կարմիր-տորմիղայինների բողոքներն իրենց վրա քիչ ուշադրություն դարձնելու դեմ, բողոքներ այն բանի դեմ, վոր նավերին ամրացրած կազմակերպությունները հաճախ չեն հետաքրքրվում իրենց վրա վերցրած պարտականություններով, վոր կազմակերպչական տեսակետից շեֆական աշխատանքի մեջ կան շատ բացեր։ Վոմանք սկսում են խոսել այն մասին, թե կոմյերիտմիությունը նավատորմի վերաբերմամբ իր գործն ավարտել է, և վոր շեֆությունը կարելի յե վերացնել։ Մենք վոչ մի դեպքում չենք կարող համաձայնվել հարցի այսպիսի դրումին։ Յեթե կոմյերիտմիության կապը նավատորմի հետ խզվի կամ թուլանա, այն ժամանակ մենք ռիսկ ենք անում կորցնելու այն նվաճումները, վորոնք մենք ձեռք ենք բերել։ Յեվ իսկապես, նավատորմն այժմ է միայն, վոր սկսում է ապրել իր լիակատար կյանքով։ Միայն այժմ է, վոր տեխնիկական դրությունն ու նյութական ապահովությունը թույլ են տալիս մեզ ինչպես հարկավորն է ծանրանալ ուսուցման վրա։ Միայն այս տարվանից է, վոր մենք սկսում ենք նավատորմ ընդունել այն յերիտասարդ հրամատարներին, վորոնց մեզ տալիս է կոմյերիտմիությունը։ Այս բոլորը պահանջում են մեծ ուշադրություն դարձնել անձնական կազմի վրա և նրա՝ մեր կուսակցական ու կոմյերիտական կազմակերպությունների հետ ունեցած հաստատ կապի վրա։ Նավատորմը չպետք է կտրված լինի ամբողջ յերկրից։ Նա պետք է իմանա, թե ինչով է ապրում յերկիրը, ինչ կարիքներ ունի նա և ինչ նվաճումներ է նա արել։ Այս բոլորը հնարավոր է միայն նավատորմի քաղաքացիական ազգաբնակության հետ սերտ կապ պահպանելու պայմաններում։ Իսկ այս կապը հեշտությամբ կարելի յե իրականացնել շեֆական կազմակերպությունների ոգնությամբ, այն շեֆական կա-

պի ոգնությամբ, որն արդեն կարգավորված է, որն արդեն գոյություն ունի։

Այս տարի առաջին անգամն էր, որ առափնյա պաշտպանության զորամասերը լրացվեցին հարկավոր չափով կոմյերիտականներով։ Ցոմյերիտականները դժվարությամբ գնացին այդ զորամասերը։ Նրանք բավարարված չզգացին իրենց, որովհետև նրանք բոլորը ցանկանում էին նավի վրա ծառայել. ուզում էին լինել իսկական նավորդներ, որոնք լողում են ջրում և ոչ թե նստում են ափում։ Այնինչ մեր անձնական կազմի մեծ մասը հարկադրված է լինել ափում, նավատորմի առափնյա զորամասերում և առափնյա պաշտպանության զորամասերում։ Ցեվ մենք նույնիսկ անհատ կոմյերիտականներից բողոքներ ստացանք պատանեկության անկանոն ոգտագործման դեմ։ Մենք դեռևս թերություններ ունենք նաև մեր զինվորական կարգապահության մեջ, ունենք զանազան պակասություններ, որոնց պետք է վերացնել։ Դեռևս գոյություն ունի այն կարծիքը, թե նավատորմի ծառայությունը մի ուրախ ժամանց է։

Այս բոլորը պետք է կարճ ժամանակում արմատախիլ անել, և այս բոլորը կարելի չէ վերացնել կոմյերիտմիության կարմիր-տորմիդալինների, նավատորմի հրամատարների, նրա կուսակցական ու քաղաքական կազմակերպությունների հետ սերտ կապ հաստատելու պայմանով միայն։

Քիչ կարևոր խնդիր չէ նույնպես հետագայում մեր ծովային դպրոցների համալրման վրա ուշադրություն դարձնելը։ Ցեկող տարվանից մենք մտածում ենք մի քանի փոփոխություններ մտցնել այդ դպրոցների համալրման կարգի մեջ։ Մենք մտածում ենք սահմանափակել բաշխման սկզբունքը և տեղ տալ կամավոր համալրմանը։ Ցանկալի չեր, որ ամեն մի կոմյերիտական, յուրաքանչյուր գյուղացի մուտք ունենար ռազմա-ծովային դպրոցները, անկախ նրանից, թե նա հատկապես այդ պունկտում է գտնվում, որտեղ հավաքագրում է կատարվում ըստ բաշխման, թե այդ պունկտից դուրս է։ Ընդունելության կարգի այս փոփոխությունը մեծ ուշադրություն է պահանջում կոմյերիտական կազմակերպությունների կողմից։ Այստեղ պետք է տեղի ունենա ոչ թե հասարակ բաշխում, այլ մեծ աշխատանք նավատորմի և ռազմա-ծովային դպրոցների ժողովրդականացման տեսակետից։ Կոմյերիտական կազմակերպություններն առաջին հերթին պետք է արձագանգ տան այդ հարցին։ Նրանք պետք է համապատասխան կամպանիա տանեն և ղեկավարեն այն։ Մենք կցանկանայինք, որ մուտքը ռազմա-ծովային դպրոցները բաց լիներ ոչ միայն Լենինգրադում, Մոսկվայում և այլ խոշոր բանվորական կենտրոններում ապրողների համար, այլև նրանց համար, որոնք բախտի բերմամբ գտնվում են մեր լերկրի քիչ ականավոր պունկտերում։

Բանվորներով և գյուղացիներով համալրված ծովային դպրոցները նույնպես մշտական ուշադրություն են պահանջում շեֆական կազմակերպությունների կողմից։ Այստեղ հարցը այնքան նյութական ոգնության մեջ չէ, որքան բարոյական սերտ կապի մեջ,— գրականության, ոչ-պարբերական հրատարակությունների, թղթակցության, եքսկուրսիաների նայլն փոխանակության մեջ։

Քաղաքացիական ազգաբնակության շրջանում լիակատար չափով պահպանել է իր նշանակությունը և նավատորմի ժողովրդականացման հարցը։ Մենք ծովային պետություն չենք, և, իհարկե, ծովը ու ծովային հարցերը մեզանում այնպես մեծ դեր չեն խաղում, ինչպես Մեծ-Բրիտանիայում և Ցապոնիայում։ Բայց մենք ցամաքային պետություն ել չենք։ Մեր ծովային սահմանները չափազանց մեծ են. մեր ծովային առևտուրն ունի, և կունենա խոշոր նշանակություն։ Դրա համար ել ազգաբնակությունը պետք է ծանոթ լինի նավատորմի և ծովային հարցերի հետ։ Միայն այս տարի Աշխատանքի և Պաշտպանության Խորհրդի կողմից ընդունվեց մեր առևտրական նավաշինության հնգամյա պլանը։ Պահանջվում են ոչ միայն բանվորներ ու ինժեներներ, որոնք պետք է նավեր շինեն, այլև փորձված նավորդներ, որոնք պետք է ղեկավարեն շինած նավերն ու սպասարկեն նրանց։

Այս նավորդների մի նշանավոր մասը կարող է տալ ռազմա-ծովային նավատորմը և նա պետք է հավաքի այդպիսի կոնտինգենտ այն նավորդների շրջանից, որոնք իրենց բախտը կապել են ծովի հետ, սիրել են նրան և ուզում են իրենց ամբողջ կյանքը նրան նվիրել։ Իսկ նավորդ լինելու համար հարկավոր է ունենալ ոչ միայն կրթական համապատասխան պատրաստություն և վորակ, այլև կոչում, բնական ձգտում։ Կոմյերիտական կազմակերպություններն են, որ պետք է այդպիսի կոչումով, այդպիսի ծովային ավյունով մարդիկ գտնեն ու տան մեզ։

Նավատորմի հետ ունեցած կենդանի կապի գծով նավատորմի յենթաշեֆ նավի ծանոթությունը պետք է տեղի ունենա ոչ թե տոների ժամանակաշրջանում, ոչ թե կոնֆերենցիաներին ու այլ հանդիսավոր ցերեմոնիալներին հարմարեցնելով, այլ սովորական լի որերին, գործոն աշխատանքի պայմաններում։ Միայն նման հանգամանքներում կարելի է հարկավոր տպավորություն ստանալ նավի մասին, նրա վրա կատարվող աշխատանքի մասին։ Իսկ մենք շահագրգռված ենք, որ նավատորմի մասին այն պատկերացումը, որ բանվորական մասսան ունի, լիակատար կերպով համապատասխանի իրականությանը։

IV

Մեր բուրժուա հարևաններն ուշադրությամբ հետևում են մեր նավատորմի զարգացմանն ու գործունեությանը։ Շատ ժամանակ չէ՝ մենք կարդացինք ոտարազգի մամուլի մեջ ակնհայտնի չափազանցրած տեղեկություններ մեր նավատորմի մասին, որ մենք Սև ծովում 85 սուզանավ ունենք, թե իբր մեզ են հանձնել Բալթիկ ծովում Գերմանիայի կողմից իմպերիալիստական պատերազմի ժամանակից թաղցրած բոլոր մեծ սուզանավերը, որ մեզ մոտ կառուցվում են նոր գծանավեր և այլն. կամ արհամարհական կարծիք այն մասին, թե մեզ մոտ ոչ մի հառաջադիմություն չկա, և որ նավատորմն այժմ ել այն դրության մեջ է, ինչ դրության մեջ 1922 թ. ել և այլն։

Միայն ամենավերջին ժամանակ մենք հանդիպում ենք

մի շարք կարծիքների, որոնք մեր նավատորմի դրության մասին ավելի լուրջ են խոսում։ Եստոնական «Պյավալեխտ» թերթը անցյալ տարի դեկտ. 5-ին մի մեծ հոդված գրեց նավատորմի մասին։ Թերթը խմիջի այլոց գրում եր հետևյալը. «Քաղաքացիական պատերազմի վերջանալուց անմիջապես հետո Խորհրդային կառավարությունը յեռանդուն կերպով սկսեց կարգի բերել իր նավատորմը։ Բոլորովին անպետք համարված հին հածանավերը ծախվեցին գերմանացիներին,—ավելի նորերը վերանորոգված են։ Անձնական կազմի համար բացվել են համապատասխան կրթական հաստատություններ։ Բացի դրանից, ծառայության են կանչվել կենդանի մնացած նախահեղափոխության ժամանակի սպաներն ու նավաստիները։ Այսպիսի յեռանդուն աշխատանքի հետևանքով կարմիր նավատորմն սկսեց լավագույն վիճակ ընդունել։ Նավատորմի լավացման արտաքին նշանն այդ այն հանգամանքն է, որ 1922 թվից ամեն ամառ ռազմափորձեր կատարող նավերի թիվը քանի գնում շատանում է»։

Մոտավոր ճշտությամբ մեր նավերի հաշիվն անելով, թերթը յեզրակացնում է. «Մենք գիտենք Խորհրդային կառավարության բարեկամական վերաբերմունքի մասին դեպի փոքր ազգերը, մենք գիտենք, որ Ռուսաստանը այժմ պատերազմել չի ցանկանում։ Այս թույլ չի տալիս նրա և՛ ներքին քաղաքականությունը, և՛ Ռուսաստանի տնտեսությունը։ Սրանից մենք յեզրակացնում ենք, որ կարմիր նավատորմը մեզ համար, փոքր ազգերի համար հանդիսանում է այնպիսի հարևան, որի կողմից մեզ անմիջական վտանգ չի սպառնում»։

Այսուամենայնիվ, չնայած այս հաստատ խոսքերին, թերթը իր մեծ անհանգստությունն է հայտնում կարմիր նավատորմի աճման հանդեպ և յեզրակացնում է, որ Ազգերի Լիգայի նավատորմը (այսինքն՝ խոշոր իմպերիալիստական տերությունների) մեծ հետաքրքրություն է առաջ բերում փոքր յերկրների համար, և որ նա շատ հեշտությամբ կարող է ոգնության հասնել փոքր պետություններին անհրաժեշտ դեպքում։ «Ծովային խոշոր պետությունների ռազմական նավա-

տորմը միշտ պատրաստ է մեկնելու այլ վայրեր։ Նավախմբերը մի ծովից մյուս ծովն են անցնում դուտ վարժական նպատակով։ Դրա համար նավատորմի մասերի այստեղ ուղարկելը կապված չէ առանձին ծախսերի հետ, և այդ հեշտ է իրագործել և՛ տեխնիկապես»։ Ամբողջ հարցի ելությունը վերջին նախադասության մեջ է։ Իրոք, նավատորմերը ներկայացնում են վորպես հզոր միջոց նրանց ձեռքում, ովքեր տիրապետում են նրանց, և մենք, իսկապես, վոչ մի յերաշխիք չունենք, վոր մի գեղեցիկ որ խոշոր պետությունների ռազմական նավերը չեն հայտնվի մեր ափերում. կարող է պատահել, վոր դա ցույցի համար լինի, կարող է և ավելի լուրջ մտադրություններով լինի։ Եստոնական թերթը միանգամայն արդարացի յե համարում, վոր մեր մտադրությունն ու մեր շահերը չեն պահանջում հարձակվել մեր հարևանների վրա. չնայելով դրան, մեզ միշտ ուզում են հասկացնել, վոր ծովերում կան ավելի ուժեղ նավատորմեր, և վոր այդ նավատորմերը, ամենից առաջ, պատկանում են այնպիսի պետությունների, վորոնք Ագգերի Լիգայի մեջ են մտնում և յերկրորդ՝ կարող են շատ արագ կերպով հայտնվել այնտեղ, վորտեղ նրան ամենից քիչ են խնդրում։

Մենք սովորել ենք այս վոչ յերկիմաստ հայտարարություններին։ Վերջին ժամանակներս մենք հնարավորություն ունեցանք ամբողջ մի շարք փաստեր արձանագրել, վորոնք խոսում եյին այն մասին, թե մի վոմն ուժեղ ծովային պետություն չի մոռանում այն ճանապարհները, վորոնցով Անտանտայի նավերն են անցել 1918—19 թ. թ.։ Մենք ամեն տարի տեսնում ենք անգլիական նավերի նավախումբը Սև ծովում,— 1925 թվին «Դրոդոն» և «Ֆրոբիշեր», 1926 թ.—«Դանե» և «Դաունլես»-ին։ Մենք ամեն տարի տեսնում ենք ֆրանսիական և անգլիական նավախմբերին Բալթիկ ծովի ջրերում։ Այդ նավախմբերը մտնում են մերձափնյա նավահանգիստները, այցելություն են տալիս, ապաները մասնակցում են բանկետներին ու հանդեսներին։ Մենք տեսնում ենք, վոր միքանի անգամ Կոնստանցա (ռումինական նավահանգիստ Սև ծովում) յե յեկել իր զրոսանավով անգլիական ծովային շտաբի պետ

ծովակալ Բիտտին։ Մենք այս կհամարելինք ուղղակի քաղաքավարության մի ակտ այն պետությունների նկատմամբ, վորոնք մասնակցություն են ունեցել մեզ հետ 1918—19—20 թ. թ. պատերազմում, բայց իմպերիալիստական սպասարկու մամուլը և ամենից առաջ անգլիական պահպանողական մամուլը մեզ հասկացնել է տալիս, վոր այստեղ հարցը միայն քաղաքավարության մեջ չէ, վոր նավերը մտնում են հարևան նավահանգիստները և՛ ուրիշ ավելի պրոզաիկ նպատակներով։ Այսպես, որինակ՝ «Նեվել ենդ Միլիտերի Ռիկորդ» թերթը 1926 թ. սեպտեմ. 15-ին գրում է. «Անկասկած, իրերի ներկա կացության դեպքում բայլշևիկական կառավարությունը նույնիսկ շատ թանգ գնով կուզենար իր նավատորմն ունենալ չինական ջրերում։ Սակայն կարմիր ծովակալն ավելի խոհեմություն է համարում կառչած մնալ Բալթիկ ծովին, թեկուզ հենց միայն նրա համար, վոր բրիտանական հածանավերի վորևե ջոկատ պարբերաբար հայտնվում է այդ ծովում»։ Այս հենց ենպես չի ասված։ Այս գրվել է այն բոպեին, յերբ անգլիական գլխավոր շտաբը պատրաստվում եր իր նավախումբն ուղարկել չինական ջրերը և նախքան այդ, համենայն դեպս, լորոշել եր իր հզորությունը ցույց տալ և՛ մեր ափերում։ Թերթն ընդգծում է, վոր անգլիացիների Ռումինիա և Բալթիկ ծով այցելությունն ուներ վորոշ քաղաքական նշանակություն։

Անցյալ տարվա հոկտեմբերի 12-ին ամբողջ մեր մամուլում և արտասահմանյան մամուլում Վիեննայից տրված հետևյալ հեռագիրն եր շրջում, թե՝ «Բոլգարական մամուլը հաղորդում է, վոր բացի յերկու անգլիական հածանավերից, վորոնք դեպի Կոնստանցա ճանապարհին այցելել են Վառնա և Բուրգաս, հոկտեմբերի կիսին ռումինական և բոլգարական նավահանգիստներ կայցելեն ևս յերկու անգլիական ականանավեր։ Այս այցելության նպատակն է,—ասում է մամուլը,—ցույց անել խորհրդային նավատորմի Բալթիկ ծովից Սև ծով տեղափոխելու դեմ։ Բոլգարական թերթերը հաղորդում են, վոր «անգլիացիները ուզում են Կոնստանցայում իրենց ռազմական նավատորմի համար բազա պատրաստել՝ Սև ծովում խորհրդային նավատորմի վրա դիտողություն ունենալու համար»։

Մենք գիտենք, որ կան մարդիկ Ազգերի Լիգայի նավատորմի ղեկավարներից, որոնք շատ են հետաքրքրվում Գդինի և Կոնստանցայի նավահանգիստների դրությամբ, և որ յենթադրություն կա այդ նավահանգիստները հենարան բազա դարձնել խոշոր նավատորմի համար մեր վրա հարձակվելու ժամանակ։ Այս բոլորը հայտնի յե ամենքին և խոսվում է մամուլի եջերում։ Տաճիկ ժուրնալիստները, ոգոստ. 13-ին ծովակալ Բիտտիի Կոնստանցայից վերադառնալիս, նրա հետ ունեցած զրույցի ժամանակ, հենց այդպես էլ հարցը դրել էին և նրա այցելությունը կապել էին այն աշխատանքների հետ, որոնք տարվում են Կոնստանցայում։ Ծովակալը կատակով պատասխանում է, թե՝ յես էս մի այնպիսի տուրիստ եմ, ինչպես և մյուսները։

Բոլոր այս տեղեկությունները, նույնպես և շատ ուրիշները, որոնք մեզ հայտնի յեն, չեն կարող մեզ չանհանգստացնել։ Մենք վոչ մի բոպե չպետք է մոռանանք այն, որ նման վարժունքին վերջ տալու համար ավելի իսկական միջոցը կարող է միայն լավ նավատորմը լինել։ Առանց այդ նավատորմի մեր դեմ ծովի կողմից յեղած թշնամական վերաբերմունքը կարող է իրականանալ առանց վորևե ռիսկի նրանց կողմից, ովքեր այդ ցանկանան։ Մենք չպետք է թույլ տանք, որ խանգարեն մեր խաղաղ շինարարությունը, մենք չպետք է թույլ տանք, որ սպառնան ու փորձեն խանգարել մեր սոցիալիստական շինարարության աշխատանքը։ Այդ բոլորը կարելի յե ապահովել միայն ամուր Կարմիր բանակ և բավականին հզոր նավատորմ ունենալով։

Նավատորմի շինարարության գործում մենք վոչ մի տեղից ոգնություն ստանալ չենք կարող։ Մենք մեր յուղով պետք է տապակվենք։ Ընդհակառակը, խոշոր պետություններն ամեն մի հնարավոր դեպքում ամեն կերպ կաշխատեն խանգարել մեր հաջողությունների զարգացմանը։ Որինակ՝ մենք դեռ մինչև այսոր չկարողացանք յետ ստանալ այն նավատորմը, որ Վրանգելն է տարել իր հետ Ֆրանսիա, որը պատկանում է մեր յերկրին։

Բայց չնայած այս բոլորին, մենք կանենք այն, ինչ մեզ թելադրում են անվտանգության շահերը։

Այս խնդիրն իրականացնելու համար կոմյերիտմիությունը պետք է ընդունի նույն մոտիկ ու անմիջական մասնակցությունը, ինչ նա ընդունել է մինչև այսոր։ Կոմյերիտմիության Կենտրոնական Կոմիտեն և նրա շեֆական հանձնաժողովը պետք է աչքաբաց հետաքրքրվեն մեր նավատորմի և նրա զարգացման դրությամբ, նույնպես անխոնջ կերպով լրացնեն նրա շարքերը լավ անձնական կազմով, նույնպես զարգացնեն հետագայում էլ հրատարակչական գործունեությունը և մեր նավատորմի ժողովրդականացման համար մղվող պրոպագանդիստական աշխատանքը։ Այսպիսի պայմաններում ապահովված կլինի նավատորմի հաջող զարգացումը, և յերկիրը կապահովագրվի հարձակումից ծովի կողմից։

Ս. ԿԱՄԵՆԵՎ

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՀՐԱՁԳԱՅԻՆ ՍՊՈՐՏԸ

Միքանի ժամանակ սրանից առաջ ինձ առաջարկեցին մի հոդված գրել «Հրաձգային սպորտը և յերիտասարդությունը» թեմայի շուրջը։ Այս առաջադրությունն ստանալով՝ յես այն յեզրակացության յեկա, որ այդ թեման իմ սրտովը չե։

Չեմ կարող գրել և խոսել այնպիսի բաների մասին, որոնք բացարձակապես պարզ են։ Ցես կարծում եմ, որ այդ տեսակետից յես բացառություն չեմ կազմում։

Փորձեցեք գրել «բորշչ և գդալ» թեմայի մասին, նու, շատ-շատ յերկու-յերեք խոսք կասեք, իսկ մնացածն ինքնըստինքյան պարզ ե, և հոդված կազմել վոչ մի կերպ չես կարող։

Թվում ե, որ այդպիսի թեմաների շուրջը կարող են գրել միայն «հատուկ տաղանդ» ունեցողները, որոնք ընդունակ են իրար յետևից բառեր շարել, որոնք վոչինչ չեն ասում կամ թե ասում են վոչնչի մասին։

Ահա ինձ տրված թեման հենց այդպիսին ե։ Ի՞նչ ասել «հրանձգային սպորտի և յերիտասարդության» մասին, յերբ միայն վերնագիրն ինքն սպառում ե հոդվածի ամբողջ բովանդակությունը։

Պարզ ե, որ սպորտն առանց յերիտասարդության չի կարող լինել։ պարզ ե նույնպես, որ յերիտասարդությունն առանց սպորտի չի կարող մնալ։

Հրաձգային սպորտը, սպորտն ամբողջությամբ վերցրած՝ նրա բաղկացուցիչ մասն ե և, որպես ամբողջի մի մասը, յենթարկվում ե նույն որենքներին, այսինքն, հրաձգային սպորտն առանց յերիտասարդության ստեղծել չի կարելի, ինչպես և յերիտասարդությունը առանց նրան չի կարող յոլա գնալ։

Ցեվ ահա սկսում եմ շարահյուսել տրված թեման և յերբեք չեմ զայրանա և չեմ զարմանա, յեթե մոտակա ողակից սկսի քանդվել, ինչպես գուլպան ե քանդվում, յերբ նրան անփորձ ձեռքեր են գործում։

Հարկավո՞ր ե արդյոք մեզ հրաձգային սպորտը։ Անկասկած հարկավոր ե, որպես ավելի ակտուալը մեր պայմաններում, յերբ մենք շրջափակված ենք, կանգնած ենք սպառնալիքի և հարձակման ռեալ վտանգի առաջ մեր «դեպի մեզ բարիացակամ» թշնամիների կողմից։ Այդպիսի պայմաններում, յենթադրում եմ, որ հրաձգային սպորտը մեր յերիտասարդության համար, համենյան դեպս, ինչասակար չե։ Այդ պայմաններով ե, որ որոշվում ե անսխալ կերպով հրաձգային սպորտի տեղը մյուս տեսակի սպորտների շարքում, որպես մի սպորտ, որից հենց հարկավոր ե սկսել։ Այն ժամանակ վոչ վոք չի համարձակվի մեզ խանգարել ֆուտբոլ, բասկետբոլ, հանդբոլ և այլ «բոլեր» խաղալ։

Հրաձգային սպորտն այդպիսի ականավոր տեղ գրավելով իր նշանակությամբ չունի այն խմպուլսներն իր զարգացման նկատմամբ, որ ունեն սպորտի մյուս տեսակները, և դրանով ե, որ հրաձգային սպորտը նրանցից տարբերվում ե։

Այսպես, որինակ՝ վոչվոք յերևի չի լսել բժշկի տված խորհուրդներից և այն, որ ասում ե. «Դուք պետք ե հրաձգություն կատարեք ձեր քայքայված առողջությունը ամրացնելու կամ վերականգնելու համար», այն ժամանակ, յերբ «դահուկներով վազել», «այս կամ այն բոլը խաղալ» բժշկի ամենալավ խորհուրդներն են առողջության և ուժերը պահպանելու համար։

Այստեղից պարզ ե, հրաձգային սպորտը չունի այն հզոր լծակը, որպես «բուժիչ նշանակություն» իր զարգացման համար։ Մի խոսքով՝ հրաձգային սպորտը այն «անմահական ջուրը» չե, որ ամեն ինչ բուժի և, որպես այդպիսի հատկություններ չունեցող, պետք ե ճանաչվի որպես առողջ յերիտասարդության սպորտ։

Ցեվ այսպես վատառողջ մարդիկ այդ տեսակ սպորտը

չեն հարգում.—նա աննպատակ բան է. սրանումն է հենց անկասկած, այդ սպորտի թույլ կողմը։ Սակայն, կրկնում եմ, առողջ մարմնի համար այդ առողջ սպորտ է. և դա հասկանալի է, վորովհետև, առողջ մարմինը հրացանի հանդեպ հաճախ անառողջ կլինի, իսկ դիպուկ հրացանով կարող է իր առողջությունը պահպանել։

Հետո անհրաժեշտ է հաշվի առնել, վոր հրաձգային սպորտը իր հիմքում գործ ունի հրազենի հետ, վոր և ընդունված է, այն էլ արդարացի կերպով, այդ պարապմունքները համարել վոչ անվտանգ, և վորոնց անտարբեր վերաբերվել չի կարելի։

Այս գործում վտանգավոր կողմերն ավելի շատ են, ուղիղն ասած, քան թե անվտանգ կողմերը, այնպես վոր այդ հարցի վրայով լռությամբ անցնել՝ մեծ սխալ կլիներ։

Ամենից առաջ պետք է ասել, վոր ամեն մեկը, ով վոր հրացանը ձեռքն է առնում, համարում է, վոր նա իր մտերիմ ընկերն է, «հրաձգությունն ինձ հարազատ գործ է»—հաստատում է ամեն մի պատանի հրաձիգ և պատահաբար «մեխում» է գնդակը «չլցրած» հրացանից այդտեղ պատահաբար գտնված իր ուրախ տրամադրությունների վկայի սիրտը։ Ցավ նկատի առեք՝ այն էլ միշտ «չլցրած» հրացանից։

Նույնիսկ փորձված հրաձիգները զերծ չեն, հավատացնում եմ ձեզ, այդ բացարձակ հակաբնական հրաձգություններից, վոր կատարում են իրենց հարևանի վրա «չլցրած» հրացանից։ Իսկ ինչ վերաբերում է լցրած հրացանից կրակելուն, այստեղ ելի նկատվում է անհաճո որինաչափություն—գնդակները միշտ չեն մեկ-վում նպատակին։ Այստեղ էլ շարունակ կարիք է լինում զգուշանալ, վորպեսզի, նպատակին խփելով, չկպցնել այնտեղ, վորտեղ բոլորովին հարկավոր չէ, մանավանդ լեթե այնտեղ, վորտեղ խփում ես, կենդանի արարածներ են մտնում, վոր հրաձգության ժամանակ հաճախ պատահում է բնակարաններում։ Այստեղից «հարազատ գործը» հաճախ վտանգավոր է լինում, վորը պահանջում է վորևե մեկի փորձառու ստուգումը։

Ապա, ընդհանրապես հրաձգության արվեստը պետք է սերունդե-սերունդ անպայման հուսալի ձեռք անցնի, վորովհետև դրանից վատ բան չկա, լերբ հանդիպում ես թշնամուդ, վորին ինքդ ես սովորեցրել դիպուկ կրակել։

Չի կարելի և լռության տալ նույնպես հետևյալ ցուցումները, վոր փչացած կամ անխնամ թողած հրացանը կամ բոլորովին չի կրակում, կամ վատ է կրակում, դրա համար պետք է անպայման նրա վրա մեծ ուշադրություն դարձնել, հմուտ և պարտաճանաչ վերաբերմունք ունենալ։

Այսպիսով, հրաձգային սպորտը շատ դժվար պարտականություններ է դնում ամեն մի պարապողի և բոլոր նրա ղեկավարների վրա. մի բան, վոր այնքան էլ սուր կերպով չի զգացվում սպորտի մյուս տեսակներում։

Այդ պարտականությունները կրկնապատկվում են դեռ այն հանգամանքով, վոր հրաձգային սպորտը առնչություն ունի և՛ վարժիր բանակի մարտական պատրաստության հետ։

Այստեղ հրաձգային սպորտը պետք է հիմք ստեղծի հրաձգային պատրաստության՝ կարմիր բանակի շարքերում մի կողմից, իսկ մյուս կողմից՝ կարմիր բանակի ծառայության ժամանակ անցած պատրաստությունը վերջացնել՝ գերդիպուկ խփող հրաձգության վարպետներ ստեղծելով։ Ահա թե ինչու չափազանց կարևոր է չխզել կապը սպորտական և մարտական հրաձգությունների միջև։

Այս առթիվ շատ է գրվել ու խոսվել, նախատեսելով, վոր հրաձգային սպորտը կարող է «վոչնչացվել» մարտական պահանջներով և մարտական հրաձգությունը՝ սպորտական պահանջներով։

Վիճող կողմերի այս «վոչնչացնող» գուշակումների այդ սրությունը ինքներեն հարթվեց, լերբ ինքը կյանքը ցույց տվեց ամբողջ «գուշակումների» անհիմն լինելը, վորոնք սկիզբն ելին առել ավելի շուտ «ռազմատենչ զանգակատներում», քան թե գործնական շահերից։ Ցավ արդեն փորձի համար լերկու միլիթենական մրցման մեջ սպորտական հրաձիգները մեծ հեռաքրքրությամբ և հաջողությամբ մրցում են տիպարային

չեն հարգում։—Նա աննպատակ բան է. սրանումն է հենց անկասկած, այդ սպորտի թույլ կողմը։ Սակայն, կրկնում եմ, առողջ մարմնի համար այդ առողջ սպորտ է. և դա հասկանալի յե, վորովհետև, առողջ մարմինը հրացանի հանդեպ հաճախ անառողջ կլինի, իսկ դիպուկ հրացանով կարող է իր առողջությունը պահպանել։

Հետո անհրաժեշտ է հաշվի առնել, վոր հրաձգային սպորտը իր հիմքում գործ ունի հրազենի հետ, վոր և ընդունված է, այն էլ արդարացի կերպով, այդ պարապմունքները համարել վոչ անվտանգ, և վորոնց անտարբեր վերաբերվել չի կարելի։

Այս գործում վտանգավոր կողմերն ավելի շատ են, ուղիղն ասած, քան թե անվտանգ կողմերը, այնպես վոր այդ հարցի վրայով լռությամբ անցնել՝ մեծ սխալ կլիներ։

Ամենից առաջ պետք է ասել, վոր ամեն մեկը, ով վոր հրացանը ձեռքն է առնում, համարում է, վոր նա իր մտերիմ ընկերն է, «հրաձգությունն ինձ հարազատ գործ է»—հաստատում է ամեն մի պատանի հրաձիգ և պատահաբար «մեխում» է գնդակը «չլցրած» հրացանից այդտեղ պատահաբար գտնված իր ուրախ տրամադրությունների վկայի սիրտը։ Ցավ նկատի առեք՝ այն էլ միշտ «չլցրած» հրացանից։

Նույնիսկ փորձված հրաձիգները զերծ չեն, հավատացնում եմ ձեզ, այդ բացարձակ հակաբնական հրաձգություններից, վոր կատարում են իրենց հարևանի վրա «չլցրած» հրացանից։ Իսկ ինչ վերաբերում է լցրած հրացանից կրակելուն, այստեղ ելի նկատվում է անհաճո որինաչափություն—գնդակները միշտ չեն մեխվում նպատակին։ Այստեղ էլ շարունակ կարիք է լինում զգուշանալ, վորպեսզի, նպատակին խփելով, չկպցնել այնտեղ, վորտեղ բոլորովին հարկավոր չե, մանավանդ յեթե այնտեղ, վորտեղ խփում ես, կենդանի արարածներ են մտնում գալիս, վոր հրաձգության ժամանակ հաճախ պատահում է բնակարաններում։ Այստեղից «հարազատ գործը» հաճախ վտանգավոր է լինում, վորը պահանջում է վորևե մեկի փորձառու ստուգումը։

Ապա, ընդհանրապես հրաձգության արվեստը պետք է սերունդե-սերունդ անպայման հուսալի ձեռք անցնի, վորովհետև դրանից վատ բան չկա, յերբ հանդիպում ես թշնամուդ, վորին ինքդ ես սովորեցրել դիպուկ կրակել։

Չի կարելի և լռության տալ նույնպես հետևյալ ցուցումները, վոր փչացած կամ անխնամ թողած հրացանը կամ բոլորովին չի կրակում, կամ վատ է կրակում, դրա համար պետք է անպայման նրա վրա մեծ ուշադրություն դարձնել, հմուտ և պարտաճանաչ վերաբերմունք ունենալ։

Այսպիսով, հրաձգային սպորտը շատ դժվար պարտականություններ է դնում ամեն մի պարապողի և բոլոր նրա ղեկավարների վրա. մի բան, վոր այնքան էլ սուր կերպով չի զգացվում սպորտի մյուս տեսակներում։

Այդ պարտականությունները կրկնապատկվում են դեռ այն հանգամանքով, վոր հրաձգային սպորտը առնչություն ունի և՛ վարժիր բանակի մարտական պատրաստության հետ։

Այստեղ հրաձգային սպորտը պետք է հիմք ստեղծի հրաձգային պատրաստության՝ կարմիր բանակի շարքերում մի կողմից, իսկ մյուս կողմից՝ կարմիր բանակի ծառայության ժամանակ անցած պատրաստությունը վերջացնել՝ գերդիպուկ խփող հրաձգության վարպետներ ստեղծելով։ Ահա թե ինչու չափազանց կարևոր է չխզել կապը սպորտական և մարտական հրաձգությունների միջև։

Այս առթիվ շատ է գրվել ու խոսվել, նախատեսելով, վոր հրաձգային սպորտը կարող է «վոչնչացվել» մարտական պահանջներով և մարտական հրաձգությունը՝ սպորտական պահանջներով։

Վիճող կողմերի այս «վոչնչացնող» գուշակումների այդ սրությունը ինքնիրեն հարթվեց, յերբ ինքը կյանքը ցույց տվեց ամբողջ «գուշակումների» անհիմն լինելը, վորոնք սկիզբն ելին առել ավելի շուտ «ռազմատենչ զանգակատներում», քան թե գործնական շահերից։ Ցավ արդեն փորձի համար յերկու միությունական մրցման մեջ սպորտական հրաձիգները մեծ հետաքրքրությամբ և հաջողությամբ մրցում են տիպարային

հրացաններով՝ մարտական նշավակների վրա և հրաձգության սահմանափակ ժամանակով և, ընդհակառակը, Կարմիր բանակի մարտիկները նույնպես հետաքրքրությամբ և հաջողությամբ հրաձգություն են կատարում սպորտական նշավակների վրա՝ զուտ սպորտական ռեժիմով։ Այս բոլորն անցավ առանց վորևե ճնշման—այնպես, ինքն իրեն։ Գործնական շահերը, ինչպես միշտ, հաղթահարել են վարչական դժվարությունները և «պրոֆեսիոնալ» պահպանողականությունը։

Այժմ միքանի խոսք «պրոֆեսիոնալ հրաձգի» մասին։ Մենք ձգտում չունենք պրոֆեսիոնալ հրաձիգ լինելու, թեև մեզանում կան անհատ մոլի պրոֆեսիոնալ հրաձիգներ ինչպես հրաձգասպորտային պրոֆեսիոնալների գծով, այնպես էլ մարտական հրաձիգների գծով։ Նրանք ելին, վոր հատկապես սրեցին հարցերը այս կամ այն հրաձգության «ժահվան դատապարտելու» գործում։ Սպորտային և մարտական հրաձգության նպատակների մոտեցումը նշանավոր չափով կթուլացնի մոլի պրոֆեսիոնալությունը, վորի հետ մենք մի համպով չենք գնա։

Այսպես, ուրեմն, ինչ դեր պետք է տալ յերիտասարդությանը հրաձգային սպորտի մեջ։ Ամենից առաջ պահպանել իր առողջությունը, վորպեսզի իրավունք ունենա զբաղվելու հրաձգային սպորտով, ապա վերացնել «ըստորինական» հրաձգությունները չլցրած զենքից, իսկ լցրած զենքով խփել այն նշանին, վորտեղ նշան ես բռնում, այսինքն՝ խփել դիպուկ. այնուհետև ուսումնասիրել զենքը և դեպի նա հարգանքով վերաբերվել, նույնիսկ սիրել։ Գնահատելով զենքը՝ չպետք է տալ նրան թշնամիների ձեռքը, շատ չընկնել պրոֆեսիոնալ հրաձիգներ պատրաստելու յետևից, այլ մշակել դիպուկ հրաձգությունը մասսաների մեջ։

Ի յեզրակացություն ոգտակար եմ համարում մատնանշել հրաձգային սպորտի վերաբերյալ մեր ամենալավ հրաձիգ Ն. Բուլիգինի գրած աշխատանքի վրա, վորը հանդիսանում է իբրև մի գնահատելի գանձ հրաձգային սպորտի գործում. այս աշխատանքի հետ պետք է ծանոթանա ամեն մի սպորտային յերիտասարդ հրաձիգ։

Վ. ՊՈՒՏՆԱ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ

Խորհրդային Միության կապիտալիստական շրջափակումն ինքնըստինքյան պահանջում է, վոր մենք արթուն լինենք։ Այս խաղաղ շինարարական տարիներում քանի-քանի անգամ մեր գլխին կախվեց մեր վրա հարձակվելու վտանգը՝ իմպերիալիստների կողմից։ Մենք ապրեցինք Քերզոնի վերջնագրի շրջանը, պատասխանելով այդ վայրագ վերջնագրին մեր ռազմական հզորությունն ուժեղացնելով. մենք ապրեցինք յեվրոպական բիրժաների ու մինիստրական կաբինետներից ներշնչված Զան-Յո-Լինի յելույթների շրջանը, մենք այժմ ապրում ենք անգլիական պահպանողականների կողմից տարվող և «ամստերդամյան վարդապետության սոցիալիստների» ոգնությամբ Խ. Ս. Հ. Մ. դեմ հարձակման համար պատրաստության շրջանը. մենք նկատում ենք, վոր փորձ է արվում նորից բռնկել համաշխարհային պատերազմի հրդեհը «չինական սահմաններից». սրա անհերքելի ապացույցն այն է, վոր ուժեղ թափով զորքեր են ուղարկվում Չինաստան։

Կարող ենք մենք այսպիսի պայմաններում բարոյապես և տեխնիկապես զինաթափվել. կարող ենք, արդյոք, մեր յերկրի ամրացումը ռազմական տեսակետից յերկրորդական հարց համարել. կարող ենք, արդյոք, չմտածել այն մասին, վոր պետք է հակահարված տալ նրանց, ովքեր կուզենան մեզ «շոշափել սվինով»։—Վոչ, չենք կարող։ Մեր ռազմական պատրաստականության հարցը մեր պետական շինարարության ամենից կարևոր հարցն է յեղել և այսուհետև էլ այդպես կմնա։

Կարմիր բանակի պատրաստության գործում, մարտական փորձառության նկատմամբ հատուկ նշանակություն ունի հրա-

մատարական կազմի պատրաստությունը ռազմա-դպրոցական հաստատություններում։ Մենք կարմիր բանակում պահել ենք հրամատարական կազմի լավագույն մասը, որը մեզ մնաց հին ցարական բանակից։ Ամեն տարի մեր դպրոցներն ավարտում են բավարար քանակով հրամատարներ, որոնք լրացնում են այն բնական կորուստը, որը տեղի յե ունենում բանակում. բայց մենք չպետք է մոռանանք, որ պատերազմի ժամանակ պահանջվում է նշանավոր չափով մեծացնել մեր բանակը, մեզնից կպահանջվի շատացնել հրամատարական կազմի կադրերը։ Մենք մեր բանվորա-գյուղացիական կարմիր բանակի հրամատարի առաջ այն պահանջները չենք դնում, ինչ բուրժուազիան է դնում իր հրամատարների առաջ։ Մեր հրամատարը հանդիսանում է որպես այն պրոլետարիատի զինված ուժերի ղեկավար, որը պետք է իրականացնի դիկտատուրան և գյուղացիության հետ դաշնակցած կռվի սոցիալիզմի կառուցման իրավունքի համար,—գործարանների, գավոդների, հողի, խաղաղ և ազատ աշխատանքի, պետական իշխանությունը հաստատելու իրավունքի համար։ Մեր հրամատարը պրոլետարական դիկտատուրայի ներկայացուցիչն է. նա Խորհրդային իշխանության կողմից նրան հանձնված զորամասում վոչ միայն ռազմական, այլև քաղաքական ղեկավարն է։ Դրա համար յերբեք չի կարելի ասել, թե միևնույն է, ով կմտնի ռազմա-դպրոցական հաստատությունները սովորելու, միևնույն է, թե ինչպես է դրված դաստիարակչական աշխատանքը ռազմա-դպրոցական հաստատության մեջ, թե ինչ են սովորեցնում ռազմական դպրոցներում։ Կարմիր բանակի համար հարկավոր կոնտինգենտներ ռազմական դպրոցներն ընդունելու ընտրության աշխատանքում, նույնպես և ռազմական դպրոցի ուսումնական և դաստիարակչական աշխատանքում պակաս դեր չի խաղացել և չի խաղում կոմյերիտմիությունը։

Զորքի բոլոր տեսակի ռազմական դպրոցներն է ընդունվում առավելապես յերիտասարդությունը։ Մեր խնդիրը նրանում է, որ այդ յերիտասարդության շարքերում կարողանանք ապահովել, ըստ հնարավորին, մեծ քանակ բանվորների

տղաներ. այնուհետև մեր խնդիրն է—որքան հնարավոր է ապահովել Կարմիր բանակի հրամատարական կազմի լրացումն ու թարմությունը, նրա մեջ բանվորական և կուսակցական խավերի ուժեղացման ուղղությամբ, որովհետև միայն այդ պայմանով կարելի կլինի քաղաքականապես ղեկավարել հրամատարական կազմին, իսկ նրա միջոցով քաղաքականապես ղեկավարել և քաղաքականապես դաստիարակել կարմիր-բանակայինների մասսաները։

ՀԱՄԼԿՑԵՄ առաջ ել բավական ակտիվ աշակցություն է ցույց տվել ՌԴՀ-ին (ռազմա-դպրոցական հաստատություններին) հավաքումներն անցկացնելու գործում. առաջիկա կամպանիաների ընթացքում կոմյերիտմիության խնդիրն է՝ ուժեղացնել այդ աշխատանքը։ Կոմյերիտմիության մասնաճյուղով, կոմյերիտմիության ընդհանուր ժողովների միջոցով, կոմյերիտական ագիտացիայի և պրոպագանդայի բոլոր ձևերի միջոցներով պետք է ժողովրդականացնել հրամատարական կազմի պատրաստության խնդիրները, հարկավոր է ժողովրդականացնել ռազմական դպրոցները, պետք է գրավել դեպի ռազմական դպրոցները, պետք է հոգ տանել լավագույն կոմյերիտականներին և բանվորական ու գյուղացիական յերիտասարդության շրջանից լավագույն ընկերներին առաջ քաշել դպրոցները մտնելու։ Այս աշխատանքը հաջողությամբ պսակելու համար կոմյերիտմիության կոմիտեներն ու բջիջներն անհրաժեշտաբար պետք է կապվեն ռազմական դպրոցների հետ, ՌԴՀ ընդունվողների ընտրության հանձնաժողովների հետ, որոնք կազմակերպվում են նահանգական կուսկոմներին կից. հարկավոր է հաստատապես պարզել ռազմական դպրոցներն ընդունելու պայմանները, պարապել ընկերների պատրաստությամբ, ովքեր կցանկանան ռազմական դպրոց մտնել, մտնելու համար քննություններին պատրաստել և այլն։ Միայն այս ասպարիզում կոմյերիտմիությունը մեծ աշխատանք ունի կատարելու։ Հենց միայն այս աշխատանքի հաջող անցկացնելը ցույց կտա, որ յերկրի պաշտպանունակության ամրացման համար կոմյերիտմիությունը մեծ գործ է կատարել։

Կոմյերիտական կազմակերպությունը, սովորաբար, այսպիսի հրահանգ է տվել և պետք է տա իր այն անդամներին, որոնց նա ուղարկում է ռազմական դպրոց. «Դու գնում ես ռազմական դպրոց, դու կսովորես, որպեսզի աշխարհում առաջին բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի հրամատարը դառնաս։ Մի խայտառակիր քո կազմակերպությունը, որի-նակելի սովորող յեղիր, ամեն բանում որինակ յեղիր քո անկուսակցական ընկերների համար։ Հիշիր, որ դու սովորում ես կարմիր-բանակայիններին մարտական ղեկավարը դառնալու համար, ուրեմն և սովորիր այնպես լավ, որ հետո կարողանաս հաղթել մեր դասակարգային թշնամուն»։

Որանով, ինարկե, չի վերջանում կոմյերիտմիության դերը ու նշանակությունը Բ.-Գ.Կ.Բ. հրամկազմ պատրաստելու գործում։ Կոմյերիտականները ռազմական դպրոցում իրենցից կազմակերպում են բջիջ։ Կոմյերիտական բջիջի դերն ու նշանակությունը կուրսանտի քաղաքական դաստիարակության գործում բավական նշանավոր տեղ են գրավում։ Բավական է նշել այն, որ վոչ մի ռազմական դպրոց չկա, որտեղ կոմյերիտական կազմակերպություն չլինի, և որ թվով կոմյերիտականները կուրսանտական կազմի 40-ից մինչև 60%-ը չեն կազմեն, մի հանգամանք, որ ապացուցում է, թե ինչ նշանակություն կարող է ունենալ այդպիսի հզոր շաղկապված և կազմակերպված կոլեկտիվը։

Հիշենք, որ կոմյերիտական բջիջները ռազմա-դպրոցական հաստատություններում որպես կազմակերպություն ավելի շուտ են ձևակերպվել և աշխատանքի մեծ փորձառություն ձեռք բերել, քան թե Բ.-Գ.Կ.Բ. շարային զորամասերում։

Ի՞նչպիսի յերևույթներ ենք մենք դիտում ռազմական դպրոցների կոմյերիտական բջիջներում։

Ամենից առաջ հարկավոր է մատնանշել ռազմական դպրոցների կոմյերիտական բոլոր կազմակերպությունների համար ընդհանուր յերևույթի մասին—այդ կոմյերիտականների ակտիվության աճումն է, քաղաքական և կուլտուրական զարգացմանը ձգտելու ուժեղացումն է։ Բացի ակադեմիական ուսումնական կարգով անցնելի առարկաներից, ինչպես՝ դասակարգային կռվի պատմություն, քաղաքատնտեսություն, տնտեսական քաղաքականություն, լենինիզմ,—բոլոր կոմյերիտականներն զբաղված են կուսակցական և կոմյերիտական ուսումնամբ։ Ռազմական դպրոցի պայմաններն այնպես են դասավորված, որ քաղաքական գիտակցության տեսակետից կոմյերիտականը բավական արագ է զարգանում,—հենց դրանով էլ որոշվում է միշտ արագ բարդացող հարցերի և կոմյերիտմիության ակտիվության արագ աճումը ռազմական դպրոցում։ Կոմյերիտմիության նշանավոր չափի միջնախավը ռազմական դպրոցում լիակատար կերպով ապահովում է կոմյերիտմիության միջոցով կուսակցական կազմակերպության ազդեցության տարածումը կուրսանտական անկուսակցական մասի վրա։ Ռազմական դպրոցում անկուսակցականներն ամբողջապես հավատ են տածում դեպի կուսկազմակերպությունը։ այս նվաճումի մեջ կոմյերիտական կազմակերպությունը իր նշանավոր մասն ունի։ Կոմյերիտմիությունը ռազմական դպրոցում կազմում է այն հիմնական պահեստը, որով լրացվում է կուսկազմակերպությունը։ Ռազմական դպրոցում կուսակցության շարքերը նոր մտնողների հաշվարյա 90—95%-ը կոմյերիտմիության մեջ մտնելուց հետո յեն անցնում կուսակցության շարքերը։

Այսպիսով, դեռ կոմյերիտմիության ներսում այն կադրերի բայլշևիկական դաստիարակությունը, որոնք նախորոշվում են կոմյերիտմիությունից կուսակցության մեջ գրավել, հանդիսանում է կոմյերիտմիության համար առանձին պատասխանատու մի աշխատանք։

Ռազմական դպրոցում կոմյերիտմիության ամենագլխավոր խնդիրը, որը բղխում է Կարմիր բանակի առանձնահատկություններից, յեղել է և պետք է լինի զինվորական կարգապահության բոլոր պահանջների, զինվորական ծառայության որինակելի կատարումը և ռազմաքաղաքական ուսումնական մեջ անթերի բարեխղճությունը։ Կատարում են, արդյոք, այս խնդիրը կոմյերիտական կազմակերպությունները։— Այո, կատա-

ղում են. ռազմական դպրոցների կոմյերիտականներն իրենց մասսայի մեջ, իրոք, ամենալավ կուրսանտներն են. սակայն, համենայն դեպս, ճիշտ է, կան կանոնագրքի և ծառայության պահանջների խախտման առանձին դեպքեր, անկարգապահության առանձին դեպքեր անհատ կոմյերիտականների կողմից։ Կոմյերիտմիության կարևորագույն խնդիրն է՝ թույլ չտալ նույնիսկ այդ խախտման առանձին դեպքերը, թույլ չտալ այդպիսի անգիտակից վերաբերմունք դեպի իր ծառայության պարտքը։ Կոմյերիտականը զինվորական ծառայության միայն իր որինակելի կատարումով կարող է ազդեցություն գործել թե անկուսակցական ընկերների վրա և թե ամբացնել ՌԴՀ մարտունակությունը, վորպես մարտական միավորի։ Այս, համենայն դեպս, քիչ է։ Ժամանակ առ ժամանակ ռազմական դպրոցների կոմյերիտական կազմակերպությունները մոռանում են ռազմական դպրոցի իսկական նպատակը—հրամատարի, կարմիր-բանակայինների ռազմա-քաղաքական դաստիարակչի պատրաստությունը և լիակատար ձևով չեն արտացոլում այդ նպատակն իրենց ագիտացիոն, պրոպագանդիստական և այլ ուրիշ կոմյերիտական աշխատանքի մեջ. այնինչ, ինքնըստինքյան հասկանալի է, վոր բանվորա-գյուղացիական հրամատարը պետք է ոժտված լինի վորոշակի հատկություններով—նա հենց ենպես չպետք է իմանա ռազմական գիտությունը, այլ պետք է այդ գիտությունը սովորեցնել կարողանա կարմիր-բանակայիններին և կարողանա նրանց ղեկավարել մարտում. նա հենց ենպես չպետք է քաղաքականապես զարգացած լինի, այլ կարողանա քաղաքականապես սովորեցնել ու դաստիարակել կարմիր-բանակայիններին, կարողանա քաղաքականապես ղեկավարել նրանց, կարողանա իր յետևից տանել հարկ յեղած վորոշ մոմենտներին, թեկուզ շատ լուրջ և ծանր մարտական փորձության մոմենտներին, հրամատարը պետք է ձեռներեց լինի, հմուտ, բարոյապես տոկուն և այլն, և այն կոմյերիտմիության գործն է՝ հատկապես այս հատկությունները զարգացնել նրանց մեջ՝ կոմյերիտական աշխատանքի սիստեմի միջոցով, միշտ հիշեցնելով կուրսանտին Բ.-Գ.Կ.Բ. հրամատարի պատվավոր պարտականությունների և բարձր կոչման մասին, վորոնց համար նա պատրաստվում է, և դաստիարակել կուրսանտի մեջ իր հրամատարի պաշտոն գրավելու համար պատրաստության, իր աշխատանքի ու ռազմական դրպրոցում ունեցած վարք ու բարքի համար պատասխանատվության զգացմունքը։

Ռազմական դպրոցների տնտեսա-կենցաղային դրությունը բավականին բարձր մակարդակի յե հասել. տարեցտարի նա լավանում է, բայց մենք դեռևս չենք կարող պարծենալ նրանով, թե այդ տեսակետից հասել ենք արդեն վորոշված սահմանին, չենք կարող պարծենալ նրանով, թե մեզանում չկան պակասություններ։ Այս տնտեսա-կենցաղային պակասությունները մի-մի անգամ առանձին տարակուսանքներ ու անբավականություններ են առաջացնում կուրսանտների շրջանում։ Ռազմական դպրոցի կոմյերիտմիության խնդիրն է (այս խնդիրը նույնպես կոմյերիտմիությունը մինչև այժմ լիովին բավարար կերպով է կատարել)՝ ուժեղացնել ուշադրությունը տնտեսա-կենցաղային հարցերի վրա, զգուշաբար ուշադրությամբ հետևել անկուսակցական յերիտասարդության տրամադրություններին, ակտիվ կերպով հականերգործել այդ տրամադրությունների վրա՝ ուղղություն տալով նրանց մեր ընդհանուր ձգտումների հունի համեմատ—բարձրացնել ռազմական դպրոցի տնտեսա-կենցաղային դրությունը և վերացնել ծակ քննադատությունն ու դատարկաբանությունը։

Բարձրագույն դպրոցական հիմնարկություններում կոմյերիտմիության աճման մասին պետք է նշել, վոր աճումը կանոնավորելու համար ղեկավար հիմք են ծառայում ամբողջ ՀամԼԿՅԵՄ-ի համար ընդհանուր դրությունները, այսինքն՝ մենք ձգտում ենք դեպի կոմյերիտմիության շարքերը գրավել ամբողջ բանվորական ու բատրակային և միջակ յերիտասարդության լավագույն մասին։ Նոր անդամների հոսանքը դեպի ռազմական դպրոցների կոմյերիտական կազմակերպությունները—միանգամայն բավարար է։ Այս տեսակետից աննորմալ յերևույթներ չեն նկատվում (վոչ բոնի կերպով ստիպելու

կողմից և վոչ ել կոմյերիտմիությանն կազմակերպության ամ-
ման դանդաղության կողմից)։

Ռազմական դպրոցի կոմյերիտական կազմակերպությունն
իր խնդիրները լիակատար կերպով վճռելու համար պետք է
սերտ կապ հաստատի յերկու ուղղությամբ։ Նախ՝ պետք է
կապ հաստատի զորական մասերի կոմյերիտական կազմակեր-
պությունների հետ, վորպեսզի այդ կապի միջոցով նախորոք
կարողանա ուսումնասիրել կոմյերիտմիության աշխատանքի ա-
ռանձնահատկությունները բանակում, Կարմիր բանակի-կենցաղի
առանձնահատկությունները, յերիտասարդ կարմիր՝ բանակայինի
շահերն ու նրան հետաքրքրող հարցերը, նրա տրամադրություն-
ները։ Կոմյերիտականի այսպիսի ծանոթությունից հետո միայն
ռազմական դպրոցից զորական մասը մտնելով, հենց գալուց հետո
մյուս որը կարող է ակտիվորեն կպչել աշխատանքի և վոչթե հենց
առաջին քայլերից սխալներ անել։ Այս կապն արտահայտվում
է ժողովներին փոխադարձաբար ներկայացուցիչներ ուղարկե-
լով, փոխադարձաբար այցելություններով, գրավոր նյութերի
փոխանակությամբ և այլն։

Նույնպես և ռազմական դպրոցի կոմյերիտմիության հա-
մար շատ կարևոր է սերտ կապ հաստատել և յերկրորդ ուղ-
ղությամբ — գործարանների ու գավոդների կոմյերիտմիության
կազմակերպությունների և կոմյերիտմիութենական կոմիտե-
ների հետ։ Այս գծով կապ պահպանելով՝ ռազմական դպրոցի
կոմյերիտականները չեն ամփոփվում իրենց միայն դպրոցա-
կան հետաքրքրությունների նեղ շրջանում. նրանք ընդլայ-
նում են իրենց մտավոր հորիզոնը, մասնակցում են ամբողջ
կոմյերիտմիության ընդհանուր կյանքին, սովորում են հաս-
կանալ իրենց կոմյերիտմիութենական աշխատանքը ռազմա-
կան դպրոցում՝ ՀԱՄԼԿՑԵՄ ընդհանուր խնդիրների տեսակե-
տից և վորպես զորական մաս, բոլոր համամիութենական
կոմյերիտմիության կազմակերպության հսկայական ընդհա-
նուր աշխատանքի տեսակետից։

Մեր կոմյերիտմիության շատ կարևոր և հերթական խն-
դիրն է՝ ամրացնել կապն այս յերկու ուղղությամբ։

Կոմյերիտմիությունը հերթափոխ (смена) է պատրաստում
կամաց-կամաց հնացող մարտիկներին և բայլշեիկների հին
սերունդին փոխարինելու համար — այս ընդհանուրի կողմից
ընդունված մի դրություն է. կոմյերիտմիությունը հերթափոխ
է պատրաստում քաղաքացիական պատերազմի ժամանակնե-
րին կոփված բանվորա-գյուղացիական հրամատարների կադրե-
րին փոխարինելու բանվորա-գյուղացիական հրամատարների
նոր կադրերով, վորոնք արժանի յեն այդ կոչումն ունենալու։
Այդպիսի հրամատարների կադրերն են, վոր պետք է առաջի-
կա կապիտալիստական գիշատիչների հետ ունեցած մեր
կռիվներում՝ բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի դրոշը
պահեն ավելի մեծ փառքով, քան թե մեր քաղաքացիական
պատերազմի արդեն ապրած փառավոր հաղթանակներն են։

Ս. ՖՐՈՒՄԻՆ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ, ՅԵՐԿՐԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԱԽԱԿՈՉՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ.

Քաղաքացիական պատերազմի վախճանով հարց դրվեց Խորհրդային Միության զինված ուժերի շինարարության մեջ արմատական փոփոխություններ մտցնելու մասին, յերկրի անհետաձգելի տնտեսական և կուլտուրական կարիքներին համեմատ։

Կարմիր բանակը խաղաղ դրության անցնելով՝ սկսեց ամփոփվել, վորով հնարավորություն տվեց միլիոնավոր բանվորներին ու գյուղացիներին, վորոնք կանչված եյին Հոկտեմբերի նվաճումները պաշտպանելու, զբաղվել մեր քանդված տնտեսությունը վերականգնելով։

1923 թ. վերջին Կարմիր բանակի կադրերը կրճատվեցին մինչև 500 հազար մարդու։ Սակայն մեր պետության քաղաքական պայմանները, հեղափոխության ուշացումը Արևմուտքում, աշխարհի կապիտալիստական բանակներում ռազմական տեխնիկայի զարգացումը, ապագա պատերազմների դասակարգային բնույթը, վորպես ժամանակակից պատերազմների, յերբ սահմանագիծ չի լինելու թիկունքի և ճակատի միջև,—ահա այս բոլորը հարկադրաբար պահանջում եյին ռազմական շինարարության ձևեր ու մեթոդներ փնտռել այնպիսի պայմաններում, վոր ապահովվի ԽՍՀՄ պաշտպանությունը՝ պետության նյութական միջոցների նվազագույն կորուստներով և աշխատավորներին իրենց ամենորյա աշխատանքից ամենաքիչ չափով կտրելով։

Մեր Խորհրդային Միության համար անհրաժեշտ է զինված ուժերի այնպիսի կառուցվածք, վորը խաղաղ շինարարության համար մեծ ծանրություն չլիներ, հատկապես, ապահովվեր յերկիրը բուրժուական պետությունների ամեն տեսակ չար դիտավորություններից. դրա համար մենք անպայման պետք է ունենանք լավ կազմակերպված, պատրաստված, կարգապահ և մարտունակ բանակ։

Սրա վերաբերյալ ձեռք առած հիմնական միջոցների մասին հիշատակված է 1923 թ. ոգոստ. 8-ի դեկրետի մեջ՝ Կարմիր բանակի մի մասի յերկրային ձևի կազմակերպության ուսուցման սկզբունքներին անցնելու մասին։

Յերկրային ձևի կազմակերպությունները գոյություն ունեն վորպես առանձին զորական միավորություններ, կառուցված կադրային տիպով, և տարբերվում են վերջիններից միայն իրենց կազմակերպությամբ, հավաքմամբ և ծառայության ընթացքով։

Յերկրային զորամասերն ունեն կադրային (մշտական) և փոփոխական կազմ։

Կադրերը, վարժական-կազմակերպչական ապպարատ լինելով, սրա շուրջն է համախմբվում խիստ յերկրային սկզբունքով ամբողջ փոփոխական կազմը. այդ կադրերը հանդիսանում են կմախքը այն զորական մասերի, վորոնք հարկավոր դեպքերին պետք է լիովին մարտունակ լինեն։

Կարմիր բանակի այսպիսի կառուցվածքում կարմիր-բանակային կազմի պատրաստությունը չափազանց բարդանում է, և միանգամայն հասկանալի յե, վոր այդ պատրաստության հաջող կատարումը կարող է ապահովվել միայն այն ժամանակ, յերբ բոլոր կուսակցական, խորհրդային, պրոֆեսիոնալ և հասարակական կազմակերպությունները, և մանավանդ ՀԱՄԼԿՅԵՄ ակտիվ մասնակցություն ունենան և ամեն կերպ աջակցեն ռազմական վարչությանը։

ՀԱՄԼԿՅԵՄ, վորպես յերկրային զորամասերը լրացնող յերիտասարդության մասսայական քաղաքական կազմակերպություն, ավելի յե կապված այդ կոնտինգենտի հետ, ինչպես մինչև բանակ կազմվելը, նույնպես և բանակ կազմվելուց հետո։

Դեռ նախակոչյան պատրաստության շրջանում ամբողջ պատանեկությունը ակումբներում և խրճիթ-ընթերցարաններում կոմյերիտմիության գաղափարական ազդեցության տակ է գտնվում և աշխատանք է տանում նրա ղեկավարությամբ, վորի շնորհիվ կոմյերիտմիության աշխատանքի ձևերն ու մեթոդները նրան ավելի ծանոթ են և սրտին մոտիկ։ Բացի դրանից, հենց քաղուսաշխատանքը յերկրային զորամասերում կարող է վորպես լավագույն խթանը ծառայել լայնացնելու կոմյերիտմիության կորիզը՝ բանվոր, չքավոր և միջակ յերիտասարդության լավագույն մասի հաշվին։

Այն կոմյերիտմիությունը, վորը քաղաքացիական պատերազմի շրջանում ճակատ ուղարկեց իր լավագույն անդամներին, այն կոմյերիտմիությունը, վորն ամուր հանգույցներով կապված է Կարմիր բանակի և նավատորմի հետ, այստեղ ևս իր խնդիրն անպայման կկատարի։

Վերջապես ինչո՞ւմ պետք է գործնականորեն արտահայտվի ՀԱՄԿՑԵՄ աշխատանքը։

Վորտեղ յերկրային զորամասեր են կանգնած, կոմյերիտմիությունը պետք է սերտ կապ հաստատի նրանց քաղորգանների հետ՝ յերկրային զորամասերում տարվող աշխատանքի մեջ իր անհրաժեշտ և լիակատար մասնակցությունը ցուցահանելու համար։

Կոմյերիտմիության կազմակերպությունների կապը յերկրային զորամասերի հետ պետք է հաստատվի սկսած կորպուսներն և դիվիզիաների միավորումներից մինչև վաշտերինը։ Ձեկուցումների փոխանակությամբ կոմյերիտմիության կազմակերպությունն իրազեկ կլինի յերկրային զորամասերի անցուդարձին, սրանց հնարավոր աշկցությունը ցույց կտա իրենց աշխատանքում։ Միաժամանակ յերկրային զորամասը կոմյերիտմիության միջոցով կապ կպահպանի յերիտասարդության ամբողջ մասսայի հետ, ուսումնասիրելով իր ռայոնի կենցաղային, ազգային և տնտեսական պայմանները։

Զորական համախմբումների հավաքներին պատրաստվելու գործում կոմյերիտմիությունը պետք է գործոն մասնակցություն ունենա և այդ պատրաստությունն անցկացնի համապասխան հրամքաղկազմի ղեկավարությամբ։

Ամբողջ կոմյերիտմիութենական մասսայում, նահանգականից սկսած մինչև վերջին պատի լրագիրը, նախորդ պետք է ագիտացիոն-բացատրական լայն կամպանիա անցկացնել՝ յերկրային զորամասի առաջիկա հավաքների մասին, ազգաբնակության համար յերկրային սիստեմի ոգտավետության մասին, ռազմական տեխնիկայի նվաճումների մասին, կապիտալիստական յերկրների սպառազինման և պատերազմի պատրաստության մասին, նրանց հակադրելու համար Խորհրդային Միության իր հզոր կարմիր բանակն ունենալու անհրաժեշտության մասին և դրա մեջ հենց իրենց աշխատավորների ունեցած շահագրգռության մասին։ Սրանց նման թեմաների շուրջը պետք է զեկուցումներ տրվեն կոմյերիտմիության բջիջների ընդհանուր ժողովներում ամբողջ անկուսակցական յերիտասարդության լայն մասնակցությամբ։

Հավաքի տեղում յեղած կոմյերիտմիության կազմակերպությունը պետք է մասնակցի պունկտի սարքավորման գործին, վորպեսզի կարմիր-բանակայիններին ընդունելությունը հարմար շենքում կատարվի։

Միաժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հավաքի պունկտի զորանոցները կարգի բերելու և սարքավորման վրա, վորտեղ պետք է հարմարություն և իդեալական մաքրություն լինի։ Կոմյերիտմիությունը շահագրգռված է դրանում և այդ պետք է իր պարտականությունը համարի։

Հաճախ կոմյերիտմիության տեղական կազմակերպությունները տեղեկություն չեն ունենում յերկրային զորամասերի առաջիկա հավաքների մասին կամ նրանց մասին իմանում են յերկու-յերեք որ առաջ մինչև հավաքը, յերբ վոր փաստորեն վոչինչ չի կարելի անել։

Կոմյերիտմիության կազմակերպությունները, քաղաքացիներին յերկրային զորամասերում գրանցելուց հետո, պետք է հաշվառման վերցնեն զորամասի մեջ ընդունված իրենց անդամներին և պատրաստեն նրանց, վորպեսզի հավաքի բոպեին

նրանք հանդես գան վորպես կազմակերպիչներ և ղեկավարներ անկուսակցական մասսայի՝ յերկրային զորամասերում քաղաքական աշխատանքի մասին գոյություն ունեցող որենսդրությունների սահմաններում։

Յուրաքանչյուր կոմյերիտական պետք է նախորոք իմանա, թե հավաքի ժամանակ ինչ աշխատանք կարող է կատարել։ Ակումբներում աշխատողները, գրադարանապետները, ընթերցում տանողները, ագիտատորները, զինթղթակիցները և այլն— բոլորը պետք է առաջուց պատրաստված լինեն իրենց առաջադրված աշխատանքի համար։

Զորակոչի բոպեին կոմյերիտական-փոփոխիկները պետք է ներկայանալու յենթակա բոլոր քաղաքացիների հետ լինեն և իրենց որինակով ազդեցություն գործեն ամբողջ անկուսակցական մասսայի վրա՝ պայքար մղելով բոլոր հին բացասական յերևույթների դեմ (հարբեցություն, սրիկայություն և այլն)։

Հավաքներ գնացող բոլոր փոփոխիկներին տեղական կոմյերիտմիության կազմակերպությունը հանդիսավոր բարիներթեր է սարքում։

Նույնպես և այն տեղերում, վորտեղ հավաքներ պետք է տեղի ունենան, կոմյերիտմիության կազմակերպությունները սարքում են հանդիսավոր դիմավորում։ Այստեղ լավ կլիներ կազմակերպել ներկայացում, համերգ, կինո, կոմյերիտականների և փոփոխիկների շաղկապի յերեկո և այլն։ Այդ իրավ խթան կծառայեր ներկայացողների համար լավ տրամադրություն ստեղծելուն։

Հավաքի ճիշտ բոպեին յերկրային զորամասերում աշխատանքը տարվում է, գոյություն ունեցող ԽՍՀՄ ՀՌԽ և Քաղվարչության որենսդրությունների համաձայն, կադրային զորամասերի քաղաքաշխատանքի մեթոդներով և ձևերով։ Բայց այստեղ պետք է ուշադրություն դարձնել հետևյալ մոմենտների վրա.—

Հաճախ կոմյերիտականները կարծում են, թե հավաքի կարճատևության պատճառով չարժե մասսայական աշխատանք կատարել,—այս ճիշտ չե։

Միության զինված ուժերի շինարարության այնպիսի սիստեմի դեպքում, ինչպիսին յերկրային սիստեմն է, քաղաքական-լուսավորչական աշխատանքը յերկրային զորամասերում հատուկ կարևոր նշանակություն է ստանում։ Յերկրային զորամասերը կարող են, և պետք է մեր Միության բոլոր խուլ գյուղերում խորհրդային հասարակայնության լավագույն առաջնորդները լինեն։ Փոփոխիկները պետք է լավ ծանոթ լինեն Խորհրդային իշխանության ձեռք առած բոլոր միջոցների հետ, վորոնք կիրառվում են գյուղատնտեսության և արդյունագործության բարձրացման համար, և ծանոթ լինեն այն արգելքների հետ, վորոնք բոլոր յերկրների կապիտալիստներն այդ տեսակետից մեր դեմ են հարուցում։

Փոփոխիկն անհրաժեշտաբար պետք է լավ ծանոթ լինի կոոպերացիայի և այնպիսի ընկերությունների խնդիրների ու աշխատանքի հետ, ինչպես ՄՈՊՐ-ն է, «Յերեխաների բարեկամ», «Կորչի անգրագիտությունը» ընկերությունները են.—այս բոլոր հասարակական կազմակերպությունները սերտ կերպով կապված են առողջ և կուլտուրական գյուղ ունենալու համար մղվող պայքարի հետ։ Միայն հարկավոր է, վոր ինքը գյուղը փոփոխական կազմի ակտիվ մասի միջոցով ինքնագործունեություն հայտաբերի և ոգնության գա խորհրդային հասարակայնությանը նրա ձեռք առած միջոցների ասպարիզում։ Հավաքների ժամանակ մասսայական աշխատանքը պետք է ծավալել բառի ամենալայն իմաստով և սկիզբը պետք է լինի այն աշխատանքի, վորը պետք է անցկացվի մի հավաքից մինչև մյուս հավաքը ժամանակամիջոցում։

Հավաքների ժամանակ անհրաժեշտ է անկուսակցական ակտիվ առաջ քաշել, վորին գյուղում կարելի յե ոգտագործել մասսայական ռազմական և հասարակական աշխատանք կատարելու համար։

Կոմյերիտական-փոփոխիկները հավաքների շրջանում հաճախ մոցնում են աշխատանքի քաղաքացիական մեթոդներ, մի հանգամանք, վոր բացասաբար է անդրադառնում զորամասի կարգապահության և մարտունակության վրա։ Այս հար-

կավոր է արժատախիլ անել։ Կոմյերիտականները պետք է հանդիսանան ամենից որինակելի և կարգապահ կարմիր-բանակայինները, վորովհետև մեր կարգապահությունը (դիսցիպլինան) հիմնվում է հեղափոխական-մարքսիստական իդեոլոգիայի վրա և բղխում է մեր պետության, մեր բանակի նոր դասակարգային բնույթից։

Կոմյերիտականը մաքրասիրության, մաքրության ու առողջապահության համար մղվող պայքարում նախամարտիկը պետք է լինի, առաջինը կարմիր-բանակայիններին անհրաժեշտ գիտելիքներն ու տեղեկությունները պատվաստելու գործում, տեղեկություններ, վորոնք պիտի փարատեն նրա տգիտության և նախապաշարմունքների խավարը։

Հավաքի շրջանում նույնպես հարկավոր է զեկուցումների փոխանակություն ունենալ տեղական կազմակերպությունների ընդհանուր ժողովներում՝ կոմյերիտմիության աշխատանքը զորամասերում դնելու մասին, նրա նվաճումների ու պակասությունների մասին։ Իսկ կարմիր-բանակայինների ժողովներում պետք է դնել զեկուցումներ կոմյերիտմիության քաղաքացիական կազմակերպության աշխատանքում ձեռք բերած նվաճումների մասին։ Միաժամանակ նման զեկուցումներ պետք է լսվեն և կոմյերիտմիության կազմակերպությունների տեղական բյուրոների նիստերում՝ համապատասխան գործնական յեզրակացություններ հանելով։

Ամեն մի կոմյերիտական լավ պետք է իմանա այն զորամասի պատմությունը, վորը տեղավորված է իր բնակության մշտական տեղում, միաժամանակ ուսումնասիրելով և՛ կարմիր բանակի ու քաղաքացիական պատերազմի պատմությունը։

Ցերկրային սիստեմը ռազմական ապպարատն անմիջապես դեմ հանդիման է դնում գյուղի բազմամիլիոն մասսաներին, և դրա համար այդ սիստեմը պետք է հանդես գա վոչ միայն իբրև աշխատավորների ռազմական պատրաստության միջոց, այլև գյուղի կուլտուր-լուսավորչական ու քաղաքական կրթության և նրա տնտեսության վերելքի հզոր ուղեցույցը։ Այս աշխատանքում առաջին տեղը կոմյերիտմիությանը պետք է պատկանի։

Հավաքի ժամանակ կադրային հրամքաղկազմը ծանոթանալով տեղական պայմանների հետ և ուսումնասիրելով ամբողջ իր փոփոխական կազմին, ՀամԼԿՑԵՄ քաղաքացիական կազմակերպության հետ միասին աշխատանքի պլան են մշակում մի հավաքից մինչև մյուս հավաքը ժամանակաշրջանի համար։ Այս աշխատանքը պետք է շարունակությունը լինի հավաքի ժամանակ տարվող աշխատանքի, և բացի փոփոխիկների ընդհանուր կուլտուր-լուսավորչական զարգացումից, նպատակ ունի լայնացնել և խորացնել նրանց սովորած գիտելիքները, վորպեսզի միանգամից չկտրվեն զորական մասի շահերից։

Այս պատճառով պետք է սերտ կապ հաստատել կոմյերիտական փոփոխիկների և կադրի միջև, վորը կնպաստի ազգաբնակության շրջանում ռազմական աշխատանք անցկացնելուն։

Մի հավաքից մինչև մյուսը ժամանակաշրջանում տարվող աշխատանքի եական մոմենտներից մեկն էլ անգրագիտության և կիսագրագիտության վերացումն է, ամենից առաջ կոմյերիտականների, և ապա մնացած զորակոչիկների։ Այս աշխատանքը նախաձեռնողները պետք է լինեն կոմյերիտմիության կազմակերպությունները։ Սրանք նույնպես անհրաժեշտաբար իրենց վրա պիտի վերցնեն բոլոր խրճիթ-ընթերցարաններին կից ռազմական անկյուններ կազմակերպելու նախաձեռնությունը։

Այսպիսով՝ հավաքների միջև տարվող ամբողջ աշխատանքը պետք է կոմյերիտմիության քաղաքական աշխատանքի մի անբաժանելի մասը կազմի և պիտի անցկացվի որեցոր, վորոշ ծրագրով և սիստեմով։

Հավաքների միջև տարվող հաջորդական և, հետևապես, խիստ պլանավոր աշխատանքի շնորհիվ, կարելի կլինի հասնել յերկրային զորամասերի մարտական պատրաստության բարձրացմանը՝ չպահելով նրանց զորանոցներում և չվատնելով դրա վրա խոշոր գումարներ։

Ցերկրային զորամասերում ռազմական պատրաստության ժամկետների կարճատևությունը (ուր ամբողջ ծառայության տևողությունը 8 ամիս է), ռազմա-քաղաքական բնույթ կրող պահանջների անվերջ բարձրացումը, վորոնք առաջադրվ-

վում են կարմիր-բանակայիններին,—հարկադրում են մեզ բացառիկ ուշադրություն դարձնել նախակոչյան պատրաստության վրա, որը հանդիսանում է յերիտասարդության ռազմա-քաղաքական պատրաստության արտադրական սկզբնական ձևը։

Նախակոչյան պատրաստությունը զորական ուսուցման առաջին աստիճանը լինելով՝ իր առաջ խնդիր է դնում—պատրաստել այնպիսի մարտիկ, որը կարողանա գործել ջոկի կազմում։

Նախակոչյան պատրաստությունը քաղուսավորական աշխատանքի տեսակետից նույնպես պետք է նախապատրաստական աստիճանը լինի Կարմիր բանակի քաղաքականապես գիտակից մարտիկ դաստիարակելու գործում։

Այնքան պատասխանատու և բարդ խնդրի կատարումը, ինչպիսին նախակոչյան պատանեկության պատրաստությունն է, ուսուցման կարճատև ժամկետներում, կարելի չէ գլուխ բերել միմիայն քաղաքացիական և ռազմական կազմակերպությունների բոլոր ուժերի և միջոցների լարվածությամբ, նրանց մեկմեկու հասկանալով և յերկրի մարտական հզորությունն ու ժարտունակությունն ամրացնելու ձգտումով։

ՀԱՄԿՑԵՄ, որպես բանվորա-գյուղացիական պատանեկության ժասսայական քաղաքական կազմակերպություն նախակոչիկների շրջանում տարվող աշխատանքի մեջ, պետք է իր համապատասխան տեղը գրավի, և ինչպես որ ՀԱՄԿԿ (բ) Կարմիր բանակի կազմակերպության կմախքն է հանդիսանում, նախակոչյան պատրաստության համար ել պետք է իբրև կմախք հանդես գա ԼԿՑԵՄ։

Քաղաքական-լուսավորչական աշխատանքը նախակոչյան յերիտասարդության շրջանում պետք է մանի ՀԱՄԿՑԵՄ-ի պատանեկության շրջանում տարվող աշխատանքի ընդհանուր սիստեմի մեջ։ Կոմյերիտմիությունը նախակոչյան պատրաստության մեջ ամենաակտիվ դերը պետք է խաղա, առանց որի ԽՍՀՄ զինված ուժերի շինարարության ներկա սիստեմի ծավալումն ել միտք չունի։ Բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը նախակոչյան պատրաստության միջոցով առաջին անգամն է սկսում ծանոթանալ ռազմական գործի հետ։ Առաջին անգամն է, որ յերիտասարդ բանվորն ու գյուղացին ներկայանում են ուսուցման՝ իրենց քաղաքացիական պարտքը կատարելու պետության առաջ։

Աշխատավորների այս ասպարիզում կատարած առաջին քայլերը շատ անգամ վորոշում են և նրանց հետագա վերաբերմունքն ու հետաքրքրությունը դեպի ռազմական գործը։ Յերիտասարդությանը ռազմական գիտելիքներ պատվաստելու համար սկսած աշխատանքը, նրան ռազմական գործի հետ ծանոթացնելու նկատմամբ, պետք է այնպես կազմակերպել, որ նրա մեջ արթնանա կենդանի հետաքրքրությունը, ուշադրությունն ու սերը դեպի ռազմական արվեստը։

Նախակոչիկն անհրաժեշտաբար պետք է հասկանա, որ ռազմական պատրաստությունն ու դաստիարակությունը նրան առողջ, ճկուն, դիմացկուն ու ընդունակ են դարձնում ոչ միայն ռազմական գործի համար, այլև նրա ապագա գործունեության համար աշխատանքի ընթացքում։

Նախակոչյան պատրաստությունը պարտադիր կերպով միացնելով ամբողջ յերիտասարդությանը, ստեղծում է այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են կոմյերիտմիության գաղափարական ազդեցությունն ամբողջ յերիտասարդության դաստիարակության վրա ավելի կազմակերպված կերպով անցկացնելու համար։

Միայն հարկավոր է, որ այդ բոլոր պայմանները, նախակոչյան պատրաստության կազմակերպությունից ստացած այդ բոլոր առավելություններն ոգտագործվեն ոչ միայն ռազմական և ֆիզիկական պատրաստության համար, այլև կոմյերիտմիության ազդեցությունն ավելի շատ ունենալու համար անկուսակցական յերիտասարդության վրա և կոմյերիտմիության աշխատանքը հենց ՀԱՄԿՑԵՄ անդամների շրջանում ուժեղացնելու համար։

ՀԱՄԿՑԵՄ, ինչպես յերկրային դիվիզիաների հավաքներից առաջ ագիտացիոն կամպանիա չէ անցկացնում ժամուլի միջոցով և բանավոր կերպով, նույնպիսի ագիտացիա յել պետք

ե տանի և՛ նախակոչիկների շրջանում, նախակոչիկների առաջիկա հավաքների մասին։

Վարժական պունկտերի տեղավորված վայրերում կոմյերիտմիության կազմակերպությունը գործոն մասնակցություն է ստանձնում վարժական պունկտի, խոհանոցի, դասարանական պարապմունքների համար տեղերի, ռազմական անկյան սարքավորման մեջ և հրաձգակազմի համար համապատասխան բնակարաններ գտնելու մեջ։

Հրամկազմը հենց գալու առաջին որից պետք է ազատ լինի իր անձնական կյանքի կարգավորման հոգսից, վորպեսզի նա կարողանա իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել նախակոչիկների պատրաստության կազմակերպության վրա։

Այեն մի գավառական կոմիտե նախորոք հաշվառման է յենթարկում բոլոր կոմյերիտական նախակոչիկներին և բաժանում է նրանց վարժական պունկտերի վրա, այնպես վոր յուրաքանչյուր վարժական պունկտ և յուրաքանչյուր սովորող հերթ հավասար չափով ունենա կոմյերիտմիության կորիզ։ Համկկ (բ) անդամներն ու թեկնածուները հաշվառման են յենթարկվում կոմյերիտականների հետ միասին և բաշխվում են վերջիններիս հետ հավասար հիմունքներով։

Հաշվառքի վերցրած բոլոր կոմյերիտականներից և կոմժունիստներից զատվում են ավելի գրագետներն ու քաղաքականապես զարգացածները, վորպես քաղղեկներ, և նրանց հետ տարվում են առանձին կուրս-հավաքներ՝ համաձայն բարձրագույն քաղորգանների ցուցումների ու դիրեկտիվների։

Նախնական հրահանգչական պարապմունքները քաղղեկների հետ նախակոչյան պատրաստության կարևոր մոմենտներից մեկն է։ Քաղղեկների պատրաստության աստիճանից է կախված հավաքի հաջող իրագործումն ու յերիտասարդության շրջանում քաղաքական-լուսավորական աշխատանքի հետագա հաջող ծավալումը։ Դրա համար ել Համկկեմ լուրջ ուշադրություն պետք է դարձնի այդպիսի կուրսերի կազմակերպման վրա։

Կոմյերիտմիությունը տեղական կուսակցական, պրոֆեսիոնալ, խորհրդային կազմակերպությունների և զորական մասերի ակտիվ մասնակցությամբ ու ոգնությամբ պետք է ձեռք բերի հարմար շենքեր այդ հրահանգչական պարապմունքների համար, կազմակերպի քաղղեկների պարենավորման գործը և ապահովի նրանց անհրաժեշտ դասագրքերով և դասական պիտույքներով։

Կոմյերիտմիութենական կազմակերպությունները պետք է հաշվի առնեն և այն հանգամանքը, վոր նախակոչյան հավաքներն անցկացնելու համար քաղղեկների պատրաստությունը չափազանց մեծ նշանակություն ունի առհասարակ և՛ կոմյերիտական ակտիվի քաղաքական և կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար։

Ցանկալի յե, վոր կուրս-հավաքները գրավվեն և՛ կոմյերիտմիության կոլեկտիվների ապագա քարտուղարները, վորոնք նույնպես առաջուց զատվում են այդ աշխատանքի համար և պետք է բազմակողմանի պատրաստություն ունենան այդ աշխատանքին լծվելու համար։ Վոչ պակաս լուրջ ուշադրություն պետք է դարձնել և գրադարանային, ակմբային և ուրիշ մասսայական աշխատանքի (ՄՈՊՐ, Պաշը-Ավիաքիմ, «Ցերեխաների բարեկամ» և այլն) ղեկավարների նախնական պատրաստության վրա։

Զատված քաղղեկները նախակոչյան պատրաստության ամբողջ շրջանում մինչև նրանց բանակ զորակոչվելն աշխատանքից չպետք է կտրվեն. հարկավոր չե նույնպես նրանց փոխարինել ուրիշներով։

Համկկեմ կազմակերպության կողմից զատված ընկերներն անհրաժեշտաբար ամբողջ ժամանակ պետք է մասնագիտանան իրենց հանձնած աշխատանքի մեջ այնպես, վոր յեթե բանակ զորակոչվեն, կարողանան նույն աշխատանքը և այնտեղ անցկացնել։

Կոմյերիտմիության կազմակերպությունը նախորոք համաձայնության է գալիս համապատասխան խորհրդային, հասարակական և պրոֆեսիոնալ կազմակերպությունների հետ անհրաժեշտ կուլտուրական ուժեր ջոկելու մասին, իսկ շրջան-

ներում —անմիջապես ուսուցչի, գյուղատնտեսի, բժշկի և այլն հետ՝ նախակոչիկների շրջանում զեկուցումներ, դասախոսություններ և յերեկույթներ կազմակերպելու համար։

Կոմյերիտականներից և անկուսակցական թղթակից-նախակոչիկներից ամենից առաջ չոկվում է խմբկոլլեգիա, վորը կարողանա հավաքի հենց սկզբին պատի թերթ հրատարակի և լույս ընծայի։

Կոմյերիտական կազմակերպություններն իր ժամանակին միջոցներ պետք է ձեռք առնեն վարժական պունկտի համար կոմյերիտական գրադարան ունենալու, իսկ ուսուցման շրջանում հայթայթել կոմյերիտական թերթեր և ամսագրեր։ Մի խոսքով՝ պարապմունքների սկզբին պետք է այնպիսի պայմաններ ստեղծել, վոր նախակոչիկը վարժական պունկտ գալու րոպեյից և մինչև ուսուցման վերջը զգա տիրալիր և հոգատար վերաբերմունք դեպի ինքը, թե՛ պունկտի ղեկավար կազմի կողմից, և թե՛ կուսակցական, կոմյերիտական, խորհրդային և պրոֆեսիոնալ տեղական կազմակերպությունների կողմից։ Միայն այսպիսի պայմաններում կարելի յե նախակոչիկի մեջ դաստիարակել իր կարմիր բանակին սրտանց պատկանելու հպարտության գիտակցությունը։

Նախակոչիկների հավաքների ժամանակ, նույնպես և յերկրային զորամասերում բնակած վայրից հեռանալիս և ուսուցման պունկտերում կազմակերպվում են բարիյերթեր և հանդիպումներ յեկող յերիտասարդությանը։

Հավաքի ժամանակ քաղլուսաշխատանքը տարվում է Քաղվարչության որենսդրությունների և դիրեկտիվների համաձայն նախորոք մշակված պլանով։

Քաղլուսաշխատանքը պետի ծավալել հենց նախակոչիկների պունկտ գալու առաջին որից։ Այստեղ անհրաժեշտ է ուշադրությամբ ականջ դնել նախակոչիկների քաղաքական տրամադրություններին ու բարոյական վիճակին և արագ հականերգործել նրանց վրա քաղլուսաշխատանքի համապատասխան տեսակն ուժեղացնելով։

Կոմյերիտմիության կոլլեկտիվը (ՀամԼԿՅԵՄ ֆրակցիան) իր կարգապահությամբ, աշխատանքով և անձնական որինակով նախակոչիկների համակրանքն ու հեղինակությունն է նվաճում։

ՀամԼԿՅԵՄ կոլլեկտիվի ժողովները խորհուրդ է տրվում կազմակերպել դռնբաց, վորպեսզի անկուսակցական յերիտասարդությունից ավելի շատ թիվ կարելի լինի գրավել նրանց մեջ։

Ուսուցման պունկտի ամբողջ մասսայական աշխատանքը հարկավոր է բաժանել ՀամԼԿՅԵՄ և ՀամԿԿ(Բ) անդամների միջև, ամեն մեկին տալով անհատական առաջադրություն, ընդ վորում նրանց ստուգումը պետք է կատարեն կոլլեկտիվի բյուրոն և քաղղեկը։

ՀամԼԿՅԵՄ ֆրակցիայի բոլոր անդամները պետք է խստությամբ պահպանեն բանակային և միութենական կարգապահությունը։

Կոմյերիտականների կողմից բոլոր առաջադրությունների բարեխղճորեն կատարումը կարգապահության ամրացման ամենից լավ ֆակտորը կլինի։

Աշխատանքի ընթացքում պետք է անկուսակցական ակտիվ առաջ քաշել, վորին նույնպես մասսայական աշխատանքի պիտի լծել։ Կոմյերիտմիության ֆրակցիան հավաքի ժամանակ անհրաժեշտաբար պետք է լայն կամպանիա տանի անգրագիտության վերացման համար։ Պետք է այն տեղը հասցնել, վոր յեկած անգրագետ նախակոչիկն ուսուցման պունկտում մնալուց հետո բանակ զորակոչվելիս գրագետ լինի։ Այս ամենալավ շաղկապը կհանդիսանա կոմյերիտմիության և անկուսակցական գյուղացիական յերիտասարդության միջև։

Նախակոչիկների անգրագիտության վերացման աշխատանքը պետք է անցկացնել հավաքների միջև ժամանակաշրջանում, ԽՍՀՄ ժողովրդական Կոմիսարների Խորհրդի դեկրետի համաձայն։ Միայն թե պետք է, վոր կոմյերիտական կազմակերպություններն այս այնքան շատ կարևոր աշխատանքի ճյուղում գործոն մասնակցություն ցույց տան, վորովհետև մինչև այժմ այս ասպարիզում կոմյերիտմիության աշխատանքը թույլ ընթացել։

ՀամԼԿՅԵՄ կազմակերպություններն անգրագիտության

վերացման հանձնաժողովներում իրենց ունեցած ներկայացուցիչների միջոցով պետք է կենդանացնեն և ուժեղացնեն վերջիններիս գործունեությունը։ ՀԱՄԼԿՑԵՄ անդամների թվից գյուղական ուսուցիչները նույնպես միութենական դիսցիպլինայի կարգով կարող են եյական ոգնություն ցույց տան այդ գործին։

Անգրագետների և կիսագրագետների համար գոյություն ունեցող դպրոցներում անհրաժեշտ է տեղեր վերապահել և անկուսակցական նախակոչիկներին։ Վերջապես, ՀԱՄԼԿՑԵՄ կազմակերպությունները պետք է աժեն կերպ ոգնեն և աջակցեն այն որգաններին, վորոնք անգրագիտության վերացման գործն են վարում։ Այս բոլոր միջոցառումները, վերջին հաշվով, կնպաստին ազգաբնակության մեջ ռազմական գործն ավելի հաջողությամբ անցկացնելուն։

Հավաքի վերջում քաղղեկի և կոմյերիտմիության ֆրակցիայի նախաձեռնությամբ ուսուցման պունկտի ակտիվի ժողով է հրավիրվում և քննվում է մինչև մյուս հավաքի ժամանակաշրջանի ապագա աշխատանքի ծրագիրը։

Նախակոչիկների շրջանում տարվող միջհավաքային ամբողջ աշխատանքը պետք է մտնի կոմյերիտմիության բջիջների քաղաքական և կուլտուր-լուսավորչական գործունեության ծրագրի մեջ։

Կոմյերիտմիության բոլոր դպրոցների ծրագրերի մեջ անհրաժեշտ է մտցնել յերիտասարդության ռազմա-քաղաքական դաստիարակության մոմենտները։ Իսկ հիմնական ռազմա-քաքական աշխատանքը կենտրոնանում է ռազմական անկյունում, վորը համապատասխան կերպով հարմարեցվում է այդ նպատակի համար՝ կոմյերիտմիության անմիջական մասնակցությամբ։

Ռազմական անկյան աշխատանքի բովանդակությունը հարմարեցվում է տվյալ ռայոնի կազմի, զարգացման մակարդակի, ազգային, կենցաղային և այլ պայմաններին։

Միջհավաքային ամբողջ ռազմական աշխատանքը նախակոչիկների շրջանում պետք է տարվի քաղաքական, ռազմա-

կան և ֆիզիկական դաստիարակության և նախակոչյան յերիտասարդության պատրաստության ուղղությամբ։ Ռազմական աշխատանքը նախակոչիկների հետ ռազմական անկյունում, խրճիթ-ընթերցարանում և ակումբում տարվում է նույն հիմունքներով և նույն մեթոդներով, ինչ հիմունքներով և մեթոդներով տարվում է փոփոխիկների հետ, միայն այս աշխատանքի ծավալը պետք է համապատասխանի նախակոչիկների ռազմական պատրաստության մակարդակին։ Նախակոչյան յերիտասարդությունը, քանի վոր իրեն մեծամասնությամբ քիչ է ծանոթ ռազմական գործի հիմունքներին, և անհրաժեշտ է նրա մեջ արագացնել լայն ինքնագործունեություն, դրա համար միջհավաքային աշխատանքը պետք է տարվի հետաքրքիր և հրապուրիչ ձևերով։

Այստեղ կարելի յե հանձնարարել ոգտագործելու սպորտա-մրցական մեթոդը հրաձգային գործում և այլ սպորտի տեսակներում։

Ընկերությունների, խրճիթ-ընթերցարանների և ակումբների ռազմա-դաստիարակչական աշխատանքը, առաջին հնարավոր դեպքում, պետք է կատարվի բաց ոդում և ուղեկցվի քաղաքական, շարժական, ռազմական և սպորտական խաղերով։ Ինչ վերաբերում է սենյակում տարվող պարապմունքներին, սրանց նույնպես պետք է կենդանի ձև տալ, ինչպես կարմիր բանակի, տորմիզի, քաղաքացիական պատերազմի պատմության հետ ծանոթանալիս, այնպես էլ մեր և կապիտալիստական պետությունների ռազմական գործում ձեռք բերած նվաճումների հետ ծանոթանալիս (հետաքրքիր պատմվածքների, զրույցների, հոդվածների և այլ նյութերի ոգտագործում)։

Մինչև այժմ այս աշխատանքի վրա լուրջ ուշադրություն չի դարձված։ Կոմյերիտմիության կազմակերպությունները հետագայում պետք է հաշվի առնեն և արմատախիլ անեն բոլոր բացերը, հիշելով, վոր առանց նախակոչյան պատրաստությունն իր կոչման բարձրության վրա դնելու, հնարավոր չե

նորմալ շինարարությունը, զարգացումն ու յերկրային սիստեմի ամրացումը։

Կոմյերիտմիությունն իր ամբողջ լրջությամբ պետք է միահամուռ կպչի այդ կարևոր աշխատանքին, աջակցելով այդպիսով մեր Միության ամուր պաշտպանունակության ապահովմանը։

Բ. ԿԱՅԼՈՒՍ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ՅԵՎ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Անցյալ իմպերիալիստական պատերազմը ցույց տվեց, որ տեխնիկայի ժամանակակից դրությամբ պետությունների զինված կռիվը բանակներով միայն չի վճռվում, կռվին մասնակցում են լայն մասսաները, համարյա ամբողջ ազգաբնակությունը։ Առավել ևս այս բոլորը յուրահատուկ կլինի ապագայի ընդհարումների համար, որոնք անկասկած քաղաքացիական պատերազմի, դասակարգերի կռվի բնույթ կստանան։

Սակայն վոչնչացման տեխնիկական միջոցների հսկայական աճումը մարդու դերը չի պակասեցրել, որպես պատերազմի գլխավոր գենքի։ Ճակատամարտերի դաշտերում առաջվա նման մարտ կմղեն վոչ թե դրեդնոուտները, տանկերը, սավառնակները, թնդանոթները, գնդացիրներն ու հրացանները, այլ մարդիկ, նրանց ղեկավարողները։ Հետևապես, այդ մարդկանց համապատասխան պատրաստությունը յերկրի պաշտպանության կազմակերպության աշխատանքի կարևոր մասն է կազմում։

Այս պատրաստությունը պետք է ընդգրկի իր մեջ ազգաբնակության լայն մասսաներին։ Վորակի կողմից նա պետք է բարձր կանգնած լինի, որովհետև ժամանակակից մարտական գործողությունների բնույթը ուժեղ կերպով բարձրացրել է անհատ մարտիկի նշանակությունը, չափազանց բարձր են նրան առաջադրած քաղաքական գիտակցության, տեխնիկական վարժության պահանջները և նույն չափով ել ֆիզիկական և բարոյական պարտականության պահանջները։

Աշխատավորների համար ռազմական դժվարությունները

թեթևացնելու և խնայողություն անելու նպատակով Խորհրդային Միության ձեռնարկված անցումը՝ Կարմիր բանակի զինվորական ծառայության կրճատված ժամկետներին և ռազմական շինարարության յերկրային-միլիցիոն ձևերին, առաջ բերեց անհրաժեշտություն, վորպես հերթական կարևոր խնդիր, բանակային ծառայությունից դուրս բերել և ռազմական գործի բոլոր այն ելեմենտներին, վորոնք հաջողությամբ կարելի յե անցնել աշխատանքային դաստիարակության ու կրթության՝ ընդհանուր քաղաքացիական սիստեմով։ Եվ այդպիսով հնարավորություն ստեղծվեց Կարմիր բանակի շարքերում ծառայելու կարճատև ժամանակն ամբողջովին ոգտագործել տեխնիկական և տակտիկական վարժությունների համար և մարտիկների հոգե-ֆիզիկական հատկությունների և ունակությունների անմիջական գործնական մարզանքի համար։

Այսպիսով՝ Խորհրդային պետությունը, յերկրի ամբողջ տնտեսությանն առաջադրած ռազմական խնդիրների հետ միասին, իրագործելով կոմունիստական կուսակցության IX հաժագումարի վորոշումը, կանգնեց աշխատավոր բնակչության պատրաստության խնդրի առաջ, վորպեսզի այդ բնակչությունը Կարմիր բանակում կարողանա իր հեղափոխական մարտական պարտքը կատարել։ «Ռազմականացումը», այսինքն՝ ռազմական շինարարության նպատակների համար հաժապատասխան պետական և հասարակական պրոլետարական կազմակերպությունների կրթական-դաստիարակչական աշխատանքի ամբողջ սիստեմի ոգտագործումը, բնականորեն, վերաբերում է և՛ ֆիզիկական կուլտուրային։ Վերջինս այդ ասպարիզում բաց է անում ամենից լայն հեռանկարներ։

Քաղաքացիական ֆիզկուլտուրայի աշխատանքի ռազմական խնդիրների, նույնպես և նրանց գործնականում իրագործելու մեթոդների մասին պարզ պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է կանգ առնել մարտիկի պատրաստության այն կոնկրետ մոմենտների վրա, վորոնց կարելի յե հաշվի առնել և ծառայեցնել ֆիզկուլտուրային։

Առաջինը, ըստ կարևորության, վոր պահանջվում է մարտիկից—այդ նրա առողջությունն է, այսինքն՝ ամուր նյարդային սիստեմն է, առողջ սիրտ, արյունատար յերակներ, առողջ թոքեր, մարսողական և արտադրական ճիշտ գործող ապպարատ և այլն։ Միայն ֆիզիկապես առողջ մարդը կարող է դիմանալ այն ծանրությանը, վորը նրա որգանիզմի վրա յե դնում ժամանակակից մարտական ծառայությունը։ Գիտական հետազոտությունների տվյալներով, այդ ծանրությունը միքանի անգամ շատ եներգիա յե վատնում, քան շատ տեսակ ծանր պրոֆեսիոնալ աշխատանքի ժամանակ։ Միայն ֆիզիկապես առողջ մարդկային որգանիզմը կարող է, առանց վորևե վնաս հասցնելու իրեն, տանել ժամանակակից մարտական գործողությունների ֆիզիկական և բարոյական փորձությունները։ Ամուր առողջությունը միայն թույլ կտա իրեն տիրապետողին արագ և ավելի հեշտ հարմարվել ամեն տեսակ հանգամանքներին ու գործունեության պայմաններին, հեշտությամբ և հաջողությամբ կարող է յուրացնել ռազմական գործում պահանջվող բարդ վարժությունները։ առողջ մարդը շատ ավելի հեշտությամբ կարող է տանել ամեն տեսակ մարտական զրկանքներն ու արհավիրքները (վիրավորումներ, ջղերի քայքայում և այլն)։

Հիվանդոտ, թուլակազմ մարդիկ բանակում գործ չունեն անելու։ պատերազմում, մանավանդ մարտի պայմաններում նրանք բեռ կդառնան, վորովհետև շրջապատող ընկերների հոգեբանության վրա ներգործելով, նրանց մեջ բարոյալքում առաջ կբերեն։

Ֆիզիկական կուլտուրան մարդու առողջությունն ամրացնելով, դրանով հենց հիմք է դնում վոչ միայն նրա աշխատանքային գործունեությանը, այլև պաշտպանությանը պատրաստ լինելուն։ Մեր յերկրի աշխատավոր բնակչության առողջության մակարդակի բարձրացումը, մի շարք սոցիալ-տնտեսական ոգուտների հետ միասին, կհանդիսանա մեր Կարմիր բանակի հզորության աճման ֆակտորը։ բանակի համար ֆիզիկապես առողջ լրացումը մարտունակության գլխավոր պայմաններից մեկն է։

Բայց մարտիկի համար քիչ է ունենալ միայն առողջ և

նորմալ աշխատող օրգանիզմ։ Մարտական աշխատանքը բարձր զարգացման և մարզվածության պահանջներ է դնում, պահանջում է համապատասխան հոգե-ֆիզիկական հատկություններ։ Այդպիսի հատկություններին են վերաբերում՝ ակտիվությունը, հաստատակամքը, համարձակությունը, յեռանդը, տոկունությունն ու հաժառությունը, սառնարյունությունը, վճռականությունը, մի բանի մեջ շուտ գլխի ընկնել, սովորություն իր գործողությունները յենթարկելու կոլեկտիվի շահերին, կոլեկտիվ. պատասխանատվության զգացմունք, ընկերականություն և փոխադարձ ոգնություն, կարողանալ իր ուժերն ու ընդունակությունները հաշվի առնել, կարողանալ յեռանդի նվազագույն կորուստով խոշորագույն հետևանքների հասնել և այլն։

Ժամանակակից մարտում մարդու վարքագիծը պայմանավորող այս հատկությունները կարելի յե ձեռք բերել միայն յերկարատև դաստիարակչական աշխատանքի միջոցով, վորը պետք է տարվի վորոշ ուղղությամբ օրգանիզմի աճման և ձևավորման տարիներում։ Ֆիզիկական կուլտուրան այդ խնդիրները վճռելու համար ունի անփոխարինելի միջոցներ։ Բոլորին հայտնի յե, վոր անհատի բարոյական հատկությունները դաստիարակելու համար նշանակություն ունի մրցակցության սկզբունքը, վորը կիրառվում է ֆիզիկական վարժությունների զանազան ձևերի մեջ և մանավանդ սպարտական խաղերի ձևի մեջ։ Մեծանուն ֆիզիոլոգները և առողջաբանները գտնում են, վոր մրցակցությունը բացառիկ կարևոր նշանակություն ունի օրգանիզմի կանոնավոր զարգացման և տղամարդու անհատականության դաստիարակության համար. պատանեկության տարիքին այս բնական կարիքին արգելք հանդիսանալ, նշանակում է արգելք հանդիսանալ պատանեկության իսկական տղամարդու վերափոխվելուն։ Վերջին ժամանակները ռազմա-գիտական միտքը նույնպես հետաքրքրվեց խաղի ռազմա-դաստիարակչական կողմով։ Մի գերմանացի գեներալ հրճվանքով ու նախանձով է խոսում այն մակագրության մասին, վորը նա կարդաց Բելգիայի Նամյուր քաղաքի խաղերի համար հիանալի ստադիոնում—«Խաղերը հայրենիքի համար»։

Բելգիացիների պետության համար խաղերի մասսայական տարածման նշանակության մասին ունեցած նման հայացքի իլլյուստրացիան, գերմանացի գեներալի կարծիքով, արժանի յե նմանվելու։

Կոլեկտիվ (խմբական) սպորտական խաղերը պահանջում են մեծ ուշադրություն, վոչ միայն նրա համար, վոր նրանք մրցակից չունեն անհատի անձնական և կոլեկտիվ կարևորագույն հատկությունները դաստիարակելու և հիանալի կերպով ամբողջ օրգանիզմը ամրացնելու մեջ, հանդիսանալով անվիճելիորեն ավելի մատչելի և հասկանալի ազգաբնակության լայն մասսաների համար, վորպես ֆիզիկական վարժությունները կիրառելու մի ձև, այլ սպորտական խաղում արտահայտվում է խաղացողների իսկական ընավորությունը։ Հաստատ, տոկուն, ուղիղ, համարձակ, հասարակական բնավորություններն ել իմացվում են նույնքան տեսողական կերպով և առանց սխալվելու, վորքան և արտահայտվում են մեղմ, վախկոտ, հակահասարակական և անբարեխիղճ բնավորությունները։ Իրար հետ յերկար խաղալուց հետո ֆուտբոլիստներն ու բասկետբոլիստներն իմանում են իրար բնավորության բոլոր դրական ու բացասական հատկությունները։ Զափազանց գնահատելի յե և այն հանգամանքը, վոր սպորտական կոլեկտիվը—խումբը—կարող է իր ամեն մի անդամի վրա հսկայական ազդեցություն ունենալ։ Սպորտական խաղերի այս հետաքրքիր հատկությունները, վորոնք կառուցվում են մարդու հուզական (эмоциональный) ընդունակությունների հաշվառման վրա, անհրաժեշտ է լայն կերպով ոգտագործել յերիտասարդության շրջանում դաստիարակչական աշխատանք կատարելու համար։ Ֆիզիկական կուլտուրայի գիտական աշխատողների համամիութենական կոնֆերենցիայում ընկ. Կրուպսկայան օրինակ բերեց մի դեպք, վորը բնորոշում է ֆիզիկական վարժությունների հուզական կողմի հաշվառման և ոգտագործման հնարավորությունն ու անհրաժեշտությունը. արբունքի հասնելուն մոտ մի պատանի, վորը գողերի խմբի հետ եր լինում, պատահաբար ընկնում է ֆուտբոլիստական խմբի մեջ, կամավոր կերպով յենթարկվում

ե խմբի կարգապահությանը, սովորում է գործել կոլեկտիվում և, հաջորդաբար խմբի կարգապահ անդամի ետապներն անցնելով, վորպես հասարակական սպորտ-աշխատող բոլորովին կտրում է իր կապերը իր անցյալ հանցավոր կյանքից, դառնում է այդ հասարակության անդամը և, վերջապես, կոմյերիտական։

Սակայն անհրաժեշտ է հիշել, վոր սպորտական խաղն էլ ունի իր թե լավ և թե վատ կողմը։ Նրա դրական հատկությունները կարտահայտվեն այն դեպքում միայն, յեթե նա ամեն կողմից ճիշտ կատարվի։ Այս գնահատելի մեթոդի հոգե-ֆիզիկական դաստիարակության ռացիոնալ կիրառման հիմնական պայմաններն են. ա) խիստ պահպանումն այն որենքների, վորոնց վրա կառուցվում է խաղը և վորի մեջ է հիմնական իմաստն ու յուրաքանչյուր խաղի մանկավարժական նշանակությունը, և բ) առողջապահության պահանջների պահպանումն ու բժշկական վերահսկողությունը։

Ռազմական պատրաստության տեսակետից խաղը, վորպես մեթոդ, չունի իրեն հավասարը հոգե-ֆիզիկական դաստիարակության մյուս մեթոդների շարքում։ Կարելի յե մատնացույց անել Անգլիայի և Ամերիկայի վրա, վորտեղ խաղը յերիտասարդության ֆիզիկական դաստիարակության հիմնական ձևն է հանդիսանում և հասակավորների շրջանում հանգստի և ժամանցի լայն տարածված զբաղմունքն է։ Բուրժուազիան հիանալի կերպով հաշվի յե առնում և ոգտագործում է սպորտական խաղերի գնահատելի հատկություններն՝ իր դասակարգային նպատակների համար։ Անցյալ համաշխարհային պատերազմում վերև հիշված յերկու յերկրները—Անգլիան ու Ամերիկան—ժշտական բանակներ չունենալով, կարողացան կարճ ժամանակում յեվրոպական ցամաքի վրա հանել բավականին լավ պատրաստված ջոկատներ, վորովհետև մասսական սպորտը—առավելապես խաղերը—մեծ դաստիարակչական աշխատանք եր կատարել դպրոցում և բազմաթիվ կամավոր կազմակերպությունների մեջ։

Վոչ մի կասկած չկա, վոր սպորտական խաղին մեծ ապագա յե խոստանում և՛ մեր Միության յերիտասարդության աշխատավոր մասսաների համար։ Քաղաքի և գյուղի աշխատավորների նյութական դրությունը բավականին լավացել է, և այժմ յերիտասարդությունն արդեն ունի կենսական յեռանդի հայտնի պաշար։ Մի շատ կարևոր հարց է առաջ գալիս—գտնել յերիտասարդ որգանիզմների այդ պահեստի եներգիայի սոցիալապես շահավետ ձևով ոգտագործելու ճիշտ մոտեցումը։ Մասսայական բռնամարտն ու խուլիգանության աճումն այն են ցույց տալիս, վոր անհրաժեշտ է յերիտասարդական այդ յեռանդին ուղղություն տալ և առողջ հունի մեջ դնել։ Ճիշտ կազմակերպված սպորտական խաղերն ընդունակ են անփոխարինելի դեր խաղալ հին կենցաղի մնացորդների դեմ պայքարելու գործում և միաժամանակ կատարում են մասսայական ֆիզիկական առողջացման խնդիրներ և պատրաստում են աշխատանքի ու զինված պաշտպանության համար։

Ասածներից պետք է անել այն յեզրակացությունը, վոր սպորտական խաղերը կոմյերիտմիության կազմակերպությունների ուշադրության կենտրոնում պիտի լինեն։ Կոմյերիտականները պետք է նրանց կազմակերպիչներն ու պրոպագանդիստները լինեն և այնպիսի ղեկավար դիրքեր գրավեն, ինչպիսի ֆունկցիաներ վոր ունեն խմբերի կապիտաններն ու դատավորները։ Ճիշտ է, վորևե բասկետբոլի, հանդբոլի կամ մի այլ խմբի հեղինակավոր կապիտան դառնալու համար անհրաժեշտ է ցուցահանել իր սեփական ընդունակությունները, լինել ղեկավար, այսինքն՝ ունենալ այն բոլոր հատկությունները, վորոնք նախատեսվում են շարքային խաղացողների մեջ դաստիարակելու։ Ֆիզկուլտուրական մասսայի գործնական ղեկավարության կուրսը, սպորտական խաղերի գծով, հարկավոր է տոկունությամբ կիրառել կյանքում և հենց նրա համար, վոր այդ ղեկավարությունը կհանդիսանա ապագա հրամատարների և հասարակական աշխատողների դաստիարակության լավ նախապատրաստական դպրոցը. հրամանատարներ և հասարակական աշխատողներ, վոր պետք է կոմյերիտականներից լինեն։ Սպորտական հրապարակից կապիտանի ազդեցությունը կարող

է տարածվել հեռուն և առհասարակ խմբի բոլոր անդամների վարքուբարքի վրա։ Թույլատրելի չէ, յերբ խմբի կապիտանը հակահասարակական մեկէ է, սրիկա յե. այսպիսի դեպքերում կոմսերիտմիության ակտիվն անհրաժեշտաբար պետք է վճռական միջոցներ ձեռք առնի կանխելու, վոր պեսզի բարոյապես չքայքայվի ամբողջ խումբը։

Դժբախտաբար ներկայումս տարածված սպորտական խաղերը մեզ լիակատար կերպով բավարարել չեն կարող։ Նրանցից ամենից ընդհանրացածը ֆուտբոլն է, վորը պահանջում է առանձին, թանգ արժեցող վոտնաման, լավ պատրաստված դատավորներ, առանձին, ընդարձակ, հավասար հրապարակ և այլն։ Ազարտն ու կոպտությունը, վոր այնքան հաճախ է յերևան գալիս այդ խաղի մեջ, կարող են վերացվել սահմանված կանոնների հաստատ պահպանումով, վորի համար պահանջվում է փորձված դատավոր, վորից նշանավոր չափով կախված է խաղի մանկավարժական ոգտակարության շրջանակներում անցկացնելը։

Գեղեցիկ խաղ է բասկետբոլը. պահանջում է վոչ ընդարձակ հրապարակ, կազմված է իրանի, վերևի և ներքևի վերջավորությունների զանազան շարժումներից, հիանալի կերպով զարգացնում է շարժումների և արագության համակարգությունը (հատկություններ, վորոնք այնքան անհրաժեշտ են ժամանակակից մարտիկի համար), բազմակողմանի կերպով զարգացնում է որգանիզմը. բասկետբոլը ռազմա-դաստիարակչական տեսակետից ավելի հետաքրքիր սպորտական խաղերից է խաղագնդով։ Դժբախտաբար այս խաղն ել հազիվ թե լայն գործադրություն ունենա գյուղում, վորտեղ այդ խաղն առանձնապես ոգտակար կլիներ Կարմիր բանակի համար. կդաստիարակեր գյուղական պատանեկության մեջ այն հատկություններն ու վարժությունները, վորոնք նրա մեջ չկան շնորհիվ նրա առորյա քիչ շարժուն աշխատանքի բնույթի։ Սրա լայն տարածմանը արգելք է հանդիսանում նրա կանոնների բարդությունը, այնքան բարդ, վոր նույնիսկ մեծ քաղաքներում ել լավ դատավորները սակավաթիվ են։ Նույնը կարելի յե ասել և մյուս վոչ քիչ

գնահատելի խմբական խաղագնդով խաղի՝ հանդերձի մասին (ձեռքի գնդակ), բազմաթիվ կանոններով, բարդ դատավարությամբ։ Մյուս խաղագնդով սպորտական խաղերը դեռևս մեզանում ընդհանրացած չեն։ Դրա համար հերթական հարց է դրվում—վերոհիշյալ խաղերն ըստ հնարավորին հասարակ դարձնել և պրոպագանդա մղել մյուսների համար, վորոնք նույնքան գնահատելի յեն դաստիարակության տեսակետից, բայց ավելի մատչելի խաղեր են խաղագնդով, ինչպես, որինակ, իտալական լապտան, մարտական գնդակը (յերբ ծանր մարմնամարզական գնդակը խմբակներով իրար են շպրտում), վոլեյբոլը և այլն։

Համենայն դեպս, պետք է իմանալ, վոր խաղագնդակը ամենից ոգտակար և առաջնահերթ գործիքն է իր անհրաժեշտության տեսակետից, վորը մասսայական ֆիզիկական դաստիարակության գործում բացառիկ արժեք է ներկայացնում։ Նույնիսկ ամենահասարակ խաղերը խաղագնդակով—շրջան կազմած մեկ-մեկու շպրտելով և բռնելով, նպատակին խփելով, հեռավորության վրա շպրտելով և այլն—չափազանց կենդանի ընդունելություն են գտնում ինչպես յերիտասարդության, նույնպես և հասակավորների կողմից. նշանավոր չափով ֆիզիոլոգիական հետևանքներ են ունենում, սովորեցնում են կատարելապես տիրապետելու շարժումներին, ամրացնում են ամբողջ մարմինը, տրամադրությունը բարձրացնում և դաստիարակում են կենսուրախություն։

Շատ կարևոր հատկություն է հանդիսանում մարտիկի համար նպատակային շարժումների արագությունը կամ, ինչպես գիտական լեզվով են ասում, շարժողական ռեակցիաների արագությունը, նույնպես և աչքաչափը, սրատեսությունը, ուշադրությունը, ճարպկությունը և այլն։ Գյուղացիական յերիտասարդության, վորը կարմիր-բանակային կենդանի մասսայի 90% է կազմում, այս հատկությունների դաստիարակության վրա առանձնակի ուշադրություն պետք է դարձնել։

Այս պահանջներին շատ են համապատասխան շրջան կազմած կամ յերկու տողանների (шеренга) միջև զանազան քաշի

ու չափի միքանի խաղագնդակով վարժությունները։ Ամեն մի խաղին տալով գնդակ ձգելու ու վորսալու բնույթ, հաջորդաբար, մեկը մյուսի յետևից միքանի գնդակներ, որինակ՝ մեծ ծանր, մեծ թեթև, փոքր ծանր, փոքր թեթև, նաև փոփոխելով խաղի թափը, կարելի յե խաղացողներին սովորեցնել մկանային ապպարատի արագ ղեկավարելուն, մշակել նրանց մեջ նուրբ մկանային զգացմունք, վորն այնքան մեծ նշանակություն ունի մարդու գործունեության համար և նամանավանդ մարտիկի գործունեության համար։

Ամենամոտիկ խնդիրը պետք է լինի ֆիզկուլտուրայի քաղաքի և գյուղի ընկերություններին սպորտական ինվենտար հայթայթելը, վորն արտահայտվում է զանազան ծավալի ու քաշի մարմնամարզական խաղագնդերը լցնելու համար բրեզենտի ծածկոցների լայն պատրաստության և տարածման մեջ։ Լցնելու համար վորպես նյութ կարող է ծառայել ծովախոտը, լորակը։

Լաուն-տեննիսը, վոր մինչև վերջին ժամանակներն էլ բուրժուա և ինտելիգենտ սիրողների նեղ շրջանի արտոնությունն է յեղել, հոգե-ֆիզիկական պատրաստության տեսակետից մեծ արժեք է ներկայացնում։

Այս խաղի ընթացքում կատարելապես զարգանում են շարժումների արագությունն ու ճշտությունը, աչքաչափությունը, մկանային զգացմունքը, ուշադրությունը և սրատեսությունը. լաուն-տեննիսն սպորտի անփոխարինելի մի տեսակն է հոգե-ֆիզիկական պատրաստության համար մի շարք արհեստների նկատմամբ, վորոնք վերև թված ֆունկցիաների մեծ զարգացում են պահանջում։ Մասնավորապես, լաուն-տեննիսը կարելի յե հանձնարարել մեզ համար այնքան կարևոր ավտոյի և ավիոգործի աշխատող կադրի պատրաստության համար։ Դրա համար քաղաքներում պետք է այս տեսակ սպորտին ավելի մեծ ուշադրություն նվիրել, քան մինչև այժմ նվիրվել է։

Դաստիարակչական և առողջապահական տեսակետից մեծ արժեք են ներկայացնում մասսայական ձմեռային խաղերը ձյունի վրա, որինակ՝ շտուրմ տալ բերդի վրա և այլն։

Սահնակային սպորտը, վորը չափազանց շատ տարածված է և ժողովրդականացած գյուղացիական մասսաների մեջ, նույնպես արժանի յե ուշադրության, նրա ֆիզկուլտուրական արժեքի տեսակետից։ Սովորաբար տարածված է յերիտասարդության մեջ և ընդունվում է վորպես զվարճություն ու ժամանց, վորը իբր թե վոչ մի կապ չունի ֆիզիկական դաստիարակության հետ։ Սակայն իսկապես վոր ժողովրդական սպորտի այս տեսակն իր խոր արմատներն ունի գյուղացիական կենցաղի մեջ, քիչ արժեք չի ներկայացնում և մարտիկի կարևոր բարոյական հատկությունների դաստիարակության համար։ Սահնակի կայծակի արագությամբ սահելը, մանավանդ յեթե սարը թեք է, հարուստ է վերելքներով ու վարելքներով, վտանգի ուժեղ զգացողություն է առաջացնում, դաստիարակում է արիություն, հավատ դեպի ինքը, վճռականություն և գործողությունների արագություն, սրատեսություն, սառնարյունություն, գերազանցորեն բարձրացնում է կենսուրախությունը և եներգիան։ Շատ գյուղերում սահնակի տեղ գործ են ածում հաստ տախտակ 2 մետր յերկարությամբ, տակից ծեփում են թրիք և ջրով վողողում սառցանալու համար։ Այս պարզ գործիքը զարգացնում է հսկայական գործողություն, վորով և անհատի բարոյական հատկությունների դաստիարակության հարուստ հեռանկարներ է բաց անում։ Պետք է ընդգծել, վոր կենսուրախությունը շատ թանգ մի հատկություն է հանդիսանում մարտիկի համար։

Ավելորդ է ասել, վոր այդպիսի սպորտի այն հրաշալի տեսակը, ինչպիսին դահուկն է, անժիշկական կիրարկելի նշանակություն ունի ռազմական գործում։ Կարմիր բանակը չափազանց շահագրգռված է դրանում, վոր իր շարքերը մտնող յերիտասարդությունը դահկային գործն իմանա, վորը մեծ չափով գործադրվում է մեր Միության տերրիտորիայի վրա ձմեռային մարտական գործողությունների պայմաններում։ Դահուկների գյուղական տեղանքներում (փոստ, վորսորդություն, տեղափոխություն և այլն) ոգտակար ձևով կիրառումը նույնքան հնարավոր է, վորքան և նրանց մարտական կիրառումը։ Դահուկային սպոր-

տը, բացի իր գործադրական նշանակությունից, իրեն հավասարը չունի ձմեռային սպորտի մյուս տեսակների մեջ բազմակողմանի ֆիզիկական զարգացման և առողջական արժեքի տեսակետից։

Զմշկավազ սպորտը նույնպես մտնում է այն միջոցների խմբի մեջ, որոնց միջոցով մենք կարող ենք կարմիր բանակի մարտական ծառայության համար յերիտասարդության ֆիզիկական պատրաստությանը աջակցել։

Ինչքան ել ուզում է առաջ գնա ռազմական տեխնիկան, այնուամենայնիվ մարտիկը շարժումներ կատարելու համար պետք է գործադրի իր ֆիզիկական ուժերը, որոնցից հորինվում է նրա գործունեությունը թե մինչև մարտը և թե մարտի ժամանակ։ Յեթե նույնիսկ նկատի չառնենք զենքին և կռվի տեխնիկական միջոցներին տիրապետելը, այն շարժումները, ինչպես վազքն է, քայլվածքն է, թռիչքներն են, նետումն է, սողալն է, բարձրանալն է ու ծանրության տեղափոխությունն է և այլն, միշտ կմնան տեխնիկական հայթայթման տեսակետից ամենից հարուստ բանակների մարտիկների անփոխարինելի աշխատանքը։ Սակայն մարտիկը պիտի կարողանա վոչ միայն ֆիզիկական աշխատանքի բոլոր ցույց տված տեսակները տեխնիկապես ճիշտ և խնայողաբար կատարել, այլև կարողանալ յերկար ժամանակ կրկնել նրանց ամենաբազմապիսի, հաճախ անբարենպաստ պայմաններում։ սրա համար առանձին մարզանք է պահանջվում, առանց որի չի կարելի նվազագույն ճիգերով առավելագույն հետևանքների հասնել։ Այսպիսով մենք տեսնում ենք, որ ֆիզկուլտուրայի ընկերությունները իրենց կանոնավոր գործունեության ծրագրի մեջ մտցնելով թվարկյալ շարժումների և նրանց մեջ կատարելագործվելու տեխնիկայի վարժությունը, մարմնամարզական դասերի ձևով, լինեն դրանք թե սպորտական վարժությունների, այդ միևնույն է, որոնք տարվում են սեկցիոն աշխատանքի կարգով—նրանք բոլորը աջակցում են ազգաբնակության ռազմական պատրաստությանը։ Մենք ճիգ ու ջանք պետք է թափել քաղաքում և գյուղում ֆիզկուլտուրայի ընկերությունների ցանցը լայնացնելու, նույն-

պես և այնպես անել, որ նրանց գործունեությունը չսահմանափակվի միայն ֆիզկուլտուրնիկների նեղ շրջանին սպասարկելով։ Ֆիզկուլտուրայի ընկերությունը պետք է ընդունել որպես ակտիվիստների հիմնական կորիզը, որոնց խնդիրները պետք է լինի վոչ միայն ֆիզիկական կուլտուրայի միջոցներից անհատականապես ոգտվելը, այլև աշխատավորների լայն խավերի շրջանում ֆիզկուլտուրայի մասսայական-հանրամատչելի ավելի հասարակ տեսակների մասին պրոպագանդա մղելը։ Յեվ մասսայական աշխատանք ծավալելու համար ինքը, ֆիզկուլտուրայի ընկերությունը պետք է լինի ամուր շաղկապված և տեխնիկապես պատրաստված մի կորիզ։ Որպես ֆիզկուլտուրայի ռազմականացման հետ սերտ կապված հերթական խնդիր առաջ է քաշվում ընկերության անդամների շրջանում կամավոր խիստ դիսցիպլինա սահմանելու անհրաժեշտությունը։ Այդ դիսցիպլինան մեծ մասամբ հաստատվում է ֆիզկուլտուրական ետիկայի վրա, այսինքն՝ ֆիզիկական կուլտուրայի հիմնական դրությունների պահպանման վրա։

Ֆիզկուլտուրական աշխատանքը ռազմական պատրաստությանը մոտեցնելու միջոցառումներից պետք է ցույց տալ հետևյալը։ Ֆիզկուլտուրնիկների խմբակների զանազան տեսակ կազմափոխությունների և տեղափոխությունների ժամանակ հաջորդական վարժությունների ընթացքում մտցնել միատեսակ Կարմիր-բանակում ընդունված շարքեր ու հրամաններ (Բ.-Գ.Կ.Բ. հետևակի մարտական ծառայությունը, մասն I, առաջին հրատ., Պետհամհրատ)։

Հրաձգային սպորտը որեցոր, ավելի ու ավելի ժողովրդականություն է նվաճում։ Դրա համար գործը ճիշտ հիմքերի վրա դնելու համար անհրաժեշտ է ավելի սերտ կերպով կապվել տեղական ռազմական զորամասի հետ. մասնավորապես ռազմագիտական ընկերության (ռազմ. գիտ. խմբակ)՝ գծով միշտ կարելի լե ղեկավարող և հրահանգչական ցուցումներ ստանալ։ Ռազմա-կիրարկելի ֆիզիկական պատրաստության գործում մեծ նշանակություն ունի վորսորդությունը, մանավանդ խոշոր գազանների։ Վորսորդական խմբակներ կազմակերպելու վրա պետք

ե նայել վորպես ֆիզիկական կուլտուրայի ելեմենտների, ռազմական ունակությունների դաստիարակության հետ կապելու շատ արժեքավոր մի ձևի վրա։ Մեծ նշանակություն ունի ֆիզդաստիարակության գործի համար մեզանում շատ քիչ տարածված տուրիզմի պրոպագանդան, այսինքն՝ վոտքով զբոսանքի գնալ, ճամբարային կյանքը, յերկարատև եքսկուրսիաների կազմակերպությունը՝ բաց յերկնքի տակ գիշերելով և այլն։

Արտասահմանում, մանավանդ Գերմանիայում կան բազմաթիվ հատուկ ընկերություններ և միացյալ խոշոր միություններ, վորոնք նպատակ են դրել բազմակողմանի կերպով ոգտագործել առողջական և դաստիարակության բնական ֆակտորները տուրիզմի մեթոդներով։ Հեղինակավոր ռազմական մասնագետները միաձայն ընդունում են, վոր այդ միություններն ու դաստիարակության այդ յեղանակները բնության պայմաններում, տեղանքներում, ունեն ռազմա-դաստիարակչական, մարտական ծառայության համար պատրաստողական մեծ դեր։ Մեզ մոտ նման աշխատանքը բավականաչափ յեռանդով չի զարգանում և վոչ միշտ ռացիոնալ կերպով։

Անհրաժեշտ է կամպանիա մղել պարբերական եքսկուրսիաների համար, կազմակերպելով այնպես, վոր այդ եքսկուրսիաներն ոգտագործվեն ֆիզկուլտուրայի և ռազմա-կրթական ու դաստիարակչական նպատակներով։ Այսպիսի նպատակահարմար ձևով կազմակերպված եքսկուրսիաները կարող են սերտորեն կապվել ընդհանուր կրթական աշխատանքի և տարբական ռազմական ունակություններ ձեռք բերելու հետ, ինչպես, որինակ՝ բեռը շալակած բոլոր տեսակի վոտով տեղափոխություններ, զանազան տեսակ բնական ու արվեստական արգելքների հաղթահարում, կողմորոշում տեղանքի վրա, տեղական առարկաներով և ուրիշ նշաններով, նշանարարության (сигнализация) հետ գործնական ծանոթություն, հեռավորությունների աչքաչափով վորոշելը, գործնական ծանոթություն յերթաշարժի առողջապահության հետ և այլն։

Ֆիզիկական կուլտուրայի ընկերության գործը պիտի լինի ֆիզիկական կուլտուրայի իր պլանային դասերի սիստեմի մեջ

մտցնել ռազմական տարբական ունակությունների ուսումնասիրությունն ու մարզանքը, այն ունակությունների, վորոնք նպաստում են մարդուն բոլոր տեղանքներում վստահ ու ազատ զգալ իրեն յեվ գործել, բազմակողմանի ոգտագործել ձեռք բերած հմտությունները՝ այս կամ այն խնդիրը լավագույն ձևով վճռելու համար։ Անհրաժեշտ է հիշել, վոր անհատ մարտիկի պատրաստության գործում տեղանքի գործողությունների ուսուցումն ու մարզանքը հանդիսանում է մարտական պատրաստության շատ կարևոր բաժիններից մեկը։ Մարտական պարագայում շահում է նա, ով մյուս հակառակորդի հետ հավասար պայմաններում ավելի լավ է կարողանում ոգտվել աշխարհագրությամբ այնպիսի լավ դաշնակցի, ինչպիսին տեղանքն է հանդիսանում։

Կոմբինատիությունը անհրաժեշտաբար պետք է սպորտական խաղերի տեղանքում կազմակերպելու նախաձեռնությունը իր վրա վերցնի։ Նման խաղերին հիմք կարող են ծառայել ամենաբազմապիսի խնդիրները, ինչպես, որինակ, հեռալել ամենաբազմապիսի խնդիրները, տախուզությունը, հակառակորդի խմբակների շրջապատումը, հետապնդումը, ճակատի պատառումը և այլն։ Խաղերի մեջ մեծ թվով մարդիկ կարող են մասնակցել յերկու կողմից ել։

Տեղանքում կատարվող նման ռազմական-սպորտական խաղերը, նախորոք մշակված պայմաններում և խնդրի պարզ ու վորոշ դնելու դեպքում, կարող են իրենց մեջ ամփոփել կիրարկելի բնույթ ունեցող բազմատեսակ ֆիզիկական վարժությունները. հենց առաջին հերթին բոլոր վոտով տեղափոխությունների տեսակները, ինչպես՝ վազքը և քայլքը բոլոր ձևերով, սողալը, տեղանքին հարմարվել կարողանալը, թշնամու տեսողությունից քողարկվելը, բարձրանալը, վտանգավոր դեպքերում կողմորոշվելը տեղանքում, դիտել, թագնվել և այլն։ Այս խաղերում մարզանքի և կատարելագործության մեծ հնարավորություններ են ստանում՝ լսողությունը, տեսողությունը, ուշադրությունը, տեսողական հիշողությունը, արագ և խելացի վճիռներ ընդունելը, տոկունությունը, սառնարյունությունը և զսպվածությունը, իսկ ղեկավարները հնա-

բավորություն են ստանում և իրենց խմբի հրամատարության հմտությունը։ Տեղանքում կազմակերպած սպորտական խաղերի մեջ կարելի է մտցնել, առանց վորևե կերպ նրանց փնասելու, և՛ ռազմա-կրթական ելեմենտ։ Այդպիսի մոմենտներ են՝ ինչպես կողմորոշումն ու քարտեզով առաջնարժումը, զանազան տեսակ նշանարարությունները (ձայնական, տեսողական), քողարկումը, ուղեկալների ծառայությունը, հետախուզության զանազան խնդիրները, շարժումը, պահպանությունը և ուրիշները, նույնպես գործնականապես կիրառելու մեծ հնարավորություն են ստանում, թեկուզ խաղերի փոքր հաջող կերպով կազմակերպելու դեպքում։ Ռազմա-սպորտային բնույթ կրող խաղերի կանոնները բարդ պետք է լինեն։ Նրանք մշակվում են կամ ֆիզկուլտուրայի ընկերության խմբակների միջև կամ առանձին ընկերությունների միջև փոխադարձ համաձայնությամբ։ Վորևե շաբլոնի ձև տալն աննպատակահարմար է։ Ընկերության անդամներից նախաձեռնող խմբակը հրահանգչի ոգնությամբ, ռազմական գիտելիքների տեղական ընկերության անդամների աջակցությամբ, ցանկացած ժամանակ, միշտ կարող է մշակել հետաքրքիր խմբական խաղեր դաշտում, անտառում, ցերեկը և յերեկոյան, վորոնք առողջ զվարճությունից և բավականությունից զատ, միաժամանակ կարող են ունենալ ֆիզկուլտուրական և ռազմա-դաստիարակչական մեծ նշանակություն։ Միայն թե չպետք է մոռանալ, վոր մրցակցական կողմը պետք է լիակատար չափով դրսևորված լինի յեվ այնպիսի ձևով, վորը խաղի կատարյալ ճիշտ հաշիվն ու պատկերն է տալիս, հայտնի պիտի լինի և հաղթող կոլլեկտիվը։ Այն դեպքերում, յեթե ըստ խաղի իմաստի անհրաժեշտ է հակառակորդի կենդանի ուժը վոչնչացնել (հայտնաբերած, գերի վերցրած), կարելի է գործադրել հեշտ կտրվող ժապավեններ կամ քուղեր՝ մասնակցողների վրա ամրացրած, պարզ տեսանելի հատարներ մեջքի կամ կրծքի վրա, և ուրիշ այլ յեղանակներ, վորոնք կնպաստեն խաղից դուրս քշելու բոպեն վորոշելուն։

Քիչ թե շատ ֆիզիկապես վարժված և մարզված ֆիզկուլտուրականների հետ հարկավոր է անցնել տարվա ընթացքում

մի քանի ռազմա-սպորտային խաղեր և՛ աննպաստ յեղանակների պայմաններում։ Պետք է մասնակցողների առողջապահական դրության մասին նախորոք մտածել։ Այդ ժամանակ մի այն նման խաղը մեծ բավականություն կպատճառի և շատ ոգուտ կտա։ Մեր յերիտասարդությանը պետք է սովորեցնել ֆիզիկական փորձություններին։ Այդ փորձությունների մեջ նա կվարժեցնի իր կամքը և կդաստիարակի արիություն և տոկունություն։ Նախազգուշացնենք ծայրահեղությունից, այն է՝ ֆիզիկապես ծանրաբեռնելուց։ Ֆիզիկական կուլտուրայի հիգիենական դրությունները պետք է ուշադրությամբ նախատեսել և խիստ կերպով պահպանել։

Ֆիզկուլտուրայի ընկերությունների գործունեությունը առանձնապես մեծ ոգուտ կարող է տալ յերիտասարդության մեջ՝ զանազան տեսակ վոտով տեղափոխությունների ունակություններ դաստիարակելու գործին։ Այստեղ առանձնապես անհրաժեշտ է հիշեցնել վազքի և քայլքի մասին կտրուկ տեղանքով (կրոսս-կոունտրի)։ Այդ նպատակով ընտրում են այնպիսի ճանապարհ, վորն անցնում է դաշտի, անտառի, թփուտի, ձորերի, բարձունքների և այլ բնական ու արհեստական արգելքների միջով։ Ֆիզիկական վարժությունների այս տեսակը մեծ բավականություն է պատճառում, յեթե խելացի կերպով նախորոք մարզանք է կատարվել, և յեթե հետաքրքիր ճանապարհ է ընտրած։ Կարող է լինել մասսայական, խմբական և անհատական. նրան կարելի է հաջողությամբ կապել վորևե նպատակի հետ՝ ճանապարհի կիսին կամ վերջին (լողանալ, հանգիստ առնել, եքսկուրսիա և այլն)։ Նայած թե խմբակները վորքան են ուժեղ և մարզված, նրանց զանազան աստիճանի պատրաստության դեպքում կարելի է ընտրել տարբեր յերկարության և հաղթահարելու դժվարության համեմատ ճանապարհներ։ Վազքն ու քայլքը կտրտուկ վայրում պետք է կոլլեկտիվ և անհատական մրցակցությունների պլանային ծրագրերի մեջ մտցնել։ Ռազմական գիտելիքներն ու հմտությունները տարածելու համար այդպիսի մրցությունները, առանց փնասելու նրանց սպորտական հետաքրքրությանը, կարելի է

բարդացնել՝ հեռավորությունը ամենաարագ կերպով հաղթահարելու խնդրի մեջ մտցնելով միքանի լրացուցիչ մոմենտներ, որինակ՝ քարտեզով առաջշարժում, առաջշարժում տեղական առարկաներով, կողմնացույցով, հետքով և այլն։

Ֆիզկուլտուրան ռազմական պատրաստության հետ կապելուն նպաստող մյուս միջոցառումներից պետք է մատնանշել այն, որ ամեն մի ֆիզկուլտուրնիկ պարտավոր է իրեն և ընկերոջն առաջին ոգնությունը հասցնելու հետ ծանոթանալ։ Անձնական և հասարակական առողջապահության հիմունքների հետ ևս պետք է ծանոթ լինի ֆիզկուլտուրայի ընկերության ամեն մի անդամ։ Եթե յերիտասարդությունը գլխովին սովորել է լողալ, խեղդվողներին փրկել, այս նույնպես անգնահատելի ոգուտ կբերի Կարմիր բանակին։ Տղա յերիտասարդության ֆիզիկական պատրաստության համար անհրաժեշտ է սրաժարտության (фехтование) ու պաշտպանվելու և առանց զենքի հարձակման ձևերի ուսումնասիրությունը։

Պետք է ասել, որ ֆիզիկական կուլտուրայի «ռազմականացում» ասելով հաճախ լիովին չեն հասկանում այն, ինչ հարկավոր է յեվ ինչ կարելի յե անել, և իրենցից հնարում են հատուկ ռազմական վարժություններ, ռազմական պարագայի հետ առնչություն չունեցող և այլն։ Այդպիսի մոտեցումը գործին աշխատապես ճիշտ չե։ Ինչպես որ չի կարելի փողոց դուրս գալ և հենց առաջին պատահած վոչ-զինվորական մարդու գլխին կարմիր-բանակայինի կորդակ (шлем) հագցնել և դրանով նրան կարմիր-բանակային դարձնել, այնպես ել անհնար է մարտիկ պատրաստել միայն ռազմական գործի հետ ծանոթացնելու միջոցով, առանց համապատասխան կերպով նրան զարգացնելու և առանց նրա որգանիզմը մարզելու։ Միանգամից շատ բանի յետևից չպետք է ընկնել։ Եթե մեզ հաջողվի ֆիզիկական կուլտուրայի միջոցով Կարմիր բանակին տալ այնպիսի յերիտասարդություն, որն ընդհանրապես առողջ լինի, կարողանա ինչպես հարկն է քայլել, վազել, կատարելապես տիրապետել իր մկանային և շնչառության ապպարատին, ոժտված լինի նախաձեռնության շնորհքով, ոժտված լինի արիությամբ

և կոլեկտիվիստական սովորություններով,— այդ արդեն մեծ նվաճում կլինի մեր կողմից։ և հենց դրանումն է քաղաքացիական ֆիզկուլտուրայի աշխատանքի ռազմական հիմնական խնդիրը։

Հետևապես, ֆիզիկական կուլտուրայի «ռազմականացման» հիմնական գիծը վոչ թե նրանումն է, որ պետք է ստեղծել ինչ-որ ֆիզկուլտուրայի հատուկ ռազմական սիստեմ և ունենալ առանձին ռազմա-սպորտային կազմակերպություններ, այլ ներկայումս գոյություն ունեցող քաղաքացիական ֆիզկուլտուրական կազմակերպությունների աշխատանքը զարգացնել (քանակապես և վորակապես)։ Ինչքան որ հանրապետության հանդեպ ունեցած զինվորական պարտքը մտնում է ԽՍՀՄ քաղաքացու մյուս պարտականությունների շրջանակի մեջ, այնքան ել զինվորական ծառայության համար ֆիզիկական պատրաստությունը պետք է ազգաբնակության հոգե-ֆիզիկական ընդհանուր բազմակողմանի պատրաստության մի մասը կազմի։ Անհրաժեշտ է ըմբռնել, որ կրթական-դաստիարակչական և առողջապահական աշխատանքը վարող բոլոր պետական ու հասարակական կազմակերպությունների գծով ֆիզկուլտուրայի լայն և ճիշտ կերպով դրումը միայն հնարավորություն կտա Կարմիր բանակին տալ այնպիսի լրացում, որը ֆիզիկական դրությամբ կհամապատասխաներ նրա մարտական պահանջներին։ Մյուս կողմից՝ միայն այն դեպքում, յեթե Կարմիր բանակումն ել ֆիզիկական կուլտուրան դրված կլինի իր բարձրության վրա. յուրաքանչյուր զորացրումից հետո քաղաքն ու գյուղն ստանում են խորհրդային ֆիզիկական կուլտուրայի հագարավոր պատրաստված պրոպագանդիստներ և կազմակերպիչներ, մի հանգամանք, որը մեծապես կնպաստի ֆիզիկական կուլտուրայի հետագա զարգացմանը։

Այսպիսով, միայն բանվորա-գյուղացիական պետության պայմաններում ազգաբնակության դաստիարակության և կրթության սիստեմը կարող է միասնություն կազմել, որը մյուս կուլտուրական խնդիրների հետ միասին նախատեսում է և՛ յերկրի զինված պաշտպանության խնդիրը։

Բոլոր այս բացատրությունները բավական են հասկանալու համար յերիտասարդության ռազմական պատրաստության գործում ֆիզիկական կուլտուրայի դերը և նշել կոմյերիտմիության գործունեության գիծը, վորն այդ ասպարիզում գլխավոր նախաձարտիկն ե, նախաձեռնողն ու կազմակերպողն ե։

Թող սխալ չհամարվի, յեթե ասենք, վոր յերիտասարդության ֆիզիկական պատրաստության ճիշտ դրումը նախակոչյան ռազմական պատրաստության ամենագլխավոր խնդիրներից մեկն ե։

Խորհրդային ֆիզկուլտուրայի «ռազմականացում»-ը պետք ե ընթանա նույն ուղիով, ինչ ուղիով վոր ընթանում ե պրոլետարական պաշտպանությունը արտադրական աշխատանքի հետ ձուլելու միացած ամբողջ աշխատանքը։

Ն. ԱՐՏԵՄԵՆԿՈ ՅԵՎ Ս. ՖՐՈՒՄԻՆ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ, ՌԱԶՄԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ ՅԵՎ ՊԱԶԸ-ԱՎԻԱՔԻՄԸ

1. ԽՆԴԻՐՆԵՐ ՌԱԶՄԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ԱՍՊԱՐԻԶՈՒՄ

Ավիաքիմի և ՊԱԶԸ միանալու և մի հասարակական միասնական հզոր կազմակերպություն — ՊԱԶԸ-Ավիաքիմ կազմելու հետևանքով խորհրդային լայն աշխատավոր հասարակայնության մասնակցության հարցերը՝ մեր պաշտպանունակության ամրացման գործի և ավիացիոն-քիմիական արդյունագործության զարգացման վերաբերյալ — բավական լայնացան և առաջ քաշեցին կազմակերպչական և տակտիկական կարգով մի շարք նոր պահանջներ։

Չպետք ե մոռանալ, վոր վոչ բոլոր մեր լայն հասարակայնությունը, վոր առաջ գոյություն ունեցող այդ առանձին-առանձին կազմակերպություններն եր ընդգրկում իր մեջ, այդ ձուլումը ընդունեց բաց սրտով։ «Հայրենասիրական» տրամադրություններ ունեցին իրենց ընկերության նկատմամբ թե ՊԱԶԸ-ն անդամները և թե Ավիաքիմի անդամները, վորի մասին ընկ. Վորոշիլովը ՊԱԶԸ-Ավիաքիմի պլենումում իր կարդացած զեկուցման մեջ արտահայտեց այդ տրամադրությունները հետևյալ խոսքերով. «...Ցավ մեզ վիճակված ե յենթարկվել հայրենասիրական տրամադրությունների, թող այդ «հայրենասիրությունը» լինի ընդհանուր բոլորիս համար — «հայրենասիրություն» մեր ամբողջ ՊԱԶԸ-Ավիաքիմ կազմակերպության համար։ Այնպես տեսակ տեղական հայրենասիրությունն այնքան լավ բան չե, բայց յեթե այդ հայրենասիրությունը առողջ ե, հեղափոխական ե, խորհրդային ե, մեր մեծ գործի համար ե նա, յեկեք նրան թույլ տանք, վոր լինի մեկ հայ-

բենասիրություն և վոչ թե յերկու, վոր մեզ միայն խանգարել կարող է և վնասել»։

Միևնույն դրությունը ծառանում է և կոմյերիտմիության առաջ, նրա պրոպագանդիստական աշխատանքի ասպարիզում, յերբ պետք է բացատրել ՊԱԶԸ և Ավիաքիմի մի միասնական ընկերության մեջ ձուլվելու եյության մասին, վորպիսի բացատրության նպատակն է ուժեղացնել պաշտպանունակությունը, ավիացիոն-քիմիական արդյունագործության զարգացումն ու ամրացումը, վորի դերը հսկայական է լինելու ժամանակակից պատերազմում, մի քանի դեպքերում ել վճռական։ ՊԱԶԸ-Ավիաքիմի այս խնդիրը պետք է լիակատար կերպով դիտակցված լինի, առաջին հերթին, այդ կազմակերպության բոլոր անդամների կողմից։

Ահա թե ինչու կոմյերիտմիության ռազմական պրոպագանդան նպատակ դնելով ՀԱՄԼԿՅԵՄ անդամների գիտակցության մեջ ամրացնել, իսկ նրանց միջով և ամբողջ յերիտասարդ աշխատավորության մեջ՝ ակտիվ մասնակցելու և ամեն կերպ աջակցելու ռազմական վարչությանը յերկրի պատրաստության գործում։ Կոմյերիտմիության ռազմական պրոպագանդան, առաջին հերթին, այդ կազմակերպությանն է վերաբերում, այն իմաստով, վոր աջակցի կատարելապես իր բնույթ խեղդելու նկատված տրամադրությունները և այդպիսով միանգամից մոտենա գործնական և գործին վերաբերող հարցերը վճռելուն, հարցեր, վորոնք կապված են յերկրի պաշտպանության ամրացման հետ։

Ռազմական պրոպագանդայի այդ ուղղությամբ լայնատարած աշխատանքը նշանավոր չափով կթեթևացնի ռազմական դաստիարակության և բնակչության պատրաստության հիմնական խնդիրների կատարումը, խնդիրներ, վորոնք թելադրում են հասկացողություն և գիտակից վերաբերմունք ունենալ դեպի գոյություն ունեցող այնպիսի կազմակերպությունը, ինչպիսին ՊԱԶԸ-Ավիաքիմն է։

Յերկու կազմակերպությունների ՊԱԶԸ-Ավիաքիմի մեջ ձուլումը պետք է ընդունել վոչ միայն այդ յերկու ընկերու-

թյունների աշխատանքի պարալելիզմի վոչնչացում, այլև վորպես աշխատանքի մի նոր շրջան և թափ, վորն ուղղված է՝ մի կողմից ազգաբնակության բազմապիսի ռազմական նախապատրաստության և յերկրի տնտեսության վրա՝ պաշտպանության գործի համար, իսկ մյուս կողմից—խաղաղ տնտեսական շինարարության վրա, վոր ընդգրկում է այդ տնտեսության բոլոր ճյուղերը՝ գլխավորապես ավիացիոն-քիմիական արդյունագործության ասպարիզում։

Աշխատանքի այս չափացույցը ՊԱԶԸ-Ավիաքիմի առաջ բաց է անում ընդարձակ հնարավորություններ՝ մեր յերկրի պաշտպանունակության ամրացման գործում։

Այդ պատճառով ՊԱԶԸ-Ավիաքիմի աշխատանքի այս հիմնական մոմենտների պարզաբանումն առաջնակարգ խնդիրը պետք է լինի կոմյերիտական կազմակերպությունների համար իրեն անդամների շրջանում, վորպեսզի, առաջիկա աշխատանքի բնույթը լուսաբանելով, կարելի լինի ապահովել այն որգանական, բայց վոչ ձևական, այդ յերկու ընկերությունների ձուլումը. այդ ընկերությունները հետագայում իրեն գործնական ու գործին վերաբերող աշխատանքի միջոցով ստորին բջիջներում, նրանց կենդանացման միջոցով կտան մեզ համար անհրաժեշտ հետևանքները։

Դրա հետ միասին ռազմական պրոպագանդայի ասպարիզում կոմյերիտմիության կազմակերպություններին առաջադրած խնդիրները պետք է ընդլայնվեն և դրանք վերաբերում են հետևյալ մոմենտներին.

ա) ՊԱԶԸ-Ավիաքիմի մեջ գրավել աշխատավոր յերիտասարդությունը, վորպես անդամներ և սրանց բոլորի մեջ արմատացնել ռազմական տարրական գրագիտությունը, վորը պետության պաշտպանունակության ամրացման ուղիներից մեկը պիտի լինի. բ) զարգացնել և ամրացնել յերիտասարդության մեջ այն համոզմունքը, թե անհրաժեշտ է ավիացիոն-քիմիական արդյունագործության ընդարձակումը, վորն այնքան կարևոր է մեր պայմաններում, թե՛ կարմիր բանակի մարտական հզորությունն ուժեղացնելու և թե՛ խաղաղ պայմանների աշ-

խատանքի համար (գյուղատնտեսություն, առևտուր և փոխադրություն, փոստ և այլն)· գ) ամբապնդել և խորացնել նախակոչյան պատրաստության ժամանակ անցած ռազմական գիտելիքները· դ) ծանոթացնել ռազմական պատրաստությունը չանցած յերիտասարդությանը ռազմական գործի հիմունքների հետ, նույնպես և կարմիր բանակի ու տորմիղի պատմության, կյանքի, կենցաղի և ուսուցման հետ· ծանոթացնել և՝ ռազմական տեխնիկայի նվաճումների հետ մեզանում և կապիտալիստական զետությունների մեջ, և ե) յերիտասարդությանը ֆիզիկապես դաստիարակել, պատրաստել այնպես, որ ժամանակակից պատերազմների պայմաններում նա լավագույն և հաջող կերպով կատարի իր մարտական աշխատանքը։

Միության ռազմա-դաստիարակչական այս խնդիրների հաջեմատ ել անհրաժեշտ է ընդգրկել բոլոր ակումբները, խրճիթ-ընթերցարանները, պիոներական ջոկատները, առաջին և յերկրորդ աստիճանի դպրոցները, գյուղական յերիտասարդության դպրոցները, գործարանա-զավոդային աշակերտության դպրոցները, պրոֆտեխնիկումները, բանֆակները և բարձրագույն դպրոցական հաստատությունները, նաև արտադրական պատրաստության վարժական կայանները։

Այստեղից յեզրակացնում ենք, որ ռազմական պրոպագանդայի աշխատանքը պետք է մտնի յերիտասարդության դաստիարակության ընդհանուր սիստեմի մեջ, միության ամբողջ քաղաքական և կուլտուր-լուսավորական աշխատանքի մի մասը կազմի և կրի յերկարատև ու պլանային բնույթ՝ բաժանվելով ՀԱՄԼԿՅԵՄ անդամների, պիոներների և մնացած աշխատավոր յերիտասարդության շրջանում տարվող աշխատանքի։

ՀԱՄԼԿՅԵՄ անդամների ռազմական դաստիարակությունը անհրաժեշտ է դնել այնպես, որ յերբ կոմյերիտականը բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի շարքերն է կոչվում, իրոք կարողանա իր հասակակից զորակոչված մնացած մասսայի համար աշխատող ու ղեկավար դառնալ, իսկ բանակից դուրս յերիտասարդության շրջանում ռազմական պրոպագանդայի և աշխատանքի կազմակերպիչը լինել։

Կոմյերիտականն իբրև ռազմական պրոպագանդայի կազմակերպիչ, ամենից առաջ խմբակների աշխատանքի մեջ է քաշում իր խմբակի անդամներին, իսկ նրանց միջոցով և անկուսակցական յերիտասարդության լայն խավերին։

Կուսակցական և կոմյերիտմիության կազմակերպությունները ռազմական պրոպագանդայի աշխատանքը լավ հիմքերի վրա դնելու համար պետք է մեծ ուշադրություն նվիրեն հասարակական կարծիքն իր կոչման բարձրության վրա դնելուն և այդ աշխատանքի հետաքրքրության բարձրացմանը· նաև ուշադրություն նվիրեն հասարակական դիսցիպլինային, որն անհրաժեշտ է ՊԱԶԸ-Ավիաքիմի գծով տարվող աշխատանքի տվյալ ասպարիզում։

ՊԱԶԸ-Ավիաքիմի գծով գումարվող բոլոր հավաքներին և կոնֆերենցիաներին կոմյերիտմիության կազմակերպություններն անպայման ակտիվ մասնակցություն պետք է ունենան, որի համար նրանք առաջուց պետք է համաձայնության գան համապատասխան որգանների հետ։

Ամառվա ընթացքում կոմյերիտմիության ռազմական պրոպագանդայի աշխատանքը կարող է արտահայտվել յերիտասարդության համար ռազմա-սպորտական զբոսանքներ և մրցակցություններ կազմակերպելու մեջ, որի համար պետք է ոգտագործել առավելապես տոն որերը, ՊԱԶԸ-Ավիաքիմի կողմից քաղաքներում և գյուղերում կազմակերպվող «պաշտպանության որերը»։

Բացի դրանից, անհրաժեշտ է ամբողջ յերիտասարդությունը Կարմիր բանակի և տորմիղի կազմակերպած ռազմական տոնակատարություններին ակտիվ կերպով մասնակից դարձնել։

Ամեն մի կոմյերիտմիության կազմակերպություն պետք է նախորոք հաշվի առնի այն ամբողջ պրոպագանդիստական աշխատանքը, որը նա պիտի կատարի պատերազմի ժամանակ՝ ռազմական կազմակերպություններին անմիջական ոգնություն ցույց տալու զորահավաքն անցկացնելու մեջ և այլն։

Կոմյերիտմիության մասսայական ռազմական պրոպագանդայի հաջողությունն ապահովող կարևորագույն պայմաններից

մեկը վոր կա, այդ կոմյերիտմիությունն է։ Ռազմական-հեղափոխական պատմությունն ուսումնասիրելն է և հաշվառումը այն բոլոր պակասությունների, վորոնց թվին մասնավորապես պատկանում են,— Խորհրդային իշխանության համար կռվելու մասսաները լավ կազմակերպված չլինելը, իր գործողությունների մյուս ռայոնների գործողությունների հետ համաձայնեցված չլինելը, ուժերի ու միջոցների վոչ լրիվ հաշվառումը։ Սրանցով նախկին սխալները կրկնելու հնարավորության առաջն է առնվում։

Ռազմական պրոպագանդան անցկացնելու ժամանակ Համ. ԼԿՑԵՄ պետք է նկատի առնի կանանց ռազմական պատրաստության կարևորությունը, մանավանդ կոմյերիտուհիներին, վորոնք պատերազմի ընթացքում կարող են ինչպես մի քանի ապաշար պաշտոններ վարել (որինակ՝ սանիտարների, հիվանդապահների, խոհարարուհիների և այլն), այնպես և կուլտուրավորական աշխատանք տանել բանակում։ Վերջիններս պետք է քիչ թե շատ ծանոթ լինեն ռազմական շինարարության հիմունքների հետ և ունենան տարրական ռազմական գրագիտություն։ Այս հարցում մենք բավական թույլ ենք, և անհրաժեշտ է, վոր կոմյերիտմիության կազմակերպությունները լուրջ և յերկարատև ուշադրություն սկսեն դրա վրա։

Ռազմական պրոպագանդայի աշխատանքն անհրաժեշտ է հարմարեցնել յերիտասարդության հասակին և ռազմա-քաղաքական զարգացման մակարդակին։ Սրա համեմատ հարկավոր է վորոշել ռազմական աշխատանքի ձևերը, մեթոդներն ու բովանդակությունը։

Միության ռազմա-դաստիարակչական աշխատանքը ղեկավարելու և կազմակերպելու համար (Համ.ԼԿՑԵՄ թե կենտրոնական և թե տեղական ապպարատներում) զատվում է հատուկ ընկեր. ընդ վորում այն կազմակերպությունների մեջ, վորտեղ կան ռազմական հանձնաժողովներ, այդ ընկերը պետք է այդ հանձնաժողովի անդամը լինի։

Շատ ցանկալի կլիներ, յեթե այդ ընկերոջը քաղաքական աշխատանքի ու Համ.ԼԿՑԵՄ որգանական բաժինների մեջ գրավեին և պատանի պիոներների բյուրոյի կազմի ու սպորտական հանձնաժողովների մեջ քաշեին։

Ղեկավար բնույթ կրող բոլոր նյութերը, աշխատանքների պլանը, նույնպես և ՊԱԶԸ-Ավիաքիմի խմբակների ու բջիջների, դպրոցների ծրագրերն առաջուց պետք է համաձայնեցնել Ռազմական վարչության որգանների և ՊԱԶԸ-Ավիաքիմի կազմակերպությունների հետ ռազմական պրոպագանդայի կազմակերպիչների միջոցով։

Ռազմական պրոպագանդայի աշխատանքի կազմակերպողը անհրաժեշտաբար պետք է սերտ կապ հաստատի այն բոլոր կազմակերպությունների հետ, վորոնք անմիջապես անց են կացնում կամ մասնակցություն ունեն ռազմականացման աշխատանքի մեջ. նա պետք է հետևի, վոր բոլոր կոմյերիտմիութենական հրատարակությունները (որաթերթեր, ամսագրեր, դասագրքեր և ուրիշ հանրամատչելի գրականություն) բովանդակեն իրենց մեջ հարկավոր չափով ռազմա-քաղաքական նյութեր, հոդվածներ և ձեռքի տակ ունենան համապատասխան նյութեր։

ԿԿ-ի, նահանգկոմի և այլ հիմնարկությունների հրահանգելու և ստուգման ժամանակ, այն իմաստով, թե ինչպես է դրված կոմյերիտմիության աշխատանքը կազմակերպությունների մեջ, կոմյերիտական աշխատանքի մյուս ճյուղերի հետ միասին պետք է ստուգվի և ռազմական պրոպագանդայի ապարիզում տարվող այն աշխատանքը, վորը պետք է յերևան գա Համ.ԼԿՑԵՄ ամեն մի կազմակերպության ընդհանուր հաշվետվությունների մեջ։

Բյուրոյի անդամներից մեկը (գլխավորապես ով ավելի ռազմական պատրաստություն ունի) մտնում է Համ.ԼԿՑԵՄ բջիջի մեջ վորպես ռազմական կազմակերպիչ, վորը պարտադիր կերպով մտնում է խրճիթ-ընթերցարանների խորհրդի, պատանի պիոներների բյուրոյի, ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջի նախագահության և խրճիթ-ընթերցարանին կից ռազմական գիտելիքների խմբակի կազմի մեջ։

Կոմյերիտմիության բոլոր խմբակների, կուրսերի և դպրոցների ծրագրերի մեջ անպայման պետք է մտցնել ռազմա-

քաղաքական ուսուցման ելեմենտները, վորպեսզի կոմյերիտականներն, այդ դպրոցներն ու կուրսերն ավարտելուց հետո, կարողանան պատանեկության շրջանում մասսայական ռազմա-քաղաքական աշխատանքի կազմակերպողները լինել։

Ռազմական պրոպագանդայի աշխատանքի կոմյերիտական կազմակերպիչները մտնում են ֆիզկուլտուրայի խորհուրդներ-ի և բյուրոների կազմի մեջ։ Բջիջներում ռազմական պրոպագանդայի աշխատողներն իրենց շուրջն ստեղծում են կորիզ՝ կազմված կոմյերիտականներից, Կարմիր բանակի և տորպիդի շարքերից զորացրվածներից, ռազմական դպրոցներ ավարտածներից, յերկրային զորամասերի փոփոխիկներից, նախակոչյան պատրաստության քաղղեկներից, նույնպես և այն կոմյերիտականներից, վորոնք նախակոչյան պատրաստության կուրսը հաջողությամբ են անցել։

Այս ընկերները կարող են մասսայական ռազմական աշխատանքի լավագույն առաջնորդները լինել ազգաբնակության շրջանում. հարկավոր է միայն նրանց կանոնավոր կերպով ոգտագործել ռազմական աշխատանքի տարբեր ճյուղերում։

Ազգությունների շրջանում ռազմական պրոպագանդայի հարցերին առանձին տեղ պետք է տալ։

Զանազան ժողովուրդների շրջանում տարվող այդ աշխատանքը (վորոնք ճնշված են յեղել առաջ ցարական կառավարության կողմից) պահանջում է գործադրել այլ տեսակ ձևեր ու մեթոդներ, նկատի ունենալով նրանց առանձնակի կուլտուրական պայմանները։

Իրենց բախտը Խորհրդային Միության հետ կապած ազգությունները պետք է անմիջական մասնակցություն ունենան և՛ դասակարգային շահերի ընդհանուր պաշտպանության մեջ։ Իսկ կոմյերիտմիության կողմից ռազմական պրոպագանդայի աշխատանքի ծավալումը կարող է հիմք ծառայել ազգային զորամասերի հաջող կերպով կազմակերպելուն։

Կոմյերիտմիության տեղական կազմակերպությունների և զորական մասերի միջև կապը նույն ձևերով է հաստատվում, ինչ ձևերով Խորհրդային Միության բոլոր ոայոններում, միայն

պետք է այդ կապի կիրառման դեպքում հաշվի առնել տվյալ ազգության համար ռազմական գործի նորմուծությունը և դրան համապատասխան ավելի մանրամասն ծանոթացնել Կարմիր բանակի ծառայության պայմանների և հաստատուն հեղափոխական դիսցիպլինա պահպանելու անհրաժեշտության հետ։

Այնուհետև պետք է բացատրել, վոր ամեն մի ազգության յերիտասարդ բանվորի ու գյուղացու համար Բ.-Գ. Կ. Բ. ծառայությունը հանդիսանում է նրա հասարակական պարտքը և պատվավոր պարտականությունը։ Բացի դրանից, անհրաժեշտ է ընդգծել Կարմիր բանակի ինտերնացիոնալ նշանակության մասին, վորի շնորհիվ բոլոր ազգությունները հնարավորություն ունեն ազատորեն զարգացնել իրենց տնտեսությունն ու կուլտուրական առաջադիմությունը։

Բոլոր ազգությունների կոմյերիտականներին և անկուսակցական յերիտասարդությանը պետք և սեր ներշնչել դեպի Կարմիր բանակը, վորպես մեր Միության աշխատավորների ազատարարի։ Որա հետ միասին կոմյերիտմիությունը պայքար պիտի մղի ազգային սահմանափակումների դեմ, վորոնք միապետական իրավակարգի մնացորդներն են։

Ռազմական պրոպագանդայի այս հիմնական մոմենտներն անցնելիս հարկավոր է անպայման հաշվի առնել մեր ազգայնության բոլոր կենցաղային և կուլտուրական առանձնահատկությունները։

Այս աշխատանքի հաջողության համար եական և կարևոր պայման պետք է համարել մայրենի լեզվով գրականության հրատարակությունը, վորն ընդհանրացնում է ռազմական գործի առանձին հարցերը և լուսաբանում է Արևելքում տեղի ունեցող կռվի պատմությունը և բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի նշանակությունն այդ կռվում։

Այսպիսով՝ բոլոր ազգությունների շրջանում տարվող ամբողջ ռազմական պրոպագանդայի միջով կարմիր թելի պես պետք է անցկացնել այն հիմնական միտքը, վոր Խորհրդային Միության բոլոր աշխատավորները միատեսակ շահագրգռված են Կարմիր բանակի հզորության խնդրում և հա-

վասար չափով պետք է ակտիվ մասնակցություն ունենան յերկրի պաշտպանության մեջ։

Ռազմական պրոպագանդան շատ կարևոր է և՛ պիոներների շրջանում։ Պիոներ-կազմակերպությունները յերեխաների մեջ զարգացնում են շատ ռազմական բնույթ ունեցող սովորություններ, ինչպես, որինակ՝ սովորեցնում են նրանց իրենց գործողությունները յենթարկել կոլեկտիվի շահերին, ընկերականության և փոխադարձաբար իրար նեղ տեղից ազատելու զգացմունք են զարգացնում նրանց մեջ և այլն։

Պիոներների շրջանում ֆիզկուլտուրա անցնելու շնորհիվ մշակվում են նրանց մեջ մի շարք կիրարկելի ֆիզիկական ունակություններ, վորոնք անհրաժեշտ են յերիտասարդությանը՝ ապագայում մարտական պարագայի պայմաններում հաջող գործողությունների համար, մշակվում է ակտիվություն, հաստատակամություն, յեռանդ, հաստատ կամք և այլն։

Միաժամանակ պիոներների մեջ պետք է զարգացնել շահագրգռություն, սեր և ուշադրություն դեպի Կարմիր նավատորմը։ Սրան կարելի յե հասնել դեպի Կարմիր բանակը, նավատորմը, ռազմա-դպրոցական հաստատության վարչության դպրոցները և ռազմական թանգարանները եքսկուրսիաներ կազմակերպելու միջոցով, պիոներների, կարմիր-բանակայիններ, կարմիր-տորմիղայիններ և կուրսանտների միջև յերեկույթներ կազմակերպելով. նույնպես և պիոներական հասակին համեմատ հատուկ մատչելի գրականություն հրատարակելու միջոցով՝ Կարմիր բանակի, նավատորմի և քաղաքացիական պատերազմի պատմության վերաբերյալ։

Առանձնապես հանձնարարվում է սերտ կապ հաստատել պիոներների և Կարմիր բանակի զորամասերի միջև ճամբարի շրջանում, վորովհետև շատ հաճախ պիոներական և զինվորական ճամբարներն իրար մոտ են լինում։

Ցանկալի յե պիոներներին գրավել և՛ զորաշարժերին, վորտեղ նրանք կարող են ձեռք բերել ունակություններ՝ կապի ծառայություն կատարելու, հետախուզություն անելու, դիտելու և այլն։

Այս, ինարկե, հաջողություն կունենա միայն այն դեպքում, յերբ լուրջ մոտեցում կլինի դեպի յերիտասարդությունը, և յերբ գործողությունները կհամաձայնեցվեն կուսակցական և կոմյերիտմիութենական տեղական կազմակերպությունների հետ։

Պիոներ-ջոկատների առաջնորդներն իրենց ռազմական պրոպագանդայի աշխատանքն անց են կացնում կոմյերիտմիության ռազմական կազմակերպչի ղեկավարությամբ, կատարելով նրա բոլոր առաջադրությունները վորպես նրա ոգնականներ։

Միայն կոմյերիտմիության անդուլ ու ժրաջան աշխատանքի շնորհիվ ԽՍՀՄ պաշտպանունակությունը կարելի կըլինի դնել իր հարկավոր բարձրության վրա, և յերբ կոմյերիտմիությունը, բացի այս, մեր Միության մյուս հասարակական կազմակերպությունների հետ միասին, կընդունի ամենից ակտիվ մասնակցությունը ռազմանականացման աշխատանքի մեջ։

Կոմյերիտմիության միջոցով ռազմական գործը պետք է թափանցի մեր Միության բոլոր խուլ գյուղերը, առուներն ու ավանները և այդպիսով ամրացնի մեր յերկրի հզորությունը և ստեղծի այն բանակը, վորն ապագա պատերազմում պարտություն չի կրի։

2. ԽՆԴԻՐՆԵՐ ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄԻ ԳԾՈՎ

Կոմյերիտմիության ՊԱՋԸ-Ավիաքիմի գծով գործնական աշխատանքի ասպարիզում տարվող խնդիրները պետք է վորոշվեն ամենից առաջ այն լայն հասարակայնությամբ, վորը դրված է ՊԱՋԸ-Ավիաքիմի հիմքում և վերջնիս աշխատանքը բոլոր նրա ասպարեզներում ուղղված է, մի կողմից՝ մեր պաշտպանողական հզորության ուժեղացմանը և մյուս կողմից—ինչպես այդ ընկ. Կ. Ցե. Վորոշիլովը վորոշեց Ավիաքիմի և յերկրի Պաշտպանության Կենտրոնական Խորհրդի հունվարյան պլենումի միացյալ համագումարում՝ «ամեն կերպ մեր ինդուստրիային, և մանավանդ, մեր ավիացիոն-քիմիական արդյունաբերությանն աջակցելուն»։

Կոմյերիտմիությունը ՊԱԶԸ-Ավիաքիմն ընդունելով վորպես մի պրոլետարական հասարակայնության հզոր կազմակերպություն, պետք է ամեն ճիգ ու ջանք գործադրի, վորպեսզի իր գործնական և գործուն մասնակցությամբ կենդանացնի ստորին բջիջները և այդպիսով ապահովի այդ ընկերության համար լայն մասսայական աշխատանքի զարգացումը, վորը պետք է հիմնված լինի աշխատավոր յերիտասարդության և հենց լայն դեմոկրատիզմի կողմից հոժարակամության, շահագրգռության հիման վրա՝ մասսաների հասարակական գործունեության այդ ասպարիզում։

Կոմյերիտմիության ՊԱԶԸ-Ավիաքիմի գծովներկայում նրա առաջ դրված հիմնական ու գործնական խնդիրները հետևյալներն են. լավացնել աշխատանքի վորակը, շատացնել ՊԱԶԸ-Ավիաքիմի անդամների թիվը, պայքար մղել այդ ընկերության ծոցում յեղած բյուրոկրատիզմի ամեն տեսակ փորձերի դեմ, ամեն կերպ ամրացնել դիսցիպլինան նրա աշխատանքի ընթացքում և արթնացնել մասսաների ինքնագործունեությունն ու ակտիվությունը ռազմական և ավիացիոն-քիմիական անդրագիտությունը վերացնելու գործում։

Այդ աշխատանքի ձևերն իրենց բազմատեսակությամբ շատ հարուստ են, և այդ ձևերի ոգտագործումը լիակատար կերպով պետք է կախված լինի տեղական պայմաններից, առանց բացառության և այն «ուղղումների», վորոնք պետք է ներմուծվեն կոմյերիտմիության կազմակերպությունների ստեղծագործական ակտիվությամբ։ Կոմյերիտմիության այդ ստեղծագործական ակտիվությունը ՊԱԶԸ-Ավիաքիմի աշխատանքում պետք է յելակետ ունենա հետևյալ հիմնական քաղաքական նախադրյալները, վորոնք կարող են ապահովել այդ ուղղությամբ կատարվող մասսայական աշխատանքի վորոշ հետևանքները։

1. Մենք շարունակում ենք խաղաղության անկեղծ քաղաքականությունը, առանց մոռանալու, վոր պետք է պաշտպանել մեր հեղափոխական նվաճումները։

2. Ապագայի պատերազմը մեզ համար լինելու յե միայն դասակարգային և պաշտպանողական պատերազմ. այստեղից հետևում է նրա մասսայական բնույթ ունենալը և մասսայական պատրաստությունը. ընդվորում վոչ միայն կենդանի ուժերը, այլև եկոնոմիկայի և արդյունագործության ուժերն այնպես, ինչպես այդ պատերազմը՝ հարուստ կլինի կռվի տեխնիկական միջոցների կիրառումով։

3. Կարմիր բանակը, վորպես հեղափոխական-դասակարգային զինված ուժերի հիմնական վողնաշարը, անհրաժեշտ է աշխարհում առաջին պրոլետարական պետության պաշտպանության համար։ Այդ զինված ուժերի մեծությունը կախված է յերկու պայմանից. ա) մեր վարած խաղաղության քաղաքականությունից և բ) խաղաղ պայմաններում պետության պաշտպանունակությունը պահպանելու անհրաժեշտությունից։

4. Զինված միլիտության վտանգը մեր ներքին գործերին վոչ թե քանի գնում թուլանում է, այլ, ընդհակառակը, տարեցտարի քանի բնորոշվում է մեր տնտեսական ու քաղաքական աճումը և մեր թշնամիների ռազմական պատրաստության ուժեղացումը, այնքան ավելի ու ավելի հնարավոր, ավելի իրական է դառնում այդ վտանգը։

5. Ուրեմն, մեր սոցիալիստական խաղաղ շինարարության ամրացման համար աշխատելով, մենք չպետք է մոռանանք այդ զինված միլիտության սպառնալիքի մասին, հետևապես և մեր պաշտպանունակության ուժեղացման մասին։

6. ՊԱԶԸ-Ավիաքիմը հանդիսանում է բանվորա-գյուղացիական լայն խավերի մեջ յերկրի պաշտպանության գործի համար մղած մասսայական պաշտպանության և ավիացիոն-քիմիական արդյունագործության ուժեղացման ամենալուրջ հասարակական միջոցներից մեկը, վորոնք ապագա պատերազմի յերկու հիմքն են կազմում։

7. ՊԱԶԸ-Ավիաքիմի ամրացումը, այդ ԽՍՀՄ ամեն մի ազնիվ քաղաքացու ամենալուրջ խնդիրն ու պարտականությունն է։

Այս հիմնական դրությունները, վորոնց շնորհիվ մենք մինչև այսոր ել լուրջ ուշադրություն ենք կենտրոնացնում մեր յերկրի պաշտպանության հետ կապված հարցերի վրա, պետք է ծառայեն վորպես խթան աշխատավոր յերիտասարդության

ՊԱԶԸ-Ավիաքիմի գծով տարած աշխատանքի համար, վորի գործնական հաջողություններն ու նվաճումները նշանավոր չափով կբարձրացնեն մեր պաշտպանունակությունը։

Կոմյերիտմիությունը ՊԱԶԸ-Ավիաքիմի ստորին բջիջներում իր գործնական աշխատանքը պետք է այնպես դնի, վոր այդ աշխատանքով կարողանա ընդգրկել նրա բազմատեսակ ձևերը և կանոնավոր կերպով ոգտագործել այդ աշխատանքի մեջ իր բոլոր անդամներին, ինչպես այդ գծով աշխատանքի ծանրաբեռնելու իմաստով, այնպես էլ այդ ուժերը բաշխելու իմաստով, հատկապես այնպիսի աշխատանքի լծելով, դեպի վորը տվյալ անդամն ունի ակնհայտնի ձգտում։ Այս պայմանը, մանավանդ կոմյերիտմիության ակտիվը կանոնավոր բաշխելու տեսակետից, էական նշանակություն ունի՝ ցանկալի հետևանքներ ստանալու համար։

Այդ բաշխումը հավասար չափով պետք է տարածվի ՊԱԶԸ-Ավիաքիմի շարքային անդամների վրա, ինչպես կոմյերիտականների, այնպես էլ անկուսակցական յերիտասարդության վրա։ Կոմյերիտմիության կազմակերպություններն այս հարցին մեծ ուշադրություն պիտի նվիրեն և ճիշտ վորոշում տան հատկապես կազմակերպչական միջոցառումներով։ Յեթե մեկը հետաքրքրվում է հրաձգային գործով, մյուսը՝ ավիացիոն մոդելներով, յերրորդը՝ կռվի քիմիական միջոցներով և այլն, պետք է հաշվի առնել նրանց այդ ձգտումները, ուղղություն տալ նրանց, զարգացնել այդ հետաքրքրությունը, ընդունելով այդ վորպես սաղմ՝ վորոշ ստեղծագործական հնարավորությունների, վորոնք կան տվյալ ընկերոջ մեջ, և վորոնք ընդունակ են զարգանալ ու բարգավաճել դրա համար ստեղծված նպաստավոր պայմաններում։

Ամեն մեկին պետք է հնարավորություն տալ և ապահովել, վոր իրեն ուժերը լարի ու իր անհատական ընդունակությունները ցուցահանի ՊԱԶԸ-Ավիաքիմի բազմատեսակ աշխատանքներից այն աշխատանքի ասպարիզում, վորին տվյալ անդամը վորոշ ձգտում ունի։

Կազմակերպչական միջոցառումների ՊԱԶԸ-Ավիաքիմի գծով ամենորյա գործնական աշխատանքի ասպարիզում տեղերում

մինչև հիմա յել կան աշխատանքի ձեռք չկպած անկյունները, վորտեղ պիտի մասնակցեն կոմյերիտմիության կազմակերպությունները, իբրև նախամարտիկներ և առաջնորդներ ամեն տեսակ հասարակական ձեռնարկումների։ այդ մասնակցությունը լիակատար կերպով պետք է ապահովված լինի կոմյերիտմիության կազմակերպությունների համար։

Այսպես, տեղերում, վորտեղ ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջներ կամ ռազմական անկյուն չկան, կոմյերիտմիության կազմակերպությունն իր վրա յե վերցնում այդպիսիներն ստեղծելու նախաձեռնությունը, ձգտելով, վոր ռազմական անկյունները կատարելապես սարքավորվեն և համապատասխանեն իրենց նշանակությանը, այսինքն՝ հայթայթված լինեն բավական քանակությամբ տարրական դասագրքերով և տեսողական պիտույքներով, իսկ ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջները լինեն կենսունակ ու աշխատունակ ամուր ղեկավարող կորիզով։

Ռազմական անկյունը պետք է ունենա այն բոլոր նյութերը, վորոնք պիտի լուսաբանեն ՊԱԶԸ-Ավիաքիմի աշխատանքը, նրա բոլոր ասպարեզներում։

ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջների աշխատանքի համար զատված կոմյերիտականների ջանքերն առաջին հերթին հենց դրան պիտի ուղղված լինեն։

Հրաձգային գործի պարապմունքների համար պետք է ձեռք բերել հրաձգային կանոնագրքեր, տախտակ՝ հրացանի քանդած մասերով, պլակատներ և հրաձգության թեորիայի աղյուսակներ։ Հրաձգային գործի մասին լոզունգները կարող են պատրաստել ՊԱԶԸ-Ավիաքիմի անդամները, վորոնք ծառայում են բանակում, միայն պետք է հայտաբերել ու արթնացնել նրանց ակտիվությունը։

Ամեն մի ակումբին և խրճիթ-ընթերցարանին կից անհրաժեշտ է սարքավորել ամենահասարակ տիպի ձգարան (тир) և սպորտական ամրոց։

Յեթե տեղերում կան այնպիսի ընկերներ, վորոնք սպորտական գործի վերաբերյալ և տեղագրության պարապմունքները կարող են ղեկավարել, ոգտակար է մի արկղ սարքավո-

բել ավազով, այնպես վոր այդ արկղի ոգնությամբ կարելի չ տեսողական յեղանակով սովորեցնել ուսումնասիրվող առարկան, վոր կնպաստի առարկայի լավ յուրացմանը։

Պետք է ձեռք բերել սպորտական հարցերի վերաբերյալ աղյուսակներ և պլակատներ ֆիզկուլտուրայի և սպորտի ավելի գործածական տեսակներից, նաև համապատասխան լոզունգներ և գրականություն։ Ավիացիոն և քիմիական գիտելիքների ճյուղի վերաբերյալ պետք է բաժիններն ապահովել թռչող ապպարատների ու հակագազերի զանազան սիստեմների մոդելներով ու աղյուսակներով, նույնպես և մարտական և խաղաղ աշխատանքի պայմաններում այդ միջոցները կիրառելը բնութագրող պլակատներով։

Ռազմա-ծովային հարցերի վերաբերյալ հարկավոր է ձեռք բերել գրականություն, ուր պիտի արտացոլված լինի Կարմիր բանակի և նավատորմի կյանքն ու կենցաղը, այլև համապատասխան պլակատներ և աղյուսակներ։ Բացի դրանից, տեղերում, վորտեղ նավատորմն է կանգնած, վորտեղ հատուկ ռազմա-ծովային նախակոչյան պատրաստություն է տարվում, կարևոր է ունենալ և նավերի մոդելներ, վոր կարող են պատրաստել ՊԱՋՐ-Ավիաքիմի բջիջի անդամները։

Տեխնիկական զորքերի ծառայության և աշխատանքի հետ ծանոթանալու համար պետք է ճարել համապատասխան տեսողական պիտույքներ և գրականություն։

Շատ հաճախ ՊԱՋՐ-Ավիաքիմի բջիջներ ու ռազմական անկյուններ չեն կազմակերպվում միջոցների բացակայության պատճառով։ Կոմյերիտմիության կազմակերպությունները հատուկ լուրջ ուշադրություն պիտի դարձնեն այդ կողմի վրա և միջոցներ ձեռք առնեն բավարար միջոցներ հատկացնելու այն ընդհանուր գումարից, վորը ծախսվում է քաղաքական աշխատանքի վրա, նկատի ունենալով, վոր ռազմական անկյունը խրճիթ-ընթերցարանի և ակումբի մի բաղկացուցիչ մասն է կազմում։

Բացի դրանից, կոմյերիտմիության կազմակերպությունները միջոցներ են ձեռք առնում բոլոր գրադարանները — ինչպես մասնագիտական նշանակություն ունեցողները, նույնպես և ակումբներին ու խրճիթ-ընթերցարաններին կից յեղածները լրացնելու ռազմական գրականությամբ։ Յուրաքանչյուր ռազմական անկյունում անհրաժեշտ է ունենալ փոքրիկ ռազմական գրադարան հատուկ հանձնարարական ցուցակով։ Այս փոքրիկ գրադարանն արդեն հրատարակված է Պետական Ռազմական Հրատարակչության կողմից։

Բացի ակումբներում և խրճիթ-ընթերցարաններում տարվող մասսայական աշխատանքից, կոմյերիտմիության բջիջները անպայման պետք է կապ հաստատեն Կարմիր բանակի և նավատորմի հետ։

Յուրաքանչյուր կոմյերիտմիության կազմակերպություն գրավոր կապի միջոցով տեղեկություններ է հաղորդում Կարմիր բանակյան և նավատորմային զորամասին, վորին այդ կազմակերպությունն ամրացված է շեֆության կարգով — իր աշխատանքով ձեռք բերած նվաճումների մասին։

Արտադրական հավաքների ժամանակ շատ կարևոր է կապ հաստատել և նախակոչիկների վարժական կայանների հետ։

Կոմյերիտմիության կազմակերպությունների ու Կարմիր բանակի մասերի, նավատորմի, ռազմա-դպրոցական հաստատությունների և նախակոչիկների հետ միասին կազմակերպած յերեկույթները, հավերգները, ներկայացումները վերջինների հետ զոդվելու ամենալավ ձևերն են։

Այնտեղ, վորտեղ հնարավոր է, հարկավոր է կազմակերպել եքսկուրսիաներ դեպի Կարմիր բանակի մասերը, դեպի նավերը, ռազմա-դպրոցական հաստատությունները, ռազմական թանգարանները, արտադրական նախապատրաստության պունկտերը և այլն։

Ճամբարային հավաքների ժամանակ կոմյերիտմիության կազմակերպությունների և զորական մասերի միջև կապը պիտի անընդհատ պահպանվի, ինչպես հաղորդագրությունների միջոցով, նույնպես և կոմյերիտմիության պատգամավորներին ճամբար ուղարկելով, վորոնք վերադառնալով հաշիվ պիտի տան իրենց կազմակերպությանը կարմիր-բանակայինների ճամբարային կյանքի մասին։

Ռազմափորձերի ժամանակ կոմյերիտմիության կազմակերպությունները պետք է ռազմական խոշոր աշխատանք ծավալեն։ Այստեղ կոմյերիտմիության կազմակերպությունների պատգամավորները հնարավորություն ունեն պարզ կերպով ծանոթանալու զորական մասերի յերթային մարտական ծառայության և կյանքի բոլոր տեսակների հետ և դրա հետ միասին վերպես կապ ծառայել վերջինների և հասարակական, կուսակցական, կոմյերիտմիութենական, պրոֆեսիոնալ և խորհրդային տեղական կազմակերպությունների հետ։

ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջներն այս ուղղությամբ պետք է հայտաբերեն բացառիկ ակտիվություն՝ իրենց աշխատանքը մոտեցնելով զորական մասերի ուսուցման ու գործնական պարապմունքների առանձին մոմենտներին։

Առանձնապես կարևոր է ոգտագործել ռազմափորձերի մոմենտն այն տեղերում, ուր զորական չկա։ Այդ ռայոններում հանձնարարվում է ՊԱԶԸ-Ավիաքիմի գծով կազմակերպել հանդիպումներ և բարիյերթեր։

Ռազմափորձերից հետո այն կոմյերիտականները, վորոնք մասնակցել են ռազմափորձերին, պետք է հաշիվ տան իրենց կազմակերպություններին իրենց կատարած աշխատանքի մասին, և ապա, կարմիր բանակի տեղական քաղորգանների, Համ. ԼԿՅԵՄ կազմակերպության հետ համաձայնության գալով, իր անդամների շրջանում, այլև ՊԱԶԸ-Ավիաքիմի բջիջի միջոցով նույնպես անկուսակցական յերիտասարդության շրջանում, անցկացնեն ընդարձակ ռազմա-պրոպագանդիստական աշխատանք՝ ռազմափորձերի մասին ունեցած նյութերի հաստատ։

Այդ հիմնական մոմենտներով աշխատանքի ամբողջ բովանդակությունն ու բազմապիսի ձևերը ըստ եության չեն սպառվում. կոմյերիտմիության կազմակերպությունները, ծայրահեղ դեպքում, առաջին անգամ իրենց գործունեության մեջ պետք է ղեկավարվեն ՊԱԶԸ-Ավիաքիմի գծով։

Ավելորդ է ասել, վոր այդ ամբողջ աշխատանքը պետք է խիստ կերպով համաչափված լինի ինչպես կոմյերիտմիության խմբակների, նույնպես և ՊԱԶԸ-Ավիաքիմի այս կամ այն բջիջի

ընդհանուր ակտիվության հետ։ Վորպես կանոն, պետք է ընդունել՝ «ավելի լավ է քիչ լինի, բայց լավ լինի»։ այս կանոնը պիտի հիմնական ղեկավարը լինի աշխատանքի այդ ասպարիզում։

Մեր ապրած ժամանակի պայմանները այդ ընկերության բջիջների աշխատանքի մեջ պահանջում են վոչ թե թափթփվածություն ու այժմ արդեն վերացվող «բարձր» վերացականություն, այլ պարզ, խիստ շրջանակների մեջ հնարավոր ու կատարելի, գործնական ու կրկնապատիկ աշխատանք՝ ուժերի, միջոցների ու ժամանակի հաշվառումով, առանց ագիտացիայի, տեսողական համոզեցուցիչ հետևանքներ ստանալու համար։ Այդ հետևանքները կհանդիսանան վորպես գրավական ՊԱԶԸ-Ավիաքիմի աշխատանքի իսկական ընդարձակման, նրա աճման ինչպես վորակի, նույնպես և քանակի տեսակետից։ «Յեթե միլիոնավոր բանվորներն ու գյուղացիները,—ասում եր ընկ. Ռիկովը Ավիաքիմի հունվարյան համագումարի բացմանը,—կմասնակցեն մեր աշխատանքին, ակտիվ կերպով կաջակցեն յերկրի պաշտպանության և քիմիական ու ավիացիոն արդյունագործության գործին, յեթե միլիոնավոր ձեռքեր կոգնեն իրենց անմիջական աշխատանքով սոցիալիստական շինարարությանն ու յերկրի պաշտպանության գործին, այն ժամանակ մեզ համար սարսափելի չեն վոչ մի արգելք՝ տնտեսական շինարարության ասպարիզում և ինտերվենցիայի վոչ մի սպառնալիք»։

Այդ միլիոնավոր բանվորա-գյուղացիական ձեռքերը պետք է և կարելի յե ներգրավել ՊԱԶԸ-Ավիաքիմի աշխատանքի մեջ՝ վոչ միայն հարցերի լայն լուսաբանման միջոցով, վորոնք կապված են յերկրի պաշտպանունակության և ավիացիոն-քիմիական արդյունագործության ամրացման հետ, այլ գլխավորապես ազգու, գործնական աշխատանքի միջոցով՝ հասարակական ինքնագործունեության այդ ասպարիզում. մի ասպարեզ, վորի առաջ կանգնած են լուրջ խնդիրներ ներկայի համար և վորի համար բացվում են լայնարձակ, ըստ իրենց նշանակության և ստեղծագործական հնարավորությունների՝ հեռանկարներ։

Ապագայում մեզ փոխարինող կոմյերիտմիությանն այդ հարցում պատկանում է խոշոր և պատասխանատու դեր, որի իկատար ածելու համար նա կոչված է իրերի դրության կամքով և այն քաղաքական զսպվածությամբ ու հասարակական ակտիվությամբ, որ հայտաբերված է նրա կողմից մեր կուսակցության, մեր՝ աշխարհում առաջին բանվորա-գյուղացիական պետության, մեր աշխատանքային խորհրդային հասարակայնության բոլոր ձեռնարկումների մեջ. «Ցերկրի պաշտպանությունը, այդ ամբողջ յերկրի գործն է»,—ամենից առաջ վերաբերում է մեր բոլոր յերիտասարդությանը, որի առաջ կանգնած են և չեն կարող չկանգնել անխուսափելիորեն մասնակցելու հեռանկարները՝ ապագա վճռական դասակարգային ճակատամարտերում, համաշխարհային սոցիալիստական հեղափոխության գործի համար։

Զորս միլիոն կոմյերիտմիության յերիտասարդ ձեռքերը հանդիսանում են ամենախոշոր պահեստը մեր քաղաքական և հասարակական ուժերի, որոնց կիրառումը պաշտպանության և ավիացիոն-քիմիական արդյունագործության համար ամուր բազա ստեղծելու և ուժեղացնելու գործում՝ կապահովի մեր սոցիալիստական շինարարության ամրացման հետագա աշխատանքի հնարավորությունը և մեզ կազատի զինված միջամտության ամեն տեսակ փորձ անելուց. բացի դրանից, կազատի մեր անհաշտ թշնամիների մեր սահմանի թույլ տեղերի վրա անդադար հարձակվելու փորձեր անելուց, մի հանգամանք, որ մինչև այժմ խանգարել է մեզ լիակատար կերպով կենտրոնացնելու մեր բոլոր ճիգերը՝ ստեղծելու առաջին որինակելի սոցիալիստական պետությունը, որպես հզոր սաղմը՝ միասնական համաշխարհային սոցիալիստական հանրապետության։

ՀԱՎԵԼՎԱԾ

ՀԱՄ ԼԿՅԵՄ ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

(ԸՆԿ. ԿՈՒՐՆԻԿՈՎԻ ՀԱՄԼԿՅԵՄ ԿԿ-Ի IV ՊԼԵՆՈՒՄՈՒՄ ԿԱՐԴԱՑԱԾ ԶԵԿՈՒՅՑԱՆ ԱՌԹԻՎ ՀԱՆԱԾ ԲԱՆԱՁԵՎԸ)

Մեր ապրած սոցիալիստական շինարարության խաղաղ շրջանը վոչ մի դեպքում չպետք է մեզ դրդի թուլացնելու մեր ուշադրությունը Խորհրդային Միության մարտական հզորության և պաշտպանության հարցերի վրա։ Ընդհակառակը, հետագա շինարարական աշխատանքին անհրաժեշտորեն պետք ուղեկցի ԽՍՀՄ պաշտպանունակության սիստեմատիկ ամրացումը, վորպեսզի պատրաստ լինենք ամեն րոպե յետ մղելու համաշխարհային բուրժուազիայի կողմից Խորհրդային Միության վրա զինված հարձակում գործելու փորձերը։

Այս հանգամանքը պահանջում է, որ բոլոր պրոլետարական հասարակայնությունը շարունակ ուշադրություն նվիրի յերկրի պաշտպանության և Խորհրդային Միության աշխատավորների ռազմա-քաղաքական նախապատրաստության հարցերին։ Դրա համար ՀԱՄԼԿՅԵՄ,—վորպես բանվորական և գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպություն,—նրա ամենակարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում ռազմական գիտելիքներ տարածել աշխատավոր յերիտասարդության լայն մասսաների շրջանում, դաստիարակել քաղաքականապես պատրաստված և ռազմական տեսակետից գրագետ կադրերին Կարմիր բանակի և նավատորմի համար։

ՀԱՄԼԿՑԵՄ ռազմական աշխատանքի աշխուժացման ուղիներն ու միջոցները

1. Միությունը VII համագումարից սկսած անցյալ ժամանակաշրջանում մի շարք նվաճումներ է արել ռազմական գիտելիքները տարածելու ասպարիզում։ Սակայն ռազմական պրոպագանդան, այնուամենայնիվ, թույլ է ընթացել և դեռևս չի գրավել ՀԱՄԼԿՑԵՄ անդամների և բանվորա-գյուղացիական յերիտասարդության լայն խավերը։ Ցերբեմն միության միքանի կազմակերպությունների կողմից նկատում ենք թերագնահատում այդ աշխատանքի խոշորագույն նշանակության մասին։

Աշխատանքը գլխավորապես ընդհանուր պրոպագանդայի բնույթ է կրում, վորն ուղղված է ԽՍՀՄ պաշտպանունակության ամրապնդման անհրաժեշտության վրա, ՀԱՄԼԿՑԵՄ կազմակերպությունների ուշադրությունը դեպի նա գրավելու վրա, կարմիր բանակի ու նավատորմի հետ կապ պահպանելու անհրաժեշտության վրա և այլն, և դեռևս անհրաժեշտ չափով գործնական, առորյա աշխատանքի բնույթը չի կրում ռազմական գիտելիքների գործնական ելեմենտների տարածման նկատմամբ յերիտասարդության լայն մասսաների շրջանում (հրաձգային սպորտ, ավիա-քիմ-գիտելիքներ և այլն)։

Հրաձգային սպորտի, ՊԱՋԸ-Ավիաքիմի, ակումբներին, խրճիթ-ընթերցարաններին և պատանեկական սեկցիաներին կից տեղերում կազմակերպված մի շարք խմբակներում նշանավոր չափով աշխատանքը թույլ է տարվում։

2. Միության մեջ ռազմական աշխատանքի ուժեղացումը և յերիտասարդության ռազմականացման գործում աշխատանքի մասսայական ձևերի կիրառումը, վորը առաջ է գալիս յերկրի պաշտպանունակությունը ամրացնելու անհրաժեշտությունից, պիտի սերտ կերպով կապված լինի աշխատանքի ճնցած ճյուղերի հետ, վորն անկասկած կնպաստի ամբողջ միութենական աշխատանքի աշխուժացմանը։

Դրա համար ՀԱՄԼԿՑԵՄ տեղական կազմակերպությունները ռազմական աշխատանքի ժամանակ իրենց ուշադրության կենտրոնը պիտի դարձնեն աշխուժացման խնդիրը և ռազմական պրոպագանդայի մասսայական գործնական աշխատանքի ծավալումը, ռազմական գիտելիքների տարածումը՝ ինչպես ՀԱՄԼԿՑԵՄ անդամների շրջանում, նույնպես և անկուսակցական յերիտասարդության շրջանում։

3. Ռազմական աշխատանքի աշխուժացման և խորացման հիմնական ձևերից մեկն ել ֆիզկուլտուրայի խմբակներն են։ Անհրաժեշտ է, վոր յերբ ֆիզկուլտուրայի խորհուրդները խմբակների համար ծրագրեր կկազմեն, նրանց մեջ մտցնեն նախապատրաստական և ռազմա-կիրարկելի վարժությունների ելեմենտներ, վորոնք մտնում են Բ.-Գ.Կ.Բ. մարտիկի ռազմական պատրաստության ընդհանուր սիստեմի մեջ։

4. Մասսայական ռազմական աշխատանքը պետք է կառուցված լինի մասնակիցների լայն շահագրգռության սկզբունքի վրա, ավելի աշխուժ, գրավիչ և աշխատանքի հետաքրքիր ձևերի կիրառման վրա։ Անհրաժեշտ է առանձնապես ուշադրություն դարձնել՝

ա. հրաձգային սպորտի խմբակների լայն տարածման վրա, նրանց մեջ գրավելով բանվոր և գյուղացի յերիտասարդության մասսաներին։ Նրանց աշխատանքի հիմքը պետք է կազմի գործնական հրաձգությունը, զենքի ուսումնասիրությունը, նրանց հետ վարվելու ունակություններ ձեռքբերելը, մրցակցություն հրաձգության մեջ (անհատական և կոլեկտիվ)՝ զանազան պայմաններում (հեռակայություն, նշավակ, հակառակորդին յետ շպրտելը, զենքի քանդելու և սարքելու արագություն, և այլն)։ Հարկավոր է ոգտագործել վորսորդական կազմակերպությունները ինչպես ռազմական հրաձգային սպորտի զարգացման գործում հենց իրենց վորսորդների շրջանում, այնպես ել ոգտագործել նրանց կազմակերպությունները յերիտասարդության մասսաների մեջ հրաձգային սպորտը զարգացնելու համար.

բ. յերիտասարդության բազմատեսակ ռազմա-դաշտային խաղերի կազմակերպության վրա, վորպես դեկավարներ այդ կազմակերպության մեջ քաշելով ռազմական մասնագետներին։ Սկզբում անհրաժեշտ է անցկացնել ավելի հետաքրքիր խա-

դեր, որոնք քիչ միջոցներ, յեռանդ ու ժամանակ են պահանջում (քաղաքացիական պատերազմից միջադեպերի բեժադրություն, մարտի բեժադրություն, հետախուզություններ, հակառակորդից թաղնվելը և այլն, զենք և ուրիշ սարք կիրառելով).

գ. կոմյերիտականներին և անկուսակցական յերիտասարդությանը ՊԱՋԸ-Ավիաքիմի կազմակերպության մեջ քաշել, ինչպես յերիտասարդության հավաքագրման գծով, որպես ընկերության անդամների, այնպես և, նամանավանդ, լայն մասսաներին գործնական աշխատանքին կամաց-կամաց ընտելացնելու միջոցով,—մոտորակառուցվածքի, սավառնական գործի, թռչելու ապպարատների, տնտեսական շինարարության մեջ ավիացիայի և քիմիայի նշանակության պրոպագանդայի խմբակներ կազմակերպելու միջոցով (դաշտերի քիմիական պարարտացում, կռիվ մորեխի և այլ վնասատուների դեմ գյուղատնտեսության մեջ և այլն).

դ. հեծած ձիավարության տարածման վրա՝ կոմյերիտականների և յերիտասարդության շրջանում՝ ռազմական վարչության ոգնությամբ հեծած ձիավարության խմբակներ կազմակերպելու միջոցով, մասնավորապես հաշվի առնելով և Կարմիր Ստադիոնի հեծած ձիավարության դպրոցի փորձը.

ե. կոմյերիտմիության և անկուսակցական յերիտասարդության մասնակցության կազմակերպության վրա՝ Բ.-Գ.Կ.Բ. ամենամյա անցկացվող ռազմափորձերին և զորամասերի ճամբար դուրս գալուն։ Նման մասնակցությունը, Կարմիր բանակին քաղաքացիական բնակչությանը մոտեցնելու հետ միասին կոգնի յերիտասարդության մարտական պատրաստության գործին և ազգաբնակության իր դերի պարզաբանման, որպես թիկունքի՝ պատերազմի ժամանակ։ ՀամԼԿՅԵՄ ԿԿ պլենումը հաշվի առնելով այդ աշխատանքի հսկայական կարևորությունը, հանձնարարում է տեղական կազմակերպություններին, պայմանավորվելով համապատասխան վարչությունների հետ, կազմակերպել յերիտասարդության մասնակցությունը Բ.-Գ.Կ.Բ. ռազմափորձերին։

զ. «Կարմիր Աշխի Ռուսաստանի Ընկերության» և «Կարմիր Կիսալուսնի» ռազմա-սանիտարական աշխատողների կադրերի պատրաստության գործում ունեցած մեծ դերի վրա։ Միության խնդիրն է ամեն կերպ նպաստել ԿՍՌԸ-ը կազմակերպելու դրուժինաներ ձեռնարկություններին, խրճիթ-ընթերցարաններին կից և այլն, նրանց մեջ քաշելով ՀամԼԿՅԵՄ անդամներին, մանավանդ աղջիկներին.

է. ռազմական գիտելիքների պրոպագանդայի վրա, որը պիտի արտացոլվի ամբողջ ակմբային աշխատանքում՝ դասախոսություններ և զեկուցումներ կազմակերպելու միջոցով, կապիտալիստական յերկրների սպառազինական վիճակի մասին, բուրժուազիայի ազգաբնակության ռազմականացման աշխատանքի, ռազմական տեխնիկայի նորույթների մասին և այլն։ Առանձնապես ուշադրություն պետք է կենտրոնացնել ակմբային աշխատանքում Վլադիմիր Իլյիչ Լենինի պատերազմի մասին ուսմունքի ուսումնասիրության վրա, նույնպես և քաղաքացիական պատերազմի պատմության ուսումնասիրության վրա, ԽՍՀՄ պաշտպանության կազմակերպության և Բ.-Գ.Կ.Բ. շինարարության հարցերի հետ ծանոթացնելու վրա։

Կինոն, ակմբային աշխատանքները, Բ.-Գ.Կ.Բ.-ի զորամասերն այցելելը, եքսկուրսիաները դեպի թանգարանները և այլն, այս բոլորը պետք է ոգտագործվեն, որպես տեղական մի ձև ռազմական գիտելիքների պրոպագանդայի համար.

ը. տեղական և կենտրոնական մամուլի առավելագույն ոգտագործման վրա (թերթեր, ամսագրեր), բաց անելով նրանց մեջ «ռազմական բաժիններ» ռազմական աշխատանքի հարցերը կանոնավոր կերպով լուսաբանելու համար։

Ե. Մասսայական ռազմական աշխատանքի բովանդակությունը խորացնելու հետ միասին, միությունը ուշադրություն պետք է դարձնի այդ աշխատանքն անցկացնելու արտաքին ձևերի վրա, մասնավորապես տոնակատարությունների ու դեմոնստրացիաների հաջող կազմակերպելու վրա. սյուներ կազմել, միատեսակ հագուստ ունենալու հնարավորություն, մասսայական զբոսանքներ և այլն, այս աշխատանքը պետք է անցկացնել մասսաների ազատ ցանկությամբ։

6. Կոմյերիտմիության մեջ ռազմական աշխատանքի հաջողությունը խոշոր չափով կախված է ակտիվ ստեղծելուց, վորը պիտի ղեկավարի տվյալ աշխատանքը։ Ակտիվի պատրաստության հիմնական ձևն են հանդիսանում ռազմական գիտելիքների խմբակները և ՊԱԶԸ-Ավիաքիմի կազմակերպած ղեկավարների կուրսերը։ Այդ պատճառով ՀամԼԿՅԵՄ տեղական կազմակերպություններն ամեն կերպ պիտի նպաստեն այդ կուրսերն ու խմբակները լրացնելու ՀամԼԿՅԵՄ անդամներով։ Առանձնապես կարևոր է ղեկավար աշխատանքում ոգտագործել հրամատարական-քաղաքական կազմի կադրերին, ինչպես պահեստի կազմում, նույնպես և կադրային կազմում լեղածներին, այլև փոփոխիկներին և նախակոչիկներին։

7. Ռազմական պրոպագանդայի և բանվորա-գյուղացիական յերիտասարդության մասսաների մեջ մարտական պատրաստության զարգացման տմբողջ աշխատանքը պետք է տարվի ՊԱԶԸ-Ավիաքիմի անպայման մասնակցությամբ և լիակատար կոնտակտով։

8. Առաջարկել ՀամԼԿՅԵՄ բոլոր տեղական կազմակերպություններին, բարձրագույն դպրոցների յերիտասարդության շրջանում ռազմական-պրոպագանդիստական աշխատանքն ուժեղացնելու հետ միասին, հենց այժմվանից զբաղվել, ռազմական վարչության հետ միասին, Բ. Դ. Հ. սովորող յերիտասարդության ճամբարային հավաքի ուսուցման նախապատրաստական աշխատանքի համար կոնկրետ պլան մշակելով. ընդ վորում պետք է առաջնակարգ տեղ տալ կարմիր-բանակայինների կյանքի ու կենցաղի, նրանց ուսուցման, կարգապահության բացատրությանը և այլն, վորպեսզի Բ. Դ. Հ.-ի յերիտասարդությունը ճամբարային հավաքի ընթացքում կողմացած չգա իրեն։ Հարկավոր է ոգտագործել բարձրագույն դպրոցների յերիտասարդությունը կարմիր-բանակայինների շրջանում կուլտուրական և քաղաքական-դաստիարակչական աշխատանքն ուժեղացնելու համար։

ՀամԼԿՅԵՄ մասնակցությունը յերկրային զորամասեր կազմակերպելու, նախակոչյաց պատրաստության զորակոչերի աշխատանքի մեջ

9. Վերջին ժամանակներս կոմյերիտմիության կազմակերպությունների մասնակցությունը մի քիչ աճել է յերկրային զորամասերի կազմակերպության և նախակոչիկների հավաքների աշխատանքում, կարգավորվել ՀամԼԿՅԵՄ կոմիտեների կապը յերկրային վարչության քաղորգանների հետ, լավացել է կապը ՀամԿԿ (բ) աշակցող կոմյերիտ խմբակների հետ, այլև բավական ամրացել է կոմյերիտական-փոփոխիկների և նախակոչիկների հավաքներին պատրաստելու միջ-հավաքային աշխատանքը։

Ուշադրությունն այս աշխատանքի վրա հետագայում վոչ մի դեպքում չպիտի թուլանա։ Այդ պատճառով ՀամԼԿՅԵՄ ԿԿ պլենումը առաջարկում է միության բոլոր կազմակերպություններին ստուգել, թե առաջուց տրված այդ հարցի վերաբերյալ դիրեկտիվներն ինչ չափով են կատարված, առանձնապես ուշադրությունը լարելով նախակոչիկների ավելի խնամքով պատրաստության վրա, նրանց՝ բանակում ունենալիք ապագա աշխատանքի վրա, ծանոթացնելով նրանց ԲԳԿԲ կենցաղի, կարգապահության և ծառայության պայմանների հետ։ Միության հիմնական և առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է լինի նախակոչիկների անգրագիտության վերացումը

10. Վերջին զորակոչի հետևանքները ցույց տվին, վոր նախակոչիկների շրջանում աշխատանքը բավական կենդանացել է։ Մի շարք կազմակերպություններ նախակոչիկների կոնֆերենցիաներ են հրավիրել, վորտեղ բացատրել են զորակոչի խնդիրների, զորակոչվածներին և կարմիր-բանակայինների ընտանիքներին տրված արտոնությունների մասին. չեն նկատվել մասսայական հարբեցողություններ, սրիկայության, առաջվա նվոզբանցիության ծնացորդների և այլն դեպքեր։ Սակայն միքանի կազմակերպություններ դեռևս վոչ բավարար ակտիվությամբ են մասնակցել տվյալ աշխատանքին, և դրա համար տեղ-տեղ նախակոչիկների շրջանում առաջ են յեկել հիվանդագին յերևույթներ։ Այս հանգամանքը տեղական կազմակերպություններին պարտավորեցնում է ուշադրություն դարձնել՝

ա. զորակոչն անցկացնելու վրա. յերկարատև կամպանիա մղել մինչև զորակոչի ժամկետը՝ ակումբներում յերեկույթներ և զեկուցումներ կազմակերպելու միջոցով, վորտեղ կլուսաբան-

վեն արտոնությունների, կենցաղի, կարգապահության հարցերը, Կարմիր բանակի և նավատորմի ծառայության պայմանները.

բ. նախակոչիկների շրջանում հարբեցողության և այլն դեպքերի վճռականորեն արժատախիլ անելու վրա, միության բջիջների և կոմիտեների կողմից բարիյերթեր կազմակերպելու միջոցով.

գ. անպայման բոլոր նախակոչիկների հետ զրույցներ ունենալու վրա՝ ՀամԼԿՅԵՄ ԿԿ-ի Քաղվարչության սահմանած ծրագրի համաձայն, որպես քաղաքական գիտելիքների նվազագույնը նրանց համար։

Աշխատանքը Կարմիր բանակում յեվ նավատորմում

11. ԿԿ պլենումը պնդում է 1927 թ. հունվարի 5-ի ՀամԼԿՅԵՄ ԿԿ բյուրոյի բանաձևի վրա, որը հաստատված է ռազմական շրջանների քաղվարչության պետերի խորհրդակցության ժամանակ հունվարի 17-ին ս/թ., Կարմիր բանակի և նավատորմի աշխատանքի մասին, և առաջարկում է ՀամԼԿՅԵՄ բոլոր տեղական կազմակերպություններին հետագա աշխատանքում ղեկավարվել տվյալ բանաձևով, ամեն կերպ ոգնելով բանակի քաղորգաններին Բ.-Դ. Կ. Բ. կոմյերիտականների շրջանում աշխատանքը վարելու գործում։

12 Պլենումը, հիմնվելով ՀամԼԿՅԵՄ քաղաքացիական բջիջների և Կարմիր բանակի ու նավատորմի ՀամԿԿ(բ) աշակցող կոմյերիտական խմբակների հետ ունեցած կապի վերաբերյալ աշխատանքի փորձի վրա, առաջարկում է ԿԿ բյուրոյին մշակել միջոցառումներ՝ ոգտագործելու այդ կապը ռազմական պրոպագանդայի աշխատանքի լավացման և զարգացման համար՝ ՀամԼԿՅԵՄ քաղաքացիական կազմակերպություններում։

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԱՅԱԿՈՎՍԿԻ
Անվան
Պետական Գրադարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

Ա. ԲՈՒԲՆՈՎ.—Առաջաբան 5
ՖՐՈՒՆԶԵ Մ. Վ.—Լենինը և Կարմիր բանակը 7
ԿԼՈՉԿՈ Ի.—Ապագայի պատերազմը 24
ՍՈՒՄՍԿԻ Ն.—Կոմյերիտմիությունն ու Կարմիր բանակը . . 42
ՄՈՒԿԼԵՎԻՉ Ռ.—Կոմյերիտմությունն ու Կարմիր նավատորմը . 66
ԿԱՄԵՆԵՎ Ս.—Յերիտասարդությունը և հրաձգային սպորտը . 84
ՊՈՒՏՆԱ Վ.—Կոմյերիտմիությունը և ռազմական դպրոցը . . 89
ՖՐՈՒՄԻՆ Ս.—Կոմյերիտմիությունը, յերկրային զորամասերի շինարարությունը և նախակոչյան պատրաստությունը. 98
ԿԱՅԼՊՈՒՍ Բ.—Յերիտասարդության ֆիզիկական կուլտուրան և ռազմական պատրաստությունը 115
ԱՐՏԵՄԵՆԿՈ Ն. ՅԵՎ ՖՐՈՒՄԻՆ Ս.—Կոմյերիտմիությունը, ռազմական պրոպագանդան և ՊԱԶԸ-Ավիաքիմը . 135
ՀԱՎԵԼՎԱԾ.—ՀամԼԿՅԵՄ մասսայական ռազմական աշխատանքի մասին 155

«Ազգային գրադարան»
NL0182874